

ՄԱՍ 1.
ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ
ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
2008-2011թթ.

Գլուխ 1. Ժողովրդագրություն և միգրացիա

90-ականներին Հայաստանի ժողովրդագրական իրավիճակում արձանագրված բացասական զարգացումները՝ պայմանավորված ծնելիության մակարդակի անկման, մահացության մակարդակի աճի, ինչպես նաև բնակչության արտագաղթի հետ, հանգեցրեցին ոչ միայն Հայաստանի բնակչության թվաքանակի կրճատման, այլև բնակչության տարիքային կառուցվածքի զգալի փոփոխության: Ժողովրդագրական իրավիճակում որոշակի դրական տեղաշարժեր արձանագրվեցին 2004թ.-ից սկսած, այդ թվում՝ ծնելիության մակարդակի որոշակի աճ, 2004-2007թթ միգրացիայի տեմպերի զգալի նվազում, ռեմիգրացիայի միտումներ (միգրանտների վերադարձ արտերկրից): Ընդ որում, եթե 2004-2006թթ. ծնելիության մակարդակը գրեթե անփոփոխ էր, ապա 2007- 2011 թվականներին ծնելիության ընդհանուր գործակիցն աճեց՝ 1.4 պրոմիլային կետով, սակայն 2011թ.-ին արձանագրվեց ցուցանիշի նվազում, նախորդ տարվա նկատմամբ՝ 0.5 պրոմիլային կետով:

1.1. Բնակչության թվաքանակի միտումները

Բնակչության թվաքանակի ընթացիկ հաշվառումն իրականացվում է ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշով¹ (հաշվարկի հիմքը՝ ՀՀ 2001թ.-ի մարդահամարի արդյունքները), որն արդիականացվում է եռամսյակային պարբերականությամբ: 2012թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը կազմել է 3274.3 հազ. մարդ և 2011թ. տարեկազմի համեմատ այն աճել է 11.7 հազ. մարդով (տես՝ աղյուսակ 1.1), որը ձևավորվել է հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված բնակչության բնական հավելաճի (գրանցված ծնունդների և մահերի տարբերության) և պաշտոնական գրանցման ենթարկվող միգրացիայի մնացորդի (հաշվառված և հաշվառումից դուրս գրվածների տարբերության) ցուցանիշների ազդեցությամբ:

ՀՀ մշտական բնակչության կազմում քաղաքային և գյուղական բաշխվածությունը պահպանվել է զգալիորեն կայուն՝ 2005-2008թթ-ին միջին ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 64.1% և 35.9%: 2009-2012թ. տարեկազմին քաղաքային բնակչության մասնաբաժինը՝ 64 % է, իսկ գյուղական բնակչությանը՝ 36 %²:

Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքներով (SSԿԱՀ), տարեկան կտրվածքով գնահատված ՀՀ առկա բնակչության թվաքանակի ցուցանիշը 2011թ.-ին կազմել է՝ 2927.6 հազ. (2008-2011թթ. համար տես գլուխ 3, ներդիր 3.4): Ընդ որում, ՀՀ մշտական բնակչության թվաքանակի տվյալները տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքներով համապատասխանում են ընթացիկ հաշվառմամբ ստացվածի հետ: 2011թ ՀՀ SSԿԱՀ³

¹ Հայաստանի առաջին ազգային մարդահամարի տվյալներով, (2001թ. հոկտեմբերի 10-19-ը) Հայաստանի մշտական բնակչության թվաքանակը (de jure բնակչություն) կազմել է՝ 3213.0 հազ.մարդ, իսկ առկա բնակչության թվաքանակը (de facto բնակչություն)՝ 3002.6 հազ.մարդ:

² 1990-2004թթ. ժամանակահատվածում գյուղական բնակչության թվաքանակն ավելացել էր 52.4 հազար մարդով, իսկ տեսակարար կշիռն աճել էր՝ 31.2%-ից հասնելով 35.8%-ի, որը հետևանք էր 90-ականներին դեպի գյուղ քաղաքաբնակների ներհոսքի՝ քաղաքներում արդյունաբերական ձեռնարկությունների անգործությամբ և հողի համատարած սեփականաշնորհմանն անմաս չմնալու մտավախությամբ պայմանավորված դեպի գյուղ ներքին միգրացիայի միտումներով, ինչպես նաև քաղաքային բնակչության համեմատ գյուղական բնակչության ծնելիության համեմատաբար ավելի բարձր մակարդակով:

³ Հետազոտության տվյալները տարածվել են բնակչության գլխավոր համակցության վրա:

համաձայն մշտական բնակչության կազմում քաղաքային բնակչության մասնաբաժինը կազմել է 63.8%, իսկ գյուղականինը՝ 36.2%, 2010թ., համապատասխանաբար՝ 63.3 %, 36.7% և 2009թ.՝ 64. 9% և 35. 1% համեմատ:

2012թ. տարեկգրին Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության՝ 48.6 %-ը կազմել է արական և 51.4%-ը՝ իգական սեռի բնակչությունը: Բնակչության միջին տարիքը, 2012թ.-ի տարեկգրի դրությամբ, կազմել է 35.3 տարի, արական սեռի համար՝ 33.5, իսկ իգականի համար՝ 36.9 տարին:

Աղյուսակ 1.1: Հայաստան. Հանրապետության մշտական բնակչությունը, 1990-2012թթ. (տարեկգրին)

Տարիներ	Ամբողջ բնակչությունը (հազ. մարդ)	Ամբողջ բնակչության նկատմամբ տոկոսներով	
		քաղաքային	գյուղական
1990	3514.9	68.8	31.2
1993	3463.7	68.1	31.9
1996	3248.8	66.2	33.8
1999	3232.1	65.3	34.7
2001*	3213.0	64.3	35.7
2002	3212.9	64.3	35.7
2003	3210.3	64.2	35.8
2004	3212.2	64.2	35.8
2005	3215.8	64.1	35.9
2006	3219.2	64.1	35.9
2007	3222.9	64.1	35.9
2008	3230.1	64.1	35.9
2009	3238.0	64.0	36.0
2010	3249.5	64.0	36.0
2011	3262.6	64.0	36.0
2012	3274.3	64.0	36.0


Աղբյուրը. ՀՀ ՄՎԾ, բնակչության վիճակագրություն
Նշում. *) ՀՀ 2001թ. մարդահամար:

Բնակչության բնական շարժը: Անցումային շրջանի անկայուն տնտեսական, սոցիալական և քաղաքական իրավիճակը 1990-ականներին իր ազդեցությունն է ունեցել նաև բնակչության վերարտադրողական (ռեպրոդուկտիվ) վարքագծի վրա: Այսպես, ծնելիության ընդհանուր գործակիցը 2011թ., 1000 բնակչի հաշվով, կազմել է 13.3 պրոմիլ, որը թեև նախորդ տարվա համեմատ նվազել է 0.5 պրոմիլային կետով, սակայն 2004-2006թթ.(11.7%) համեմատ, ցուցանիշի աճը կազմել է՝ 1.6 պրոմիլային կետ:

Պտղաբերության (ծնելիության գումարային) գործակիցը՝ ծնունակ տարիքի (15-49 տարեկան) 1000 կնոջ հաշվով, 2011թ. կազմել է 1499 երեխա, նախորդ տարվա 1556 համեմատ: Այն զգալիորեն ցածր է բնակչության պարզ վերարտադրությունն ապահովելու համար անհրաժեշտ՝ 2150 երեխայից: Բնակչության վերարտադրության **Բրուտտո** գործակիցը (ծնունակ տարիքում միջին հաշվով քանի աղջիկ երեխա կծնի կինը, ծնելիության տվյալ տարվա մակարդակի պահպանման դեպքում) 2011թ. կազմել է 0.700, 2010թ.՝ 0.727, իսկ բնակչության վերարտադրության **Նետտո** գործակիցը (միջին հաշվով քանի աղջիկ երեխա կծնի մեկ կինն իր ողջ կյանքի ընթացքում, որոնք կհասնեն մոր տարիքին՝ իրենց ծնվելուց, յուրաքանչյուր տարիքում ծնելիության և մահացության տվյալ ժամանակաշրջանի մակարդակների պահպանման դեպքում) 2011թ. կազմել է՝ 0.673 միավոր, 2010թ.՝ 0.698 համեմատ:

Հարկ է նշել, որ 2011թ.-ին ծնելիության մակարդակի նվազմամբ պայմանավորված, նախորդ տարվա նկատմամբ, ծնելիության տարիքային գործակիցները նվազել են գրեթե բոլոր տարիքային խմբերում, բացառությամբ՝ 35-39 և 40-44 տարիքային խմբերը, որոնցում արձանագրվել է, համապատասխանաբար՝ 1.2 և 0.2 պրոմիլային կետերով աճ: Ընդ որում, 2011թ. արձանագրված կենդանի ծնունդների 74.2 %-ը բաժին է ընկել 20-29 տարիքային խմբին:

Գծապատկեր 1.1: Հայաստան. Ծնելիության տարիքային գործակիցները, %



Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ

90-ական թվականներին արձանագրվել է նաև երեխայի ծննդյան ժամանակ մոր միջին տարիքի որոշակի աճ: Այսպես, 2011թ. մոր միջին տարիքը երեխայի ծննդյան ժամանակ կազմել է 25.3 տարի, իսկ առաջին երեխայի ծննդյան ժամանակ՝ 23.5 տարի, 2010թ. համապատասխանաբար՝ 25.1 և 23.3 տարի:

Ըստ ծննդի հաջորդականության՝ երրորդ և բարձր կարգի ծնունդները 2011թ. կազմել են հանրապետության կենդանի ծնվածների ընդհանուր թվաքանակի 15.3 % և նախորդ տարվա համեմատ ցուցանիշը նվազել է 0.3 %-ային կետով (1990թ.-ին այն կազմել էր՝ 30.3%) (աղյուսակ 1.2):

2011թ.-ին գրանցված կենդանի ծնվածների շուրջ 34%-ը չգրանցված ամուսնություններից են (այդ թվում՝ արտասամուսնական), 1990թ.-ի՝ 9.3%-ի համեմատ:

Աղյուսակ 1.2: Հայաստան. Ծնվածների բաշխումն ըստ ծննդի հաջորդականության

(մարդ)

Տարի	Ընդամենը ծնվածներ	այդ թվում՝ ըստ ծննդի կարգի				
		առաջին	երկրորդ	երրորդ	չորրորդ	հինգերորդ և բարձր
1990	79882	29996	25660	18005	4681	1540
1995	48960	19408	18058	8058	2465	971
2000	34276	15637	11155	5085	1637	762
2005	37499	19286	12953	4014	858	388
2006	37639	19601	13271	3758	705	304
2007	40105	20525	14277	4263	708	332

Տարի	Ընդամենը ծնվածներ	այդ թվում՝ ըստ ծննդի կարգի				
		առաջին	երկրորդ	երրորդ	չորրորդ	հինգերորդ և բարձր
2008	41185	21292	14270	4520	761	342
2009	44413	22472	15431	5289	849	372
2010	44825	21954	15881	5683	929	378
2011	43340	21344	15377	5369	899	351

Աղբյուրը. ՀՀ ՄԿԾ

2011թ.-ին՝ նախորդ տարվա համեմատ, արձանագրվել է մահվան դեպքերի աճ՝ 0.2%-ով, իսկ մահացության ընդհանուր գործակցը պահպանվել է նույն մակարդակի վրա և կազմել 8.6 պրոմիլ: Ընդ որում, մահացության ընդհանուր գործակիցը քաղաքային վայրերում նվազել է 0.1 պրոմիլային կետով:

Աղյուսակ 1.3: Հայաստան. Ծնելիության ու մահացության ցուցանիշները, 1990-2011թթ.-ին

	Ծնունդ						Մահ					
	Հազար մարդ			1000 բնակչի հաշվով			Հազար մարդ			1000 բնակչի հաշվով		
	Ընդամենը	Քաղաք	Գյուղ	Ընդամենը	Քաղաք	Գյուղ	Ընդամենը	Քաղաք	Գյուղ	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
1990	79.9	50.2	29.7	22.5	20.5	27.0	22.0	14.7	7.3	6.2	6.0	6.7
1995	49.0	29.2	19.8	15.0	13.5	18.1	24.8	16.7	8.1	7.6	7.8	7.4
2000	34.3	21.4	12.9	10.6	10.3	11.4	24.0	15.7	8.3	7.5	7.5	7.3
2001	32.1	20.3	11.8	10.0	9.8	10.3	24.0	15.6	8.4	7.5	7.6	7.3
2002	32.2	20.8	11.4	10.1	10.1	10.0	25.5	16.7	8.8	8.0	8.1	7.7
2003	35.8	22.6	13.2	11.2	11.0	11.5	26.0	16.9	9.1	8.1	8.2	8.0
2004	37.5	23.6	13.9	11.7	11.5	12.1	25.7	16.5	9.2	8.0	8.0	7.9
2005	37.5	23.8	13.7	11.7	11.5	11.9	26.4	17.1	9.3	8.2	8.3	8.0
2006	37.6	23.8	13.8	11.7	11.5	12.0	27.2	17.7	9.5	8.5	8.6	8.2
2007	40.1	25.5	14.6	12.4	12.3	12.6	26.8	17.2	9.6	8.3	8.3	8.3
2008	41.2	26.2	15.0	12.7	12.6	12.9	27.4	17.9	9.9	8.5	8.4	8.6
2009	44.4	28.3	16.1	13.7	13.6	13.9	27.6	17.5	10.1	8.5	8.4	8.7
2010	44.8	28.3	16.5	13.8	13.6	14.1	27.9	17.8	10.1	8.6	8.6	8.6
2011	43.3	27.6	15.7	13.3	13.2	13.4	27.9	17.8	10.1	8.6	8.5	8.6

Աղբյուրը. ՀՀ ՄԿԾ

Նշում. Բնակչության բնական շարժի ցուցանիշներն ըստ սարգերի ներկայացված են վիճակագրական հավելվածի աղյուսակ A1.1-ում:

2011թ. արձանագրված մահվան դեպքերի կառուցվածքում՝ 52.3%-ն եղել են արական, իսկ 47.7%-ը՝ իգական, 1990թ.-ին արձանագրված համապատասխանաբար 54.2% և 45.8%-ի համեմատ: Արական և իգական սեռերի մահացության տարբեր մակարդակներով պայմանավորված, տարբեր է նաև կյանքի սպասվող միջին տևողության ցուցանիշը տղամարդկանց և կանանց շրջանում: 2011թ.-ին կյանքի սպասվող միջին տևողությունը տղամարդկանց համար կազմել է 70.7 տարի, իսկ կանանց համար՝ 77.5 տարի: Քաղաքային բնակչության կազմում այդ ցուցանիշը տղամարդկանց համար կազմել է 70.6, կանանց համար՝ 77.5 տարի, իսկ գյուղական բնակչության համար, համապատասխանաբար՝ 70.8 և 77.3 տարի:

Մահացության հիմնական պատճառները: Մահացության կառուցվածքում գերակշռող է արյան շրջանառության համակարգի հիվանդություններից արձանագրված մահվան դեպքերը (47.6%), որի մահացության մասնավոր գործակիցը, 100000 բնակչի հաշվով, 2011 թ. կազմել է՝ 407 մահվան դեպք, 2010թ. համեմատ արձանագրվել է դրանց 2.5 %-ով նվազում: Չարորակ նորագոյացություններից մահացության դեպքերի մասնաբաժինը 2011թ. կազմել է

19.9%, իսկ մասնավոր գործակիցը՝ 170 մահվան դեպք, 2010թ.-ին արձանագրված, 169 մահվան դեպքի համեմատ: Բոլոր պատճառներից մահացության ցուցանիշը, 100000 բնակչի հաշվով 2011թ.-ին կազմել է 856, 2010թ.-՝ 857 մահվան դեպքի համեմատ:

Ծննդյան և մահվան վերաբերյալ ցուցանիշների տարբերությունն արտահայտում է բնակչության բնական հավելվածը, որը 1990թ.-ից մինչև 2002թ. ընկած միջակայքում նվազել էր ավելի քան 8.5 անգամ (57.9 հազ.-ից մինչև 6.7 հազ.-ի), իսկ 2003թ.-ից մինչև 2010թ. արձանագրվել էր այս ցուցանիշի աճ՝ կազմելով միջին հաշվով, տարեկան շուրջ՝ 12.4 հազ մարդ: 2011թ.-ին արձանագրվել է ՀՀ բնակչության բնական հավելվածի ցուցանիշի 9 տոկոսով նվազում՝ 2010թ.-ի համեմատ: 2002-2011թթ.-ին ՀՀ բնակչության բնական հավելվածի հանրագումարային ցուցանիշը կազմել է՝ 126.0 հազ. մարդ:

Միգրացիա: Վերջին տարիներին պաշտոնական գրանցման ենթարկվող արտաքին միգրացիայի ցուցանիշներում նվազում է արձանագրվել: Այսպես, եթե 2005թ. հանրապետությունից մեկնողների (հաշվառումից հանվածների) ցուցանիշը կազմել է 9.3 հազ.մարդ¹, ապա 2011թ. այդ ցուցանիշը կազմել է 2.6 հազ.մարդ, այսինքն 2005թ.-ի համեմատ նվազել է 3,6 անգամ, իսկ 2010թ.-ի համեմատ նվազել է՝ 21,2%-ով (3.3 հազ.մարդ): Արտերկրից Հայաստան ժամանածների (հաշվառման կանգնածների) ցուցանիշը կազմել է՝ 1.3 հազ.մարդ², 2010 թ.-ի համեմատ աճել է 44,4 %-ով, իսկ 2005թ.-ի համեմատ նվազել է 13.3 %-ով: Արդյունքում, 2011թ.-ին միգրացիայի մնացորդի ցուցանիշը կազմել է՝ -1.3 հազ.մարդ, 2010թ.-ի՝ -2.4 հազ.մարդու համեմատ:

2011թ. միգրացիայի տարեկան ցուցանիշների մշակման արդյունքում՝ միջպետական միգրացիայի ուղղությունների վերաբերյալ ստացված տվյալների համաձայն, այդ բնութագրիչներով հանրապետությունում հաշվառման կանգնածների և հաշվառումից դուրս գրվածների շուրջ 85%-ը ժամանել/մեկնել են են ԱՊՀ երկրներից:

Ըստ 2011թ. ՏՏԿԱՀ արդյունքների, 2008թ-ի հունվարի 1-ից սկսած տ/տ 15 և բարձր տարիքի անդամներից 10.7 % ներգրավված են եղել արտաքին և ներքին միգրացիոն տեղաշարժերում: 2008թ. հունվարի 1-ից արտաքին և ներքին միգրացիոն տեղաշարժերում ընդգրկված տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամների՝ 26.3%-ի տեղաշարժերը 2011թ. դրությամբ եղել են ներհանրապետական՝ Երևան քաղաքում/ՀՀ մարզերում, իսկ մնացած 73.7%-ը՝ միջպետական, որոնց գերակշիռ մեծամասնությունը՝ Ռուսաստանի Դաշնությունում (աղյուսակ 1.4): Ընդ որում, ըստ հարցվացներից ստացված պատասխանների, ՌԴ և այլ երկրներ մեկնած/ժամանած տ/տ անդամների մեծամասնության համար՝ որպես մեկնելու/ժամանելու հիմնական պատճառ է նշվել՝ աշխատելը, աշխատանք փնտրելը և սեզոնային աշխատանքը:

¹ ՀՀ ոստիկանության տարածքային անձնագրային բաժինների կողմից բնակչության հաշվառումից (գրանցումից) դուրս գրման տվյալների հիման վրա ներկայացվող «Մեկնողի վիճակագրական հաշվառման կտրոնների» վիճակագրական մշակմամբ ստացված տվյալներով:

² ՀՀ ոստիկանության տարածքային անձնագրային բաժինների կողմից բնակչության հաշվառման (գրանցման) տվյալների հիման վրա ներկայացվող «Եկողի վիճակագրական հաշվառման կտրոնների» վիճակագրական մշակմամբ ստացված տվյալներով:

Աղյուսակ 1.4: Հայաստան. 2008թ. հունվարի 1-ից միգրացիոն գործընթացներում ներգրավված 15 և բարձր տարիքի տնային տնտեսությունների անդամներն ըստ մեկնելու/վերադառնալու պատճառների և գտնվելու/վերադառնալու վայրի, 2011թ.

(%)

Գտնվելու /վերադառնալու հիմնական պատճառը	Գտնվելու/վերադառնալու վայրը							
	Երևան	ՀՀ մարզեր	ՌԴ	ԱՊՀ այլ երկիր	Եվրոպական երկիր	ԱՄՆ և Կանադա	Այլ	Ընդամենը
1. Աշխատելը	6.1	3.3	84.4	2.6	1.2	0.5	1.9	100
2. Աշխատանք փնտրելը	1.0	0.1	86.4	10.0	0.6	-	1.9	100
3. Աշխատանքի բացակայությունը	4.1	-	89.3	0.0	3.8	-	2.8	100
4. Տնտեսական ճգնաժամը	-	1.7	91.4	6.9	-	-	-	100
5. Սեզոնային աշխատող	0.0	0.8	98.3	-	-	-	0.9	100
6. Մնալու իմաստ չկար	2.2	-	72.3	-	25.5	-	-	100
7. Ընտանեկան պատճառներ	7.6	14.3	53.2	9.6	5.7	6.7	2.9	100
8. Կուտակել էր բավարար գումար	-	-	100	-	-	-	-	100
9. Այցելություն ընկերներին/ բարեկամներին	4.5	20.3	51.8	5.3	5.4	2.0	10.7	100
10. Արձակուրդ	9.2	32.8	24.5	18.8	4.2	-	10.5	100
11. Այլ	21.1	44.5	4.4	5.2	2.2	1.8	20.8	100
Ընդամենը	9.4	16.9	57.6	4.2	2.6	1.2	8.1	100

Աղբյուրը. 2011թ. ՏՏԿԱՀ

Միգրացիոն գործընթացներում ներգրավված 15 և բարձր տարիքի տ/տ անդամների 65.5%-ը 2011թ. դրությամբ դեռևս բացակայել են և գտնվել են ՀՀ այլ մարզում, ք.Երևանում, տվյալ մարզի այլ բնակավայրում կամ այլ երկրում, իսկ 34.5%-ը՝ վերադարձել են մեկնումներից (որոնց 26.3%-ը՝ ք.Երևանից/ՀՀ այլ մարզերից/տվյալ մարզի այլ բնակավայրից, իսկ 73.7%-ը՝ այլ երկրներից):

Աղյուսակ 1.5: Հայաստան. 2008թ. հունվարի 1-ից միգրացիոն տեղաշարժում ներգրավված և 2011թ. վերադարձված 15 և բարձր տարիքի տնային տնտեսությունների անդամների բաշխումն ըստ վերադառնալու պատճառի և բացակայության տևողության, (%)

Վերադառնալու հիմնական պատճառը	Բացակայության տևողությունը			Ընդամենը
	≤3ամիս	4 -12ամիս	≥ 12	
1. Աշխատելը	8.8	11.3	9.4	10.1
2. Աշխատանք փնտրելը	0.0	2.1	1.4	1.4
3. Աշխատանքի բացակայությունը	7.0	5.1	2.8	4.9
4. Տնտեսական ճգնաժամը	0.0	0.3	1.2	0.5
5. Սեզոնային աշխատող	14.4	20.2	6.0	14.7
6. Մնալու իմաստ չկար	1.4	2.8	11.1	4.8
7. Ընտանեկան պատճառներ	11.0	5.7	12.7	9.0
8. Կուտակել էր բավարար գումար	4.7	0.2	0.3	1.4
9. Այցելություն ընկերներին/	9.4	17.9	16.5	15.3

Վերադառնալու հիմնական պատճառը	Բացակայության տևողությունը			Ընդամենը
	≤3ամիս	4 -12ամիս	≥ 12	
բարեկամներին				
10. Արձակուրդ	14.1	10.8	1.3	9.0
11. Այլ	29.2	23.6	37.3	28.9
Ընդամենը	100	100	100	100

Աղբյուրը. 2011թ. ՏՏԿԱՀ

Մեկնումներից վերադարձած միգրացիոն տեղաշարժում ներգրավված տ/տ անդամներից՝ 71.7%-ի բացակայության տևողությունը կազմել է մինչև մեկ տարի (որոնց 25.5%-ինը՝ կազմել է երեք ամիս և պակաս), իսկ 28.3 %-ինը՝ մեկ տարի և ավելի:

Ընդ որում, հարկ է նկատել, որ ըստ ռեսպոնդենտներից ստացված պատասխանների, այլ պատճառներով վերադարձածների մասնաբաժնում գերակշիռ մեծամասնություն են կազմել (70%) ուսումից/ ժամկետային զինձառայությունից վերադարձածները:

Աղյուսակ 1.6: Հայաստան. 2008թ. հունվարի 1-ից միգրացիոն գործընթացներում ներգրավված և 2011թ. դեռևս չվերադառած՝ 15 և բարձր տարիքի տնային տնտեսությունների անդամներն ըստ մեկնելու պատճառի և գտնվելու վայրի, (%)

Մեկնելու հիմնական պատճառը	Գտնվելու վայրը							
	Ք.Երե վան	ՀՀ մարզեր	ՌԴ	ԱՊՀ այլ երկիր	Եվրոպա կան երկիր	ԱՄՆ և Կանադա	Այլ	Ընդամենը
1. Աշխատելը	6.7	2.3	85.0	2.4	1.3	0.5	1.8	100
2. Աշխատանք փնտրելը	1.2	-	95.0	0.9	0.6	-	2.3	100
3. Աշխատանքի բացակայությունը	5.1	-	86.7	-	4.7	-	3.5	100
4. Տնտեսական ճգնաժամը	-	-	100	-	0.0	-	-	100
5. Սեզոնային աշխատող	-	0.2	98.0	-	-	-	1.8	100
6. Մնալու իմաստ չկար	-	-	-	-	100	-	-	100
7. Ընտանեկան պատճառներ	13.5	13.0	55.7	0.9	8.3	5.3	3.3	100
9. Այցելություն ընկերներին/ բարեկամներին	15.2	20.1	54.7	-	0.4	9.6	-	100
10. Արձակուրդ	1.3	-	73.2	25.5	-	-	-	100
11. Այլ	29.4	42.3	1.4	1.8	0.3	0.4	24.4	100
Ընդամենը	12.6	13.7	61.3	1.7	1.6	0.8	8.3	100

Աղբյուրը. 2011թ. ՏՏԿԱՀ

2008թ.-ից մեկնած և 2011թ.-ի դրությամբ, դեռևս չվերադարձած 15 և բարձր տարիքի տ/տ անդամների 61.3 %-ը գտնվել են Ռուսաստանի Դաշնությունում, 12.4 %-ը՝ ԱՊՀ այլ երկրներում, ԱՄՆ-ում, Կանադայում կամ օտարերկրյա այլ երկրներում, իսկ 26.3 %-ը գտնվել են ք.Երևանում կամ ՀՀ մարզերում: Ընդ որում, չվերադարձածների 26.7%-ի բացակայության տևողությունը կազմել է երեք ամիս և պակաս (որոնք, ըստ ՄԱԿ-ի մեթոդաբանության միգրանտներ չեն համարվում), 42.2 %-ինը՝ 4-12 ամիս, իսկ 31.5%-ինը՝ մեկ տարի և ավելի: Ըստ ՄԱԿ-ի կողմից սահմանված արտաքին միգրացիայի միջազգային մեթոդաբանության, արտաքին միգրանտները կազմում են չվերադարձածների՝ 40.5%-ը, որոնցից կարճաժամկետ միգրանտները՝ 4-12 ամիս տևողությամբ երկրից բացակայածները (բացառյալ՝ հանգստի, ընկերներին/բարեկամներին այցելության, արձակուրդի, գործնական, առողջական կամ

կրոնական ուխտագնացության մեկնածները) կազմել են արտաքին միգրացիոն տեղաշարժերում ներգրավված 15 և բարձր տարիքի տ/տ անդամների 58.4%-ը, իսկ երկարաժամկետ միգրանտները՝ մեկ տարի և ավելի ժամկետով բացակայածները՝ 41.6 %-ը:

Աղյուսակ 1.7: Հայաստան. 2008թ. հունվարի 1-ից միգրացիոն գործընթացներում ներգրավված և 2011թ. դրությամբ դեռևս չվերադաձած՝ 15 և բարձր տարիքի տնային տնտեսությունների անդամներն ըստ մեկնելու տարեթվի

Մեկնելու տարեթիվը	Տոկոսով ընդհանուրի նկատմամբ
2008	6.3
2009	14.2
2010	27.9
2011	51.6
Ընդամենը	100.0

Աղբյուրը. 2011թ. ՏՏԿԱՀ


1.2. Տարիքային կառուցվածքը և տնային տնտեսությունների կազմը

Ծնելիության ցածր մակարդակի և Հայաստանի համար բնորոշ, թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց շրջանում, ծննդյան պահից կյանքի սպասվող միջին տևողության հարաբերականորեն բարձր ցուցանիշի համատեղ ներգործությամբ, ինչպես նաև տղամարդկանց էմիգրացիոն ակտիվության ընդգծված գերակշռման հանգամանքով պայմանավորված, 1990-ից 2011թթ. միջակայքում էական փոփոխության է ենթարկվել Հայաստանի բնակչության տարիքային կառուցվածքը (գծապատկեր 1.2):

Մինչև 16 տարեկան երեխաների տեսակարար կշիռը 1990թ.-ի 32.2 տոկոսից նվազել է և 2012թ.-ի տարեսկզբին կազմել է՝ 19.4 %, աշխատունակ տարիքի բնակչության տեսակարար կշիռն ավելացել է, համապատասխանաբար, 59.7%-ից՝ կազմելով 69.5%, իսկ աշխատունակ տարիքից բարձր բնակչության տեսակարար կշիռն աճել է 1990թ.՝ 8.1%-ից մինչև 2012թ. տարեսկզբի դրությամբ՝ 11.1%:

2012թ. տարեսկզբի դրությամբ աշխատանքային տարիքի ամեն 1000 մարդուն բաժին է ընկել է 439՝ մինչև 16 տարեկան երեխաներ և կենսաթոշակառուներ, ինչը 2011թ.-ի նույն ժամանակահատվածում արձանագրված ցուցանիշի (452 մարդ) համեմատ նվազել է 2.9 %-ով: 2012թ. տարեսկզբին, նախորդ տարվա համեմատ 0.6 %-ային կետով աճել է աշխատունակ տարիքի բնակչության մասնաբաժինը, որը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ մինչև 16 տարեկանների տարիքային խմբից աշխատունակ տարիք է անցում կատարել ավելի մեծաթիվ բնակչություն քան այն համալրվել է նորածիններով, իսկ աշխատունակ տարիքից բարձր բնակչության մասնաբաժինը, համապատասխանաբար, նվազել է 0.2 տոկոսային կետով:

Գծապատկեր 1.2: Հայաստան. Բնակչության տարիքային կառուցվածքը 1990, 2000, 2007-2012թթ. (տարեսկզբի դրությամբ)*



Աղբյուրը. ՀՀ ՄԿԾ

Նշում. Աշխատունակ տարիքի բնակչությանը վերագրվել են 16-ից բարձր՝ մինչև կենսաթոշակային տարիքի բնակչությունը: 1990թ. գործող օրենսդրությամբ կենսաթոշակային տարիքը տղամարդկանց համար սահմանված է եղել՝ 60, կանանց համար՝ 55 տարեկանը, 2000թ.-ին տղամարդկանցը՝ 62, կանանցը՝ 57 տարեկանը, իսկ 2003թ. ապրիլի 10-ից ուժի մեջ մտած համապատասխան օրենքով՝ տղամարդկանց համար սահմանվել է 63 տարեկանը, իսկ կանանց համար, այն ավելանում է աստիճանաբար, 2007-2008թթ.-ի համար սահմանվել է 61 տարին, 2009-2011թթ.-ի համար՝ 62 տարին, 2012թ.-ից արդեն տարիքները հավասարվել են՝ 63 տարեկան:

*) համադրելիության տեսանկյունից ցուցանիշները հաշվարկված են 2007-2011թթ. համար սահմանված կենսաթոշակային տարիքային խմբերով:

Ըստ 2011թ.-ի հետազոտության արդյունքների, մշտական բնակչության հաշվարկով, տնային տնտեսության անդամների միջին թվաքանակը կազմել է 3.9 մարդ՝ 3.7 քաղաքային բնակավայրերում և 4.2 գյուղական բնակավայրերում, իսկ ըստ առկա բնակչության, համապատասխանաբար՝ 3.6, 3.6 և 3.8 մարդ: 2011թ.-ին երեք և ավելա անդամ ունեցող տնային տնտեսությունների տեսակարար կշիռը 42% էր՝ 2010թ.-ի՝ 38.2 %-ի և 2009թ.-ի՝ 38.5% համեմատ (աղյուսակ 1.8): Բազմանդամ (վեց և ավելի անդամ ունեցող) տնային տնտեսությունները գերակշռել են գյուղական բնակավայրերում՝ 24.5%, քաղաքայինի՝ 17.1%-ի համեմատ: Հայաստանի քաղաքային բնակավայրերում գերակշռել են չորս անդամից բաղկացած տնային տնտեսությունները, որոնց մասնաբաժինը քաղաքային տնային տնտեսությունների կազմել՝ 20.9% է, գյուղականի՝ 19.3%-ի համեմատ: Գյուղական բնակավայրերում 2011թ. գերակշռող է եղել վեց և ավելի անդամ ունեցող տնային տնտեսությունների մասնաբաժինը՝ 24.5%, իսկ հինգ անդամ ունեցող տնային տնտեսություններինը կազմել է՝ 20.4%:

Աղյուսակ 1.8: Հայաստան. Տնային տնտեսությունների համեմատական բաշխումն ըստ դրանց կազմի (ըստ մշտական բնակչության) 2004 , 2009-2011թթ.-ին

Տնային տնտեսությունների կազմը	Տվյալներով ընդհանուրի նկատմամբ			
	2004թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Տնային տնտեսություններ կազմված՝				
մեկ անդամից	10.9	9.6	10.0	11.5
2 անդամից	16.5	14.7	14.0	16.2
3 անդամից	14.6	14.2	14.2	14.3
4 անդամից	21.6	21.7	21.0	20.5
5 անդամից	17.2	18.2	18.0	17.9
6 և ավելի անդամներից	19.2	21.6	22.8	19.6

Աղբյուրը. 2004, 2009 - 2011թթ.-ի ՏՏԿԱՀ.

2011թ.-ին մինչև 16 տարեկան անչափահաս երեխաներ չունեցող տնային տնտեսությունների մասնաբաժինը, նախորդ տարվա համեմատ, աճել է 3.8 տոկոսային կետով և կազմել է 57.2% (2004թ.-ի 45.3%-ի համեմատ), ինչով պայմանավորված նվազել են երեխաներ ունեցող տ/տ-երի մասնաբաժինները: Մասնավորապես, երեք երեխաներ ունեցող տնային տնտեսությունների մասնաբաժինը կազմել է՝ 4.1%, նախորդ տարվա համեմատ նվազել է 1.2 տոկոսային կետով, իսկ 2004թ. համեմատ՝ 3.1 տոկոսային կետով (աղյուսակ 1.9):

Աղյուսակ 1.9: Հայաստան. Մինչև 16 տարեկան երեխա ունեցող տնային տնտեսությունները, 2004, 2009 - 2011թթ.

(ըստ մշտական բնակչության)

Տնային տնտեսությունների կազմը	Տոկոսներով ընդհանուրի նկատմամբ			
	2004թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Տնային տնտեսություններ ընդամենը	100.0	100.0	100.0	100.0
<i>այդ թվում՝ ըստ երեխաների թվաքանակի.</i>				
1 երեխա ունեցող	22.2	19.3	19.9	19.2
2 երեխա ունեցող	22.9	19.6	20.0	18.8
3 երեխա ունեցող	7.2	5.2	5.3	4.1
4 երեխա ունեցող	1.8	0.8	1.0	0.6
5 և ավելի երեխա ունեցող	0.6	0.2	0.4	0.1
երեխա չունեցող	45.3	54.9	53.4	57.2

Աղբյուրը. 2004, 2009 - 2011թթ.-ի ՏՏԿԱՀ.

Հանրապետությունում տնային տնտեսությունների գերակշիռ մասի գլխավորը հանդիսացել են տղամարդիկ՝ 69.1 %, իսկ կին գլխավոր ունեցող տնային տնտեսությունների մասնաբաժինը կազմել է՝ 30.9% (քաղաքային բնակավայրերում 33%, իսկ գյուղական բնակավայրերում՝ 26.2 %):

Կին գլխավոր ունեցող մեկ տնային տնտեսությանը 2011թ. միջին հաշվով բաժին է ընկել 0.33 երեխա, իսկ տղամարդ գլխավոր ունեցող տնային տնտեսությանը՝ 0.47 երեխա:

Սկսած 2001թ.-ից հանրապետությունում ամուսնություններն աճի միտում են արձանագրել: 2011թ.-ին արձանագրվել է ամուսնության 19706 դեպք, իսկ ամուսնության ընդհանուր գործակիցը, 1000 բնակչի հաշվով, կազմել է 6.0‰, 2010թ.-ին արձանագրված, համապատասխանաբար՝ 17984 դեպքի և 5.5‰-ի համեմատ: 2011թ. ամուսնալուծության դեպքերն աճել են նախորդ տարվա համեմատ 6.4 տոկոսով և կազմել է 3188 դեպք, իսկ ամուսնալուծության ընդհանուր գործակիցը կազմել է 1.0‰, նախորդ տարվա 0.9‰-ի համեմատ:

Ամուսնության միջին տարիքը 2011թ.-ին տղամարդկանց համար կազմել է 29.6, իսկ կանանց համար՝ 25.6 տարին, 2010թ.-ին՝ համապատասխանաբար՝ 29.3 տարին և 25.2 տարին, իսկ առաջին ամուսնության միջին տարիքը, տղամարդկանց համար 2011թ.-ին կազմել է 28.7, իսկ կանանց համար՝ 25.0 տարին, 2010թ.-ին՝ համապատասխանաբար՝ 28.4 տարին և 24.6 տարին:

Գլուխ 2: Հայաստանի տնտեսական զարգացումների ամփոփ նկարագիրը 2008-2011թթ.-ին

2.1. Մակրոտնտեսական միջավայրը

Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) 2000-ականների ընթացքում պահպանվել է կայուն տնտեսական աճի վարքագիծ: Սակայն, համաշխարհային տնտեսական ճգնաժամը հարվածեց նաև Հայաստանի տնտեսությանը: Մինչ կայուն տնտեսական հիմնաքարերը՝ պարտքի ցածր մակարդակը, աճող խնայողությունները և զգուշավոր ֆիսկալ դիրքը պահպանեցին տնտեսությունը թողարկման գլոբալ անկման և ֆինանսական ճգնաժամի սկզբնական ազդեցությունից, արտաքին պահանջարկի և կապիտալ հոսքերի ծավալների անկման էֆեկտը սկսեց զգացվել 2008թ.-ի չորրորդ եռամսյակից: Ներդրումները նվազեցին մեծացող տեմպով, իսկ բնակելի շենքերի շինարարության հատվածն ամենամեծ տուժող հանդիսացավ տնտեսական միջավայրի կտրուկ փոփոխության արդյունքում: Տնտեսական ցուցանիշները հաստատեցին, որ 2009թ.-ի արդյունքներով խոր անկում արձանագրվեց: 2009թ.-ին գրանցվեց իրական ՀՆԱ-ի 14.1% անկում, որին սկսեց հաջորդել դանդաղ վերականգնում՝ սկսած 2010թ.-ից (2010թ.-ին ՀՆԱ-ի աճը կազմեց 2.2%, 2011թ.՝ 4.7%):

Ինչևէ, մինչ ճգնաժամը, վերջին տասնամյակի ընթացքում ունեցած կայուն տնտեսական աճի գրանցման արդյունքում, Հայաստանը միացավ եկամուտների միջին մակարդակով գնահատվող երկրների խմբին: Տնտեսական աճը հանգեցրեց զբաղվածության մակարդակի կայունացմանը, իրական աշխատավարձերի և համախմբված բյուջեից սոցիալական ոլորտներին ուղղվող ծախսերի ավելացմանը: Այդ ամենը, մասնավոր տրանսֆերտների աճող հոսքի հետ մեկտեղ, նպաստեցին աղքատության մակարդակի զգալի կրճատմանը:

ՀՆԱ-ի իրական անկումը 2009թ.-ին կազմեց 14.1%՝ համեմատած 2000-ականների ընթացքում գերազանցապես գրանցված միջին աճի երկնիշ ցուցանիշների հետ: Տնտեսության գրեթե բոլոր հատվածները նպաստել են 2004-2008թթ.-ի ընթացքում մեծացող միջին աճին (11.6%), ինչը զգալի կառուցվածքային տեղաշարժերի հանգեցրեց ՀՆԱ-ի կազմում: Հատկապես նկատելի էր շինարարության աճի բարձր տեմպը, որն ապահովել էր 2008թ. ՀՆԱ-ի աճի 39.1 %-ը և ՀՆԱ-ի կառուցվածքում դրա տեսակարար կշիռը հասել էր մինչև 25.3%: Ի հակադրություն դրան, 2009թ.-ին շինարարության ծավալների մեծ չափով անկումը (41.6%) կազմել էր ՀՆԱ-ի անկման 74.5%-ը և ՀՆԱ-ի կառուցվածքում դրա տեսակարար կշիռը նվազել էր մինչև 18.6% (Աղյուսակ 2.1): 2010թ. տեղի ունեցան դրական փոփոխություններ: 2009թ. նկատմամբ շինարարության աճի տեմպը կազմեց 3.3 %, սակայն տեսակարար կշիռը՝ (17,3%) 2008թ.-ի (25.3%) նկատմամբ մնաց ցածր:

2010թ.-ին արդյունաբերությունում նույնպես գրանցվեց տնտեսական աճ՝ 9.2%, 2009թ.-ի 6.9% անկման դիմաց, որը 1.2 տոկոսային կետով նպաստեց 2010թ. ՀՆԱ-ի հավելաճին: Իսկ գյուղատնտեսությունում, որի վիճակը 2009թ.-ին համեմատաբար բարվոք էր, ընդհակառակը, գրանցվեց տնտեսական անկում (16.0%)՝ պայմանավորված

բնակլիմայական անբարենպաստ պայմաններով, որն էլ իր հերթին 2.7 տոկոսային կետով բացասաբար անդրադարձավ ՀՆԱ-ի հավելաճի վրա:

ՀՀ կառավարության կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում (գյուղատնտեսական առաջարկի խթանում, արդյունաբերության ոլորտի կազմակերպություններում ներդրումների իրականացում, հարկային քաղաքականության մեղմացում, ավելացված արժեքի հարկի վճարման հետաձգում և այլն) 2011թ.-ին ՀՆԱ-ի կառուցվածքում տեղի ունեցան զգալի փոփոխություններ: Գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտներում համապատասխանաբար 113.7% և 113.5% տնտեսական աճի արդյունքում գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2010թ. 17.1%-ից հասավ 20.2%, իսկ արդյունաբերությանը՝ 15.4%-ից՝ 16.3%-ի: Շինարարության ոլորտում դարձյալ արձանագրվեց անկում 12.5%:

Աղյուսակ 2.1 Հայաստան. ՀՆԱ-ի կառուցվածքն ու ՀՆԱ-ի աճին նպաստման չափերն ըստ ԵՀՀ -95¹ Ա6 խմբավորման՝ արտադրական եղանակով, 2008-2011թթ.

	Իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա նկատմամբ				ՀՆԱ-ի հավելաճին նպաստման չափը (տոկոսային կետով)				ՀՆԱ-ի կառուցվածքը			
	2008	2009	2010	2011 ²	2008	2009	2010	2011 ²	2008	2009	2010	2011 ²
Ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով)	106.9	85.9	102.2	104.7	6.9	-14.1	2.2	4.7	100.0	100.0	100.0	100.0
Գյուղատնտեսու- թյուն, որսորդություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և ձկնաբուծություն	103.3	106.0	84.0	113.7	0.6	1.0	-2.7	2.4	16.3	16.9	17.1	20.2
Արդյունաբերու- թյուն, ներառյալ էներգետիկա	102.1	93.1	109.2	113.5	0.3	-0.9	1.2	2.1	13.3	13.5	15.4	16.3
Շինարարություն	111.3	58.4	103.3	87.5	2.7	-10.5	0.6	-2.2	25.3	18.6	17.3	12.8
Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակ ների և անձնական օգտագործման իրերի նորոգում հյուրանոցներ և ռեստորաններ, տրանսպորտ և կապ	108.2	94.0	104.9	104.1	1.5	-1.1	1.0	0.8	18.8	20.5	20.1	20.4
Ֆինանսական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ,	112.3	99.2	108.2	112.6	0.8	-0.1	0.7	1.1	7.1	8.8	8.6	9.2

¹ Եվրոպական հաշիվների համակարգ:

² Տվյալները նախնական են:

	Իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա նկատմամբ				ՀՆԱ-ի հավելվածին նպաստման չափը (տոկոսային կետով)				ՀՆԱ-ի կառուցվածքը			
	2008	2009	2010	2011 ²	2008	2009	2010	2011 ²	2008	2009	2010	2011 ²
վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում												
Այլ գործունեություն ծառայությունների մատուցման բնագավառում	93.5	98.9	101.8	107.3	-0.6	-0.1	0.3	0.8	9.3	12.7	12.2	12.8
ՖՄԱԶԾ ¹	109.1	89.8	119.0	145.5	-0.1	0.1	-0.3	-0.8	-1.5	-1.6	-1.9	-2.6
Արտադրանքի գուտ հարկեր	117.1	77.5	113.4	104.3	1.7	-2.5	1.4	0.5	11.4	10.6	11.2	10.9

Աղբյուրը. ՀՀ ՄՎԾ

Տնտեսական անկմանը զուգահեռ նկատելի էր ՀՆԱ-ի նկատմամբ տնտեսության վերջնական սպառման մակարդակի աճ (2009-2011թթ.-ին՝ միջինում 95%՝ 2008թ.-ի 81.8%-ի դիմաց):

2006-2008թթ.-ին ՀՀ ազգային դրամը արժևորվեց ԱՄՆ դոլարի և այլ արտարժույթների նկատմամբ, որը պայմանավորված էր նաև արտարժույթի ավելացող ներհոսքով (մասնավոր տրանսֆերտների, պետական դրամաշնորհների և օտարերկրյա ուղղակի ներդրումների տեսքով), իսկ 2009-2010թթ.-ին դրամը արժեզրկվել է՝ կապված 2009թ.-ի մասնավոր դրամական փոխանցումների և 2009-2010թթ.-ի՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների նվազման հետ:

2011թ.-ին միջին տարեկան գնաճը կազմել է 7.7%:

Աղյուսակ 2.2. Հայաստան. Մակրոտնտեսական ցուցանիշները, 2008-2011թթ.

	2008	2009	2010	2011
Անվանական ՀՆԱ (մլրդ. դրամ)	3568.2	3141.7	3460.2	3776.4
Անվանական ՀՆԱ (մլն. ԱՄՆ դոլար)	11662.0	8648.0	9260.3	10138.1
Իրական ՀՆԱ (2005-ի գներով, մլրդ. դրամ)	3088.6	2651.6	2709.9	2837.3
Իրական ՀՆԱ-ի աճ (տարեկան տոկոսային աճ)	6.9	-14.1	2.2	4.7
ԱՄՆ դոլարի փոխարժեք (ժամանակաշրջանի միջին)	305.97	363.28	373.66	372.50
Գործազրկության մակարդակ, (տոկոսներով)	16.4	18.7	19.0	18.4
Միջին ամսական անվանական աշխատավարձ (դրամ)	87406	96019	102652	108092
Գնաճ (միջին տարեկան)	9.0	3.4	8.2	7.7
Համախմբված բյուջեի ծախսեր (ՀՆԱ-ի նկատմամբ տոկոս)	23.2	30.2	28.2	26.8
Համախմբված բյուջեի պակասորդ (ՀՆԱ-ի նկատմամբ տոկոս)	-0.7	-7.5	-5.0	-2.8

Աղբյուրը. ՀՀ ՄՎԾ

¹ Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ:

2010թ.-ից նկատվում է համախմբված բյուջեի եկամուտների աճ (բացարձակ թվերով):

Աղյուսակ 2.3. Հայաստան. Համախմբված բյուջեի ամփոփ ցուցանիշները, 2008-2011թթ.

(ՀՆԱ-ի նկատմամբ, տոկոս)

	2008	2009	2010	2011
Ընդամենը եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	22.5	22.7	23.0	24.0
որից՝ հարկեր և տուրքեր	17.8	17.2	17.7	17.8
Ընդամենը ծախսեր	23.2	30.2	28.2	26.8
Պակասուրդ	-0.7	-7.5	-5.0	-2.8

Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ

Հարկաբյուջետային ոլորտում տեղի ունեցած վերակառուցումն ու տնտեսական աճը պայմանավորեցին բարելավված բյուջետային կատարողական, որի արդյունքում ՀՀ կառավարությունը կարողացավ ավելի շատ միջոցներ ուղղել սոցիալական ոլորտների հիմնախնդիրներին, հետևաբար և, էլ ավելի ուղղորդել պետական բյուջեի ծախսերի կառուցվածքն աղքատության կրճատման ռազմավարության գերակայություններին: Արդյունքում, համախմբված բյուջետային ծախսերում սոցիալական ոլորտներին ուղղված ծախսերի տեսակարար կշիռը 2008 թվականին կազմում էր 47.9%: 2009-2010 թվականներին նվազել է նաև այս ցուցանիշը, կազմելով համապատասխանաբար՝ 46.9% և 46.3%: 2011 թվականին համախմբված բյուջետային ծախսերում սոցիալական ոլորտներին ուղղվող ծախսերի տեսակարար կշիռն աճել է՝ հասնելով 2008 թվականի մակարդակին (Աղյուսակ 2.4): Աղքատ բնակչության կենսամակարդակի բարձրացման իմաստով հատկապես կարևոր է առաջնային բուժօգնության, ընդհանուր կրթության և սոցիալական ծառայությունների հասանելիությունը:

Աղյուսակ 2.4. Հայաստան. Համախմբված բյուջեի* սոցիալական ոլորտներին ուղղված փաստացի ծախսերը 2008-2011թթ.,

(տոկոսներով համախմբված բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ)

	2008 թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Կրթության ոլորտ	13.7	12.8	13.0	13.3
Առողջապահության ոլորտ	6	6	5.8	6.3
Մշակույթ, տեղեկատվություն, սպորտ, կրոն	2.4	2.2	2.2	2.9
Կենսաթոշակներ**	18.8	18.9	18.5	18.7
Կենսաթոշակներ, ՀՆԱ-ի նկատմամբ, <i>(տոկոսներով)</i>	4.4	5.8	5.2	5.0
Այլ սոցիալական ծրագրեր	7	7.0	6.8	6.7
Ընդամենը համախմբված բյուջեի սոցիալական ոլորտներին ուղղված փաստացի ծախսեր	47.9	46.9	46.3	47.9

Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ

Նշում. * Ներառում է ՀՀ պետական և համայնքների բյուջեներից սոցիալական ոլորտներին ուղղվող ծախսերը:

** Ներառում է տարիքային, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում տրամադրվող կենսաթոշակները:

2.2. Տնտեսական աճը /անկումը և աղքատությունը

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը լրջորեն վտանգեց ՀՀ-ում ճգնաժամին նախորդող տարիներին ձեռք բերված տնտեսական աճը և աղքատության կրճատումը:

Աղքատության մակարդակի կրճատման վրա տնտեսական աճի ազդեցության թվային արտահայտությունը ստանալու համար կիրառվել է ՀՆԱ-ի աճի նկատմամբ աղքատության մակարդակի էլաստիկության գործակիցը: Տնտեսության անկումը 2009 - 2010թթ.-ին 2008թ.-ի նկատմամբ նախադրյալներ է ստեղծել կենսամակարդակի վատթարացման և աղքատության աճի համար: Էլաստիկության գործակիցը ցույց է տալիս, որ 2008-2009թթ.-ին արձանագրված տնտեսական անկման յուրաքանչյուր տոկոսային կետ աղքատության ընդհանուր մակարդակն ավելացրել է 1.61 %-ային կետով, 2009-2010թթ.-ին՝ 2.35%-ային կետով, իսկ 2010-2011թթ.-ին՝ 3.20%-ային կետով (Աղյուսակ 2.5): Էլաստիկության գործակիցը 2010-2011թթ.-ին ավելի բարձր է եղել Երևան քաղաքում: Հաշվարկները ցույց են տալիս, որ տնտեսական աճի պայմաններում աղքատները շահում են, բայց ոչ այնքան, ինչքան հարուստները (տես՝ նախորդ տարիների զեկույցներ), իսկ համաշխարհային տնտեսական ճգնաժամի ընթացքում (2009-2010թթ.), երբ տնտեսությունն անկում է ապրում, ավելի շատ տուժում են հենց աղքատները, իսկ հարուստները, անգամ ճգնաժամի պայմաններում, հիմնականում շարունակում են հարստանալ (Գծապատկեր 3.3, 3.4, 3.5, 3.6):

Աղյուսակ 2.5. Հայաստան. ՀՆԱ-ի նկատմամբ աղքատության էլաստիկության գնահատականները մինչև Համաշխարհային տնտեսական ճգնաժամը և դրա ընթացքում (2008-2009թթ., 2009-2010թթ. և 2010-2011թթ.)

(տոկոսային կետ)

	2008-2009թթ.	2009-2010թթ.	2010-2011թթ.
Ընդհանուր աղքատության նվազեցում / ՀՆԱ էլաստիկություն	-1.61	-2.35	-3.20
ա) քաղաքային աղքատության նվազեցում / ՀՆԱ էլաստիկություն	-1.47	-2.29	-3.24
1) Երևան քաղաքի աղքատության նվազեցում / ՀՆԱ էլաստիկություն	-2.31	-2.74	-4.39
2) այլ քաղաքներում աղքատության նվազեցում / ՀՆԱ էլաստիկություն	-1.04	-2.08	-2.56
բ) գյուղական աղքատության նվազեցում / ՀՆԱ էլաստիկություն	-1.81	-2.42	-2.98
գ) գյուղական աղքատության նվազեցում / գյուղատնտեսության ավելացված արժեքի էլաստիկություն	4.33	-2.62	33.26

Աղբյուրը. ՀՀ ՄՎԾ, ՏՏԿԱՀ

Գլուխ 3. Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2011թթ.-ին

3.1. Ներածություն

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը, որը սկսվեց 2008թ.-ի չորրորդ եռամսյակից, հարվածել է նաև Հայաստանի տնտեսությանը: ՀՆԱ-ի տարեկան իրական աճը 2008թ.-ին կազմել է միայն 6.9%՝ համեմատած 2000-ականների ընթացքում գերազանցապես գրանցված տարեկան միջին աճի երկնիշ ցուցանիշների հետ: 2009թ.-ի արդյունքներով արձանագրվեց Հայաստանի տնտեսության խոր՝ 14.1% անկում: Որպես արդյունք նույն տարում աղքատության մակարդակն առաջին անգամ 1998թ.-ից հետո աճեց: 2010թ.-ին ճգնաժամը շարունակեց իր բացասական ազդեցությունը մեր երկրում: Հայաստանի տնտեսությունը 2010թ.-ին մի փոքր աճեց նախորդ տարվա նկատմամբ և աճը կազմեց 2.2%, սակայն աղքատության մակարդակը շարունակեց աճել: 2011թ.-ը Հայաստանի տնտեսության համար համեմատաբար բարվոք էր, այն նախորդ տարվա նկատմամբ աճեց 4.7%-ով: Որպես արդյունք նույն տարում գրանցվեց աղքատության մակարդակի աճի դադարեցում:

Բնակչության բարեկեցության, կենսամակարդակի գնահատման կարևոր ցուցանիշ է համարվում տվյալ երկրում աղքատության մակարդակը: Աղքատությունն արտահայտվում է տարբեր ձևերով և շոշափում կյանքի տարբեր կողմերը՝ սպառում, պարենային անվտանգություն, առողջություն, կրթություն, իրավունքներ, ներառյալ ձայնի իրավունքը, անվտանգություն, արժանապատվություն և արժանապատիվ աշխատանք:

Ինչպես նախորդ զեկույցներում, այս անգամ ևս բնակչության կենսամակարդակի փոփոխության դինամիկան նկարագրվում է ըստ նյութական և ոչ նյութական աղքատության տեսանկյունից:

Ոչ նյութական աղքատության բնորոշիչներն են՝ վատ առողջությունը, կրթության ցածր մակարդակը կամ անգրագիտությունը, սոցիալական անտեսվածությունը կամ մերժվածությունը, անպաշտպանվածությունը, իրավունքների և խոսքի ազատության անկիրառելիությունը, այն է՝ գործնականում սեփական խնդիրների մասին հայտնելու անկարողությունը: Ոչ նյութական աղքատության հաղթահարման հիմնական ուղղություններն են կրթական, առողջապահական և սոցիալական ծառայությունների մատչելիության բարելավումը: Այն է՝ անվճար ծառայությունների հասցեականության առավել հստակությունը և վճարովի ծառայություններից օգտվելու կարողությունների աճը:

Սույն զեկույցի ներքո աղքատությունը գնահատվում է նյութական (դրամային) ցուցանիշների միջոցով: Նշված համատեքստում, համաձայն Համաշխարհային բանկի սահմանման, **աղքատությունը որոշակի կենսամակարդակի ընդունելի նվազագույնի ապահովման անկարողությունն է:**

Հայաստանում բարեկեցության մակարդակը գնահատելու համար օգտագործվում է **սպառման ազրեզագված ցուցանիշը:** Սպառումը տնտեսական բարեկեցության ցուցանիշ է: Ինչպես արդեն նշվեց սկզբնամասում, միջազգային փորձից ելնելով՝ ընդունված է, որ սպառումն ավելի ճշգրիտ տեղեկատվություն է ներկայացնում և այդքան էլ զգայուն չէ կարճատև տատանումների նկատմամբ, քան եկամտի ցուցանիշը, հատկապես անցումային տնտեսությամբ երկրներում: **Սպառման ազրեզագված ցուցանիշը ներառում է** հետևյալ բաղկացուցիչները. (ա) սպառված պարենային և ոչ պարենային ապրանքների արժեքը,

ներառյալ սեփական արտադրության ապրանքները, մարդասիրական կազմակերպություններից և այլ աղբյուրներից ստացված օգնությունը և (բ) երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը:

Հայաստանում աղքատությունը գնահատելու համար օգտագործվում է բացարձակ աղքատության հայեցակարգը: Հայաստանի բնակչությունն ըստ կենսամակարդակի բաժանվում է աղքատների և ոչ աղքատների: Աղքատները իր հերթին ներառում են երկու խումբ՝ շատ աղքատ և նրանց թվում ծայրահեղ աղքատ: Աղքատությունը Հայաստանում գնահատվում է 1996թ.-ից սկսած: 2009թ.-ից Հայաստանում օգտագործվում է Համաշխարհային բանկի թվով երրորդ մեթոդաբանությունը (երեք մեթոդաբանությամբ հաշվարկված ցուցանիշները համեմատելի չեն և բերված են Հավելվածի Աղյուսակ A3.6-ում, Ներդիր 3.2 Աղյուսակ 2 -ում և Աղյուսակ 3.1-ում):

Աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության վերին՝ ընդհանուր գծից, **շատ աղքատ** են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության ստորին՝ ընդհանուր գծից, իսկ **ծայրահեղ աղքատ** կամ թերսնված գնահատվել են նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության պարենային գծից:

2011թ.-ին ի տարբերություն նախորդ երկու տարիների աղքատության մակարդակի աճի, արձանագրվեց աղքատության մակարդակի աճի դադարեցում: 2011թ.-ին աղքատության մակարդակը կազմել է 35.0%-ի, ինչը մի փոքր ցածր է նախորդ տարվա ցուցանիշից (35.8%-ի):

2011թ.-ին բնակչության ավելի քան ամեն երրորդը՝ 35.0%-ը եղել է աղքատ, նրանցից ամեն հինգերորդը՝ 19.9%-ը՝ շատ աղքատ, իսկ նրանց թվում 3.7%-ը՝ ծայրահեղ աղքատ: Չնայած որ 2011թ.-ին 2010թ.-ի նկատմամբ աղքատության մակարդակը նվազել է, սակայն 2008թ.-ի համեմատ թե՛ աղքատության մակարդակը, թե՛ դրա խորությունն ու սրությունը, դեռևս գերազանցում են այն: Նախորդ (2009-2011թթ.) տարիների ընթացքում 2008թ.-ի համեմատ մոտ 250 հազար մարդ դարձել է աղքատ, հասցնելով աղքատների թվաքանակը 2011թ.-ին մոտ 1.1 մլն-ի (մշտական բնակչության ցուցանիշի հաշվով), մոտ 240 հազարը նույն ժամանակահատվածում դարձել են շատ աղքատ, հասցնելով շատ աղքատների թվաքանակը 650 հազարի: Միայն երեք տարիների ընթացքում մոտ 70 հազարը դարձել է ծայրահեղ աղքատ, հասցնելով ծայրահեղ աղքատների թվաքանակը 2011թ.-ին մոտ 120 հազարի:

Մինևույն ժամանակ 2011թ.-ին նախորդ տարվա համեմատ աղքատների թվաքանակը նվազել է մոտ 22 հազարով, շատ աղքատների թվաքանակը 43 հազարով, իսկ ծայրահեղ աղքատների թվաքանակը աճել է 23 հազարով:

Աղքատությունը 2011թ.-ին շատ չի տարբերվում ըստ քաղաքային (35.2%) և գյուղական բնակավայրերի (34.5%):

Սույն զեկույցում ներկայացվում է, ինչպես 2011թ.-ի, այնպես էլ 2008թ.-ի Հայաստանի աղքատության պատկերը: Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությամբ 2008-2011թթ.-ի համար օգտագործվել է սպառման ազդեցատի և աղքատության գծերի գնահատման ավելի ճշգրտված (ըստ ավելի մանրամասնեցված տարրերի և աղքատության **եռաստիճան** մակարդակների գնահատման) մեթոդաբանությունը:

3.2. Աղքատության ցուցանիշներն ու դրանց միտումները

Աղքատության միտումները: 2011թ.-ի ընթացքում Հայաստանում աղքատության մակարդակը կազմել է 35.0%, 2008թ.-ին արձանագրված 27.6%-ի դիմաց: Շատ աղքատների տեսակարար կշիռը 2011թ.-ին կազմել է 19.9%՝ 2008թ.-ին արձանագրված 12.6%-ի դիմաց: Իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը 2011թ.-ին կազմել է 3.7%՝ 2008թ.-ին արձանագրված 1.6%-ի դիմաց (Աղյուսակ 3.1):

2011թ.-ին 2008թ.-ի նկատմամբ առավել արագ ավելացել է ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 2.3 անգամ (կամ 2.1 տոկոսային կետով), շատ աղքատներինը՝ 1.6 անգամ (կամ 7.3 տոկոսային կետով), իսկ ընդհանուր աղքատության մակարդակը՝ 26.8 %-ով (կամ 7.4 տոկոսային կետով): Աղքատությունը 2011թ.-ին դարձել է ավելի խորը և սուր: 2011թ.-ին աղքատության խորությունը գնահատվել է 7.9%՝ 2008թ.-ի 5.1 %-ի համեմատ (աճը 1.5 անգամ), իսկ աղքատության սրությունը գնահատվել է 2.4 %՝ 2008թ.-ի 1.4 %-ի համեմատ (աճը 1.7 անգամ):

Աղքատության գծի նկատմամբ աղքատների համար անհրաժեշտ լրացուցիչ սպառման պակասությունը, արտահայտված %-ներով, կազմել է 22.5 %:

Աղքատության ցուցանիշները հաշվարկելու համար օգտագործվող աղքատության գծերը բերված են Աղյուսակ 3.3-ում: 2011թ.-ին աղքատության գիծը հաշվարկվել է օգտագործելով 2009թ.-ի փաստագրված նվազագույն պարենային զամբյուղը և գնահատված ոչ պարենային ապրանքների մասնաբաժինը:


Աղյուսակ 3.1. Հայաստան. Աղքատության հիմնական ցուցանիշները 2008- 2011թթ.-ին
(տոկոսներով)

	2008թ.			2010թ.			2011թ.					
	Ծայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Աղքատների %-ը ընդհանուր առկա բնակչության մեջ	Աղքատության խորություն	Աղքատության սրություն
Քաղաքային բնակավայրեր	1.9	13.0	27.6	4.1	21.1	35.7	4.6	21.3	35.2	64.8	8.4	2.7
<i>Երևան</i>	1.1	8.1	20.1	2.2	14.3	27.1	2.7	14.5	27.5	34.0	5.8	1.7
<i>Այլ քաղաքներ</i>	2.8	18.2	35.8	6.1	28.9	45.4	6.6	28.7	43.6	30.8	11.2	3.8
Գյուղական բնակավայրեր	1.2	11.9	27.5	1.1	21.5	36.0	2.2	17.5	34.5	35.2	6.9	2.0
Ընդամենը	1.6	12.6	27.6	3.0	21.3	35.8	3.7	19.9	35.0	100.0	7.9	2.4

Աղբյուրը: *SS4UL*՝ 2008-2011թթ.

Գծապատկեր 3.1. Հայաստան. Աղքատության ցուցանիշներն ըստ տարածաշրջանների 2008 և 2011թթ.

(տոկոսներով)



Աղբյուրը. *SSԿԱՀ 2008 և 2011թթ.*

Աղյուսակ 3.2. Հայաստան. Աղքատության ցուցանիշների դինամիկան 2004 և 2008-2011թթ.-ին (ըստ 2009թ.-ից կիրառվող մեթոդաբանության)

(տոկոսներով)

Տարիներ	Աղքատ	այդ թվում	որից	Ոչ աղքատ
		Շատ աղքատ	Ծայրահեղ աղքատ	
2004թ.	53.5	32.6	4.4	46.5
2008թ.	27.6	12.6	1.6	72.4
2009թ.	34.1	20.1	3.6	65.9
2010թ.	35.8	21.3	3.0	64.2
2011թ.	35.0	19.9	3.7	65.0

Աղբյուրը. *SSԿԱՀ 2004 և 2008-2011թթ.*

2004-2011թթ.-ի ընթացքում աղքատության մակարդակը նվազել է 34.6%-ով. մոտ 54 %-ից իջել է 35%-ի: Ծայրահեղ աղքատության մակարդակը նվազել է 16 տոկոսով, 2004թ.-ի 4.4 տոկոսի համեմատ և 2011թ.-ին կազմել է 3.7 %:

Հաշվի առնելով գնաճը ճշգրտվել են 2008 -2011թթ.-ի աղքատության գծերը¹:

Աղյուսակ 3.3. Հայաստան. Աղքատության գծերը և դրանց փոփոխությունը, 2008-2011թթ.-ին մեկ չափահաս անձի հաշվով, մեկ ամսվա համար

(դրամ)

Աղքատության գծերը	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Աղքատության պարենային կամ ծայրահեղ գիծ	17644	17483	19126	21306
Աղքատության ստորին ընդհանուր գիծ	24388	25217	27410	29856
Աղքատության վերին ընդհանուր գիծ	29903	30920	33517	36158

Աղբյուրը. *2008-2011թթ. SSԿԱՀ*

¹ Առավել մանրամասն տես՝ «Մեթոդաբանական պարզաբանումներ» մասը:

2011թ.-ին աղքատության ընդհանուր, վերին և ստորին, ինչպես նաև ծայրահեղ աղքատության գծերն արտահայտված մեկ չափահաս անձի հաշվով մեկ ամսվա համար գնահատվել են՝ համապատասխանաբար 36158 դրամ (կամ 97.1 ԱՄՆ դոլար), 29856 դրամ (կամ 80.2 ԱՄՆ դոլար) և 21306 դրամ (կամ 57.2 ԱՄՆ դոլար) :

SSԿԱՀ-ով փաստագրված աղքատության գիծը չպետք է շփոթել աղքատության նորմատիվային գծի հետ, որը մշակվում է ոչ թե վիճակագրական, այլ վարչարարական նպատակներով՝ ըստ առողջապահական և սոցիալական նվազագույն նորմատիվային պահանջների:

Պետք է նշել, որ Աղյուսակ 3.3-ում բերված աղքատության գծերի արժեքները հաշվարկված են SSԿԱՀ 2011թ.-ի տվյալներից ստացված միջին տարեկան հանրապետական գներով, որոնք ներառում են ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերի գները: Միևնույն ժամանակ Ներդիր 3.1-ում բերված նույն նվազագույն սպառողական զամբյուղը հաշվարկված է ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի կողմից տրամադրված գներով, որոնք իրենցից ներկայացնում են 2011թ.-ի միայն քաղաքային բնակավայրերում արձանագրված ընթացիկ գներ: Հիմնականում այս հանգամանքով է բացատրվում աղքատության գծի երկու տարբեր դրամական արժեքների առկայությունը:

Ներդիր 3.1.

Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2011թ.-ին, միջին ընթացիկ քաղաքային գներով, մեկ շնչի հաշվով, ամսական կտրվածքով (հաշվարկված Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ՝ ըստ 2009թ.-ի ՀՀ ԱՎԾ կողմից, 7872 տնային տնտեսություններում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների, փաստացի սպառման հիման վրա) (դրամներով)

	Պարենամթերքի անվանումը	Օրական փաստացի սպառումը 1շնչի հաշվով, գրամ	Օրական էներգետիկան 1շնչի հաշվով, կկալ	Մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 շնչի հաշվով, դրամ	Մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 մեծահասակի հաշվով, դրամ
1.	Հացամթերք	461.1	1355.0	6805.2	7578.2
2.	Մսամթերք	48.3	87.6	2521.9	2808.3
3.	Զկնամթերք	2.5	2.4	523.3	582.7
4.	Կաթնամթերք		144.3	2749.7	3062.1
5.	Ձու	18.6	27.2	671.8	748.1
6.	Յուղ և ճարպ	30.5	229.9	1137.9	1267.1
7.	Միրգ	113.9	47.7	1964.1	2187.2
8.	Բանջարեղեն	203.7	76.0	4262.3	4746.4
9.	Կարտոֆիլ	145.6	109.2	1182.1	1316.4
10.	Շաքար	24.4	94.4	310.0	345.2
11.	Ոչ ալկոհոլային խմիչքներ	4.2	1.1	20.8	23.2
12.	Այլ սննդամթերք	35.6	57.2	1476.1	1643.8
	Ընդամենը		2232.0	23625.2	26308.7

Պարենային զամբյուղի ամսական արժեքը 23625.2 դրամ 26308.7 դրամ
 Նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքը 41816.6 դրամ 46566.4 դրամ
 (1.77 գործակից)

Աղքատության խորության 7.9% գնահատականը ցույց է տալիս, որ եթե երկիրը հնարավորություն ունենար յուրաքանչյուր անհատի հաշվով (և աղքատ, և ոչ աղքատ)

համախմբելու աղքատության գծի 7.9%-ին համարժեք ռեսուրսներ, և եթե այդ ռեսուրսները հատկացվեին աղքատներին, ապա աղքատությունը տեսականորեն կվերանար, ենթադրելով, որ աղքատներին ուղղված աջակցությունն ամբողջությամբ հատկացվում է աղքատներին: Եթե աղքատության խորությունը հաշվարկվում է միայն աղքատ բնակչության հաշվով, ապա այն ցույց է տալիս աղքատության պակասուրդը, այսինքն՝ թե որքանով է աղքատների միջին եկամուտը (կամ սպառումը) ցածր աղքատության գծից:

Աղքատության սրությունը ցույց է տալիս աղքատների միջև եղած անհավասարությունը: Այն հաշվի է առնում, որ որոշ աղքատների սպառումը շատ է հեռու աղքատության գծից, իսկ որոշ աղքատներինը՝ շատ մոտ: 2011թ.-ին աղքատության սրությունը եղել է 2.4%:

Աղքատության աճը պայմանավորող գործոնները: 2008-2011թթ.-ին Հայաստանում աղքատության մակարդակի աճը պայմանավորող առավել կարևոր գործոնը 2009թ.-ի տնտեսության խոր անկումն էր՝ 14.1%: Հայաստանի տնտեսությունը 2010թ.-ին մի փոքր աճեց նախորդ տարվա նկատմամբ, սակայն աճը կազմեց միայն 2.2%, իսկ 2011թ.-ին 2010թ.-ի նկատմամբ արդեն 4.7%: Տնտեսության խոր անկումը զուգորդվելով բնակչության եկամուտների ավելացող անհավասարության հետ, նպաստել է բնակչության սպառման նվազմանը: Ինչպես բացահայտում են 2011թ.-ի ՏՏԿԱՀ տվյալները, ողջ բնակչության միջին ամսական իրական սպառումը 2008թ.-ի համեմատ նվազել է 6.1%-ով: Նվազումը նկատվել է սպառման բոլոր քվինտիլներում:

Ներդիր 3.2.

Աղքատության միտումները Հայաստանում 2004-2011թթ.-ին ըստ հին (աղքատության երկաստիճան մակարդակի) մեթոդաբանության

Գայուն զարգացման ծրագրում և այլ փաստաթղթերում կիրառվող աղքատության մակարդակի ցուցանիշները գնահատվել են ըստ ՀՀ ԱՎԾ-ի կողմից 2004-2008թթ.-ին կիրառվող մեթոդաբանության: Ինչպես արդեն պարզաբանվել է, այդ մեթոդաբանությունը վերանայվել է և արդեն 2009թ.-ից կիրառվում է աղքատության մակարդակի գնահատման նոր մեթոդաբանությունը: Վերանայվել և ձևավորվել են աղքատության նոր գծերը (տե՛ս <<Մեթոդաբանական պարզաբանումներ>>): Նշված ցուցանիշների մոնիթորինգի նպատակով ՀՀ ԱՎԾ-ն կշարունակի հաշվարկել աղքատության ցուցանիշներն ըստ հին մեթոդաբանության ևս: Այսպիսով, ըստ հին մեթոդաբանության, գնահատված աղքատության գծերը և աղքատության մակարդակի ցուցանիշները ներկայացված են ստորև, աղյուսակներում:

Աղյուսակ 1: Հայաստան. Աղքատության գծերը և դրանց փոփոխությունը, 2004-2011թթ.-ին մեկ չափահաս անձի հաշվով, մեկ ամսվա համար (դրամ)

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Ծայրահեղ (պարենային) աղքատության գիծ	12467	13266	14300	15753	17232	17141	20203	21623
Աղքատության ընդհանուր գիծ	19373	20289	21555	23168	25188	25877	29332	31017

Աղբյուրը. 2004-2011թթ. ՏՏԿԱՀ

Աղյուսակ 2: Հայաստան. Աղքատության հիմնական ցուցանիշների դինամիկան Հայաստանում 2004-2011թթ.-ին ըստ հին մեթոդաբանության

(տոկոսներով)

Տարիներ	Աղքատության մակարդակը					Աղքատության խորություն	Աղքատության սրություն
	Ընդամենը	Քաղաքային բնակավայր	ք. Երևան	Այլ քաղաքային բնակավայր	Գյուղական բնակավայր		
Ծայրահեղ աղքատներ							
2004	6.4	7.5	6.1	9.2	4.4	X	X
2005	4.6	5.3	3.6	7.2	3.2	X	X
2006	4.1	5.0	3.5	6.6	2.4	X	X
2007	3.8	4.6	3.2	6.1	2.3	X	X
2008	3.1	3.9	3.2	4.6	1.7	X	X
2009	5.2	6.1	3.7	8.8	3.4	X	X
2010	5.3	6.6	4.3	9.1	2.9	X	X
2011	5.2	6.5	4.0	9.3	2.7	X	X
Աղքատներ							
2004	34.6	36.4	29.2	43.9	31.7	7.4	2.4
2005	29.8	30.7	23.9	37.8	28.3	5.4	1.6
2006	26.5	28.2	21.0	35.8	23.4	3.8	1.1
2007	25.0	24.7	20.0	29.8	25.5	4.9	1.5
2008	23.5	23.8	19.7	28.3	22.9	3.1	0.8
2009	28.7	28.4	22.0	35.5	29.1	4.2	1.2
2010	28.9	29.2	22.0	37.3	28.4	4.6	1.3
2011	25.4	27.1	20.2	34.7	22.2	4.8	1.4

Աղբյուրը. SSԿԱՀ 2004-2011թթ.

Նշում. ՀՀ ԱՎԾ-ի կողմից 2004-2008թթ.-ին կիրառվող մեթոդաբանությունն ուներ հետևյալ առանձնահատկությունները. (i) հիմնված էր սպառման ագրեգատի ավելի ընդարձակ հաշվարկման վրա, քանի որ սպառման ագրեգատը, ի լրումն ստանդարտ պարենային և ոչ պարենային բաղադրիչների, ներառում էր նաև երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը, այն է՝ տնային տնտեսության կողմից տնօրինվող երկարատև օգտագործման ապրանքներից ստացվող ծառայությունների արժեքը, (ii) սպառման ագրեգացված ցուցանիշը ճշգրտվել էր՝ հաշվի առնելով չափահասների և երեխաների սպառման միջև առկա տարբերություններն, ինչպես նաև ճշգրտվել էր տնային տնտեսության ծախսերը՝ տնտեսության անդամների միջև հավասարապես բաշխման միջոցով: Այսպիսով, գնահատվել է մեկ չափահաս անձի հաշվով համարժեք սպառումը՝ մինչև 2004թ.-ը կիրառվող մեկ շնչի հաշվով սպառման գնահատման մոտեցման փոխարեն, և (iii) 2004թ.-ի SSԿԱՀ արդյունքների հիման վրա ձևավորվեց նվազագույն պարենային զամբյուղը: 2004թ.-ի նվազագույն սպառողական զամբյուղն օգտագործվեց գնահատելու 2004թ.-ի ծայրահեղ (պարենային) աղքատության գիծը, որը կիրառվեց հաջորդ տարիների համար աղքատության մակարդակի գնահատման նպատակով և ճշգրտվեց միայն գնաձևի մակարդակը հաշվի առնելով:

Հին (2004թ.-ից-2008թ.-ը) մեթոդաբանությամբ ստացված արդյունքները (միտումները) երկրի մակարդակով համահունչ են 2011թ.-ին վերանայված մեթոդաբանությամբ ստացված արդյունքների հետ. այսպես 2011 թ.-ին, թե՛ աղքատ, և թե՛ ծայրահեղ աղքատ բնակչության համամասնությունները, նաև աղքատության խորությունն ու սրությունն արտահայտող ցուցանիշները, երկրի մակարդակով աճել են 2008 թ.-ի համեմատ: Երևան քաղաքում 2011թ.-ին գրանցվել է աղքատության ամենացածր, իսկ Երևանից դուրս այլ քաղաքային բնակավայրերում՝ ամենաբարձր մակարդակ: Աղքատության ընդհանուր մակարդակի տարբերությունը՝ քաղաք-գյուղ կտրվածքով, տարբերվում է: Ըստ հին մեթոդաբանության 2011թ.-ին քաղաքային աղքատությունը գերազանցում է գյուղական աղքատությանը 4.9 տոկոսային կետով, իսկ վերանայված մեթոդաբանությամբ՝ 0.7 տոկոսային կետով: Ծայրահեղ աղքատության մակարդակի տարբերությունը հին և վերանայված մեթոդաբանությամբ՝ քաղաք-գյուղ կտրվածքով, համահունչ է, և աճել է՝ հին մեթոդաբանությամբ 3.8, նորով՝ 2.4 տոկոսային կետով:

Աղքատությունն ըստ բնակավայրերի. 2008-2011թթ.-ին աղքատության մակարդակի աճը քաղաքային բնակավայրերում ավելի արագ էր ընթանում, քան գյուղական բնակավայրերում (7.6 տոկոսային կետ՝ 7.0 տոկոսային կետի դիմաց): Մայրաքաղաք

Երևանում աղքատության մակարդակն ամենացածրն է երկրում (27.5%) ըստ տարածաշրջանների և այն ավելի քիչ է տուժել գլոբալ տնտեսական ճգնաժամից, քան Երևանից դուրս, այլ քաղաքային բնակավայրերը: 2008թ.-ի համեմատ աղքատության աճը 2011 թ.-ին Երևանում կազմել է 7.4 տոկոսային կետ, Երևանից դուրս, այլ քաղաքային բնակավայրերում՝ 7.8 տոկոսային կետ: Երբ բնակչության կենսամակարդակը դիտարկվում է ըստ քաղաք-գյուղ բաշխվածության, աղքատների մեծ մասը (64.8%) քաղաքաբնակներ են (Աղյուսակ 3.1):

2011թ.-ին Երևանում գրանցվել են շատ աղքատների մակարդակի ամենացածր, իսկ Երևանից դուրս այլ քաղաքներում՝ ամենաբարձր ցուցանիշները (14.5% և 28.7%, համապատասխանաբար):

Երբ բնակչության ծայրահեղ աղքատությունը դիտարկվում է ըստ քաղաք-գյուղ բաշխվածության, ծայրահեղ աղքատների մեծ մասը (80%) քաղաքաբնակներ են: Նման ցուցանիշները ցույց են տալիս, որ բնամթերային գյուղատնտեսությունը կարևոր դեր ունի մարդկանց ծայրահեղ աղքատությունից դուրս բերելու գործում: Սակայն, հարկ է նշել, որ գյուղաբնակ աղքատները հիմնականում զբաղված են գյուղատնտեսական գործունեությամբ, իսկ ոչ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղված է նրանց միայն շատ չնչին մասը: Մինչդեռ, զբաղվածությունը ոչ գյուղատնտեսական հատվածում, ըստ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում իրականացված մի շարք ուսումնասիրությունների հիման վրա ստացված փաստացի տվյալների (Ալամ և ուրիշներ, 2005թ.), միջին հաշվով առավել եկամտաբեր է, քան ցանկացած տեսակի գյուղատնտեսական գործունեություն և կարող է լինել գյուղաբնակ աղքատների համար եկամուտների ավելացման, և հետևաբար, գյուղական աղքատության կրճատումը պայմանավորող հիմնական գործոն:

Աղքատությունը ՀՀ մարզերում և ք. Երևանում: Հայաստանն ըստ վարչական բաժանման ներառում է 10 մարզ և ք.Երևանը: Աղյուսակ 3.4-ում ներկայացված են աղքատության հիմնական ցուցանիշները 2011թ.-ին և աղքատության ցուցանիշների դինամիկան 2008-2011թթ.-ին՝ ըստ մարզերի և ք.Երևանի: 2008-2011թթ.-ին ՀՀ ԱՎԾ-ի կողմից իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություններն ապահովում են մարզային և ք.Երևանի կտրվածքով նվազագույն ներկայացուցչականություն: Քանի որ աղքատության մակարդակի ցուցանիշներն ունեն նվազագույն ներկայացուցչականություն, ապա դրանք պետք է դիտարկվեն հաշվի առնելով ստանդարտ սխալները և վստահության միջակայքը:

2011թ.-ին աղքատության մակարդակի տարբերությունն ըստ մարզերի և ք.Երևանի՝ միջին հանրապետական մակարդակի համեմատ տատանվում է: Միջին հանրապետականից բարձր են ՀՀ Շիրակի, Կոտայքի, Լոռու, Արարատի, Գեղարքունիքի, և Արմավիրի մարզերի ցուցանիշները: ՀՀ Շիրակի մարզը իր բարձր աշխարհագրական դիրքով և 1988թ.-ի ավերիչ երկրաշարժից առավել տուժած բնակավայրերով, շարունակում է մնալ ՀՀ ամենաաղքատ տարածաշրջանը, որտեղ աղքատության զձից ցածր է բնակչության 47.7%-ը:

2008-2011թթ.-ին աղքատության մակարդակի ցուցանիշներն աճել են բոլոր մարզերում և ք.Երևանում, այդուհանդերձ, ավելի արագ տեմպերով այդ ցուցանիշի աճ գրանցվել է Արմավիրի մարզում՝ 1.5 անգամ, Վայոց Ձորում՝ 1.4 անգամ, ք. Երևանում, Լոռու և Սյունիքի մարզերում՝ 1.3 անգամ:

Միևնույն ժամանակաշրջանում զգալի տեմպերով աճել է նաև ծայրահեղ աղքատության մակարդակը բոլոր մարզերում (բացի Սյունիքի և Վայոց Ձոր մարզերի),

սակայն այն առավել նկատելի է Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի մարզերում և ք.Երևանում:

Աղյուսակ 3.4. Հայաստան. Աղքատության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի և ք. Երևանի, 2008 և 2011թթ.

{95% վստահության միջակայք ձևավոր փակագծերով}

(տոկոսներով)

	2008		2011			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատների մեջ	%-ն ընդհանուր առկա բնակչության մեջ
ք.Երևան	1.1 {0.3;1.9}	20.1 {17.3;22.9}	2.7 {1.4;4.0}	27.5 {23.5;31.5}	26.7	34
Արագածոտն	0.5 {-0.3;1.3}	20.3 {13.9;26.7}	1.1 {0.0;2.3}	20.7 {12.3;29.1}	2.2	3.8
Արարատ	1.6 {0.2;3.0}	31.3 {25.5;37.1}	2.5 {1.0;4.1}	39.3 {32.0;46.5}	9.3	8.3
Արմավիր	0.7 {0.1;1.3}	24.5 {19.7;29.3}	5.6 {2.7;8.6}	37 {29.8;44.3}	9.3	8.8
Գեղարքունիք	0.4 {0.2;0.6}	32 {25.8;38.2}	1.5 {-0.4;3.4}	37 {28.4;45.7}	6.5	6.1
Լոռի	2.8 {1.2;4.4}	34.2 {29.2;39.2}	4.7 {2.3;7.2}	45.4 {38.5;52.3}	12.3	9.4
Կոտայք	2.1 {0.7;3.5}	39.5 {34.7;44.3}	7.1 {3.4;10.8}	45.5 {38.5;52.5}	13.3	10.2
Շիրակ	4.6 {2.0;7.2}	42.4 {37.2;47.6}	7 {3.7;10.2}	47.7 {41.1;54.4}	12.2	8.9
Սյունիք	1.3 {0.5;2.1}	20.3 {14.3;26.3}	1.1 {-0.7;2.8}	26.8 {20.0;33.5}	3.2	4.2
Վայոց Ձոր	1.9 {0.1;3.7}	21.1 {14.9;27.3}	1.5 {0.03.0}	29.9 {20.3;39.4}	1.6	1.8
Տավուշ	1.7 {0.3;3.1}	23.2 {18.0;28.4}	2 {-0.4;4.5}	26.7 {20.0;33.4}	3.4	4.5
Ընդամենը	1.6 {1.2;2.0}	27.6 {26.0;29.2}	3.7 {2.9;4.5}	35 {32.7;37.2}	100	100

Աղբյուրը. 2008 և 2011թ. ՏՏԿԱՀ

Այսուհետև, որպես աղքատության մակարդակ, գեկույցում կներկայացվի աղքատության վերին մակարդակի ցուցանիշը, իսկ որպես ծայրահեղ աղքատության մակարդակ՝ աղքատության պարենային գծից ցածր սպառում ունեցող բնակչության մասնաբաժինը:

Աղքատության մակարդակի զգայունությունն աղքատության գծի փոփոխության նկատմամբ. Ծայրահեղ աղքատության մակարդակի փոփոխությունն առավել զգայուն է աղքատության գծի փոփոխության նկատմամբ, քան ընդհանուր աղքատության մակարդակը, որը վկայում է այն մասին, որ բնակչության կենտրոնացումն աղքատության ծայրահեղ գծի շուրջ ավելին է, քան ընդհանուր աղքատության գծի շուրջ: Աղյուսակ 3.5-ում ներկայացված է

աղքատության մակարդակն ըստ աղքատության գծի փոփոխության: Եթե աղքատության գիծն ավելանա 5%-ով, ապա ծայրահեղ աղքատությունը կաճի 46%-ով, իսկ ընդհանուր աղքատությունը՝ 23%-ով: Աղքատության մակարդակի փոփոխությունները վիճակագրականորեն նշանակալի են (1% նշանակալիության մակարդակի դեպքում), երբ աղքատության գիծը նվազեցվում կամ բարձրացվում է՝ 5, 10 և 20 %-ով:

Աղյուսակ 3.5. Հայաստան. Աղքատության մակարդակի փոփոխություններն ըստ աղքատության գծի փոփոխության, 2011թ.

(տոկոսներով)

Աղքատության գծի փոփոխություններ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ
Անփոփոխ, 0%	3.7	35.0
+5%	5.4	43.1
-5%	2.7	32.1
+10%	6.9	48.1
-10%	1.8	27.4
+20%	10.7	53.9
-20%	0.7	17.7

Աղբյուրը. *SSՀԱՀ 2011թ.*

Աղքատությունն ըստ սպառման և եկամտի ցուցանիշների. Աղյուսակ 3.6-ում ներկայացված է Հայաստանում 2008-2011թթ.-ի աղքատության՝ ըստ սպառման և եկամտի ցուցանիշների համեմատությունը: Ինչպես և սպասվում էր, եկամտի ցուցանիշների հիման վրա գնահատված աղքատության մակարդակի գնահատականներն ավելի բարձր են, քան սպառման, որպես բարեկեցության աստիճանի գնահատման հիման վրա ստացված, արդյունքները: Այդ տարբերությունը հիմնականում բացատրվում է սպառման բաշխման համեմատ եկամուտների բաշխման առավել բարձր անհավասարությամբ (տես Աղյուսակ 3.17):

Աղյուսակ 3.6. Հայաստան: Աղքատությունն ըստ սպառման և եկամտի ցուցանիշների, 2008-2011թթ.-ին

	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Սպառումը մեկ չափահասին համարժեք (ամսական), դրամ, 2008թ.-ի միջին հանրապետական գներով	42870.2	40250.2	39459.8	40262.0
Եկամուտը, մեկ չափահասին համարժեք, (ամսական), դրամ, 2008թ.-ի միջին հանրապետական գներով	42484.4	43824.7	44887.2	45936.7
Եկամուտ/սպառում հարաբերությունը	1.0	1.1	1.1	1.1
Սպառման ցուցանիշով աղքատներ, (տոկոսներով)				
Ծայրահեղ աղքատներ	1.6	3.6	3.0	3.7
Աղքատներ	27.6	34.1	35.8	35.0
Եկամտի ցուցանիշով աղքատներ, (տոկոսներով)				
Ծայրահեղ աղքատներ	12.1	12.2	12.1	13.2
Աղքատներ	38.1	38.2	38.4	37.1

Աղբյուրը. *SSՀԱՀ 2008-2011թթ.*


Նշում. Եկամուտը հաշվարկվել է որպես ընդամենը տնօրինվող եկամուտ և ներառում է դրամական եկամուտները, բնամթերային տեսքով սպառման դրամային արժեքը և խնայողություններից օգտագործված միջոցները:

Դիտարկելով աղքատության սպառման և եկամտի ցուցանիշների համընկնումը (խաչաձևումը) 2011թ.-ին, ակնհայտ է դառնում, որ անհատների մի մեծ խումբ, որոնք եկամտի ցուցանիշով գտնվում են աղքատության գծից ցածր, սպառման ցուցանիշով բարձր են աղքատության գծից: Միայն եկամտի ցուցանիշով ծայրահեղ աղքատների 11 %-ը և աղքատների 49%-ն է սպառման ցուցանիշով գնահատվել նույնպես ծայրահեղ աղքատ և աղքատ: Հակառակ պատկերն է ստացվել սպառման ցուցանիշով աղքատ և ծայրահեղ աղքատներին դիտարկելիս: Նրանց մոտավորապես 44%-ն աղքատ է գնահատվել նաև եկամտի ցուցանիշով: Սպառման ցուցանիշով ծայրահեղ աղքատների ավելի քան կեսը (56%)՝ եկամտի ցուցանիշով նույնպես ծայրահեղ աղքատ է:

2011թ.-ին մեկ չափահասին համարժեք միջին ամսական եկամուտը, գերազանցել է սպառումը 13.8%-ով, այն դեպքում, երբ 2008թ.-ին միջին ամսական եկամուտն ավելի փոքր էր սպառումից 0.9%-ով:

Գծապատկեր 3.2. Հայաստան. Աղքատության մակարդակն ըստ սպառման և եկամտի ցուցանիշների, 2008 և 2011թթ.

(տոկոսներով)



Աղբյուրը. SSYULZ 2008 և 2011թթ.

Որքան կարժենա աղքատության հաղթահարումը 2011թ.-ին. Աղքատության հաղթահարման համար Հայաստանին անհրաժեշտ է 111.5 մլրդ. դրամ կամ ՀՆԱ-ի 3 % կազմող գումար՝ ի լրումն սոցիալական աջակցության համար արդեն իսկ հատկացված միջոցների, ենթադրելով, որ սոցիալական աջակցությունը բարձր հասցեականությամբ կտրամադրվի միայն աղքատներին (Աղյուսակ 3.7):

Ծայրահեղ աղքատության վերացումը կպահանջի 3.9 մլրդ.դրամ կամ ՀՆԱ-ի 0.1 %-ը, ի հավելումն ծայրահեղ աղքատներին արդեն իսկ ուղղված սոցիալական աջակցության և ապահովելով բարձր հասցեականություն:

Միջազգային փորձը վկայում է, որ սոցիալական աջակցության տրամադրման անթերի հասցեականություն ապահովելը շատ անհավանական է, ուստի աղքատության հաղթահարման համար պահանջվող փաստացի միջոցներն իրականում շատ ավելին են:

Բարձր հասցեականություն ապահովելու նպատակով պահանջվող ռեսուրսների համեմատ, ազատական տնտեսակարգով երկրներում, աղքատության հաղթահարման համար պահանջվող նվազագույն ռեսուրսները հարկ է առնվազն կրկնապատկել:

Աղյուսակ 3.7. Հայաստան. Աղքատության հաղթահարման դրամական արժեքը, 2011թ.

	2011թ.	
	ծայրահեղ աղքատ	աղքատ
Աղքատների միջին սպառումը (դրամ, մեկ չափահասին համարժեք, ամսական)	18619	28038
Աղքատության գիծ (դրամ, մեկ չափահասին համարժեք, ամսական)	21306	36158
Աղքատներին պահանջվող լրացուցիչ սպառում (դրամ, ամսական)	2687	8120
Պակասուրդը՝ աղքատների համար անհրաժեշտ լրացուցիչ սպառում աղքատության գծի նկատմամբ, (տոկոսներով)	12.6	22.5
ՀՆԱ (մլրդ. դրամ)	3776.4	3776.4
Անհրաժեշտ բյուջե (մլրդ. դրամ)	3.9*	111.5*
Անհրաժեշտ բյուջեն որպես տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ	0.1	3.0

Աղբյուրը. ՀՀ ՄՎԾ և ՏՏԿԱՀ 2011թ.

*Հաշվարկվում է բազմապատկելով մշտական բնակչության միջին տարեկան թվաքանակն աղքատության մակարդակով և աղքատներին պահանջվող լրացուցիչ տարեկան (աղյուսակ 3.7-ում բերված է ամսական պահանջվող լրացուցիչ սպառումը) սպառման մեծությամբ:

3.3. Աղքատության և տնտեսության աճի/անկման փոխկապակցվածությունը

Ընդհանուր առմամբ, աղքատության մակարդակի փոփոխությունը պայմանավորված է կենսամակարդակը գնահատող սպառման ազդեցատի փոփոխությամբ և վերջինիս բաշխվածության անհավասարության աստիճանով: Համաձայն Դատտի և Ռավալիոնիի (1992թ.) կողմից մշակված մեթոդաբանության, Հայաստանում աղքատության մակարդակի փոփոխությունը պայմանավորված է երկու բաղադրիչների՝ սպառման և վերջինիս բաշխվածության անհավասարության փոփոխությամբ: Առաջին բաղադրիչը՝ սպառման փոփոխությունը, ցույց է տալիս, թե ինչպիսին կլինեն սպառման փոփոխության ազդեցությունն աղքատության մակարդակի վրա, եթե բաշխվածության անհավասարությունը մնար անփոփոխ, իսկ երկրորդ բաղադրիչը՝ սպառման վերաբաշխման ցուցանիշը, ցույց է տալիս, թե ինչպիսին կլինեն վերաբաշխման ազդեցությունն աղքատության վրա, եթե սպառումը մնար անփոփոխ: Ինչպես վկայում են վերլուծության արդյունքները, 2008-2011թթ.-ի միջև դիտարկվող աղքատության մակարդակի ավելացումը հիմնականում պայմանավորված է կենսամակարդակի անկումով, որը գնահատվում է մեկ չափահաս անձին համարժեք սպառման ցուցանիշով:

2008-2011թթ.-ի ընթացքում Հայաստանում աղքատության ընդհանուր մակարդակի 7.38 տոկոսային կետով աճը պայմանավորված է ն՝ սպառման, ն՝ վերաբաշխման բաղադրիչների ներգործությամբ: Այսպես, եթե առաջին բաղադրիչը՝ սպառման միջին մակարդակի անկումը, հանգեցրել է աղքատության մակարդակի 5.34 տոկոսային կետով աճի, ապա երկրորդ բաղադրիչը՝ վերաբաշխման հիմքում ընկած անհավասարության ցուցանիշը, հանգեցրել է աղքատության մակարդակի 2.04 տոկոսային կետով աճի:

Այսպիսով, երկու բաղադրիչներն համատեղ առաջացրել են աղքատության մակարդակի բարձրացում (տես Աղյուսակ A.3.7):

Աղյուսակ 3.8. Հայաստան. Սպառման աճի տարեկան տեմպերն ըստ բնակավայրերի, 2008 -2011թթ.

(տոկոսներով)

Տարեկան անկման տեմպերը	Ընդամենը	Ք.Երևան	Այլ քաղաքներ	Գյուղական բնակավայրեր
Աճի միջին տեմպերը (սովորական անկման տեմպը)	-1.0	1.8	-2.7	-3.2
Միջին տոկոսային աճի տեմպը	-1.8	-0.1	-3.0	-4.3
Ամենացածր քվինտիլի աճի միջին տեմպը	-0.1	0.0	-0.2	0.0
Աճի միջին տեմպերը P(0) համար, ծայրահեղ աղքատության գիծ	-1.6	-0.9	-3.2	-1.1
Աճի միջին տեմպերը P(0) համար, աղքատության ընդհանուր գիծ	-2.3	-2.4	-3.0	-1.5

Աղբյուրը. *SSՀԱՀ 2008- 2011թթ.*

Նշում. Աճի տեմպերը վերաբերում են սպառման աճին: P(0)-ն նշանակում է աղքատության մակարդակ (Ֆոստեր, Գրիին և Տորբեկե, 1984թ.):


Տնտեսական աճը Հայաստանում կարելի է գնահատել ըստ տարբեր բաղադրիչների միջին սպառման աճի (Ռավալիոնի և Չեն 2002թ.): Աղյուսակ 3.8-ը ցույց է տալիս, որ աղքատ բնակչության սպառումն ավելի արագ տեմպերով է նվազել, քան ընդհանուր սպառումը (տարեկան -2.3% և -1.0%, համապատասխանաբար): Իսկ ծայրահեղ աղքատների սպառումը նվազել է ավելի դանդաղ տեմպերով՝ աղքատների նկատմամբ (տարեկան -1.6 % և -2.3%, համապատասխանաբար): Այդուհանդերձ, 2011թ.-ին 2008թ.-ի նկատմամբ աղքատության մակարդակն աճել է 7.4 տոկոսային կետով, այն դեպքում, երբ ծայրահեղ աղքատության մակարդակն աճել է 2.1 տոկոսային կետով:

Տարածաշրջանային կտրվածքով դիտարկելիս, ք. Երևանում և Երևանից դուրս այլ քաղաքներում (Աղյուսակ 3.8) աղքատների սպառումը 2008-2011թթ. նվազել է ավելի բարձր տեմպով, քան ընդհանուր սպառումը (համապատասխանաբար՝ -2.4 % և -3.0%՝ տարեկան -2.3 %-ի դիմաց): Գյուղական բնակավայրերում աղքատների սպառումը 2008-2011թթ.-ին նվազել է ավելի ցածր տեմպով, քան ընդհանուր սպառումը (համապատասխանաբար՝ -1.5%՝ տարեկան -2.3 %-ի դիմաց):

Ինչպես ներկայացված է ստորև, բերված աճի կորերի միջոցով, ազգային մակարդակով, տնտեսական անկումից չի տուժել միայն ամենահարուստներից՝ 10-րդ դեցիլի բնակչությունը, իսկ ամենաշատը տուժել է ամենաաղքատ առաջին դեցիլի բնակչությունը (Գծապատկերներ 3.3-3.6):


Ճգնաժամից ամենից շատ տուժել է ք. Երևանի, այլ քաղաքային և գյուղական բնակավայրերում ամենաաղքատ առաջին, ինչպես նաև հինգերորդ դեցիլային խմբերը, իսկ ամենահարուստ 10-րդ դեցիլային խումբն ամենաշատն է շահել ճգնաժամից՝ ք. Երևանում և այլ քաղաքային բնակավայրերում:

Գծապատկեր 3.3. Հայաստան. Սպառման աճի կորը , 2008-2011 թթ.




Աղբյուրը. *SSYUL* 2008- 2011 թթ.

Գծապատկեր 3.4. Հայաստան. Սպառման աճի կորը ք.Երևանում, 2008-2011 թթ.




Աղբյուրը. *SSYUL* 2008- 2011 թթ.

Գծապատկեր 3.5. Հայաստան. Սպառման աճի կորը այլ քաղաքային բնակավայրերում, 2008-2011թթ.



Աղբյուրը. *SSYԱՀ 2008- 2011թթ*

Գծապատկեր 3.6. Հայաստան. Սպառման աճի կորը գյուղական բնակավայրերում, 2008-2011թթ.



Աղբյուրը. *SSYԱՀ 2008- 2011թթ.*

3.4. Աղքատության կառուցվածքային պատկերը և դրա փոփոխությունը 2008-2011թթ. -ին

Դիտարկվող ժամանակաշրջանում աղքատության կառուցվածքային պատկերն էապես չի փոփոխվել.

- (ա) Աղքատության մակարդակի տարբերությունն ըստ սեռի նշանակալի չէ և՛ 2008, և՛ 2011թթ.-ին (Աղյուսակ 3.9):
- (բ) Մինչև հինգ տարեկան, 6-9 տարեկան, 10-14 տարեկան, ինչպես նաև 15-17 տարեկան երեխաների շրջանում, աղքատության մակարդակն ավելի բարձր է այլ տարիքային խմբերի համեմատ: 60-64 տարիքային խմբում 2011թ.-ին աղքատության մակարդակն ամենացածրն է:

Աղյուսակ 3.9. Հայաստան. Աղքատության ցուցանիշներն ըստ սեռի և տարիքային խմբերի, 2008 և 2011թթ.-ին

(տոկոսներով)

Սեռը և տարիքային խմբեր	2008թ.		2011թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատ բնակչության մեջ	%-ն ընդհանուր բնակչության մեջ
Սեռը						
Կանայք	1.7	27.3	3.7	34.5	46.0	45.4
Տղամարդիկ	1.6	27.8	3.7	35.5	54.0	54.6
Տարիքային խմբեր						
Երեխաներ 0-5	1.9	32.0	4.4	45.3	10.2	7.9
6-9 տարեկան	1.8	30.3	4.7	42.2	4.1	3.4
10-14	1.5	29.7	4.5	39.1	6.8	6.1
15-17	2.3	32.4	4.7	40.1	4.8	4.2
18-19	0.7	26.1	5.3	33.7	2.8	2.9
20-24	1.3	26.0	3.4	33.6	8.8	9.1
25-29	2.1	27.0	3.7	37.1	8.6	8.1
30-34	1.1	25.7	4.1	38.8	7.2	6.5
35-39	1.9	27.6	4.5	36.2	6.2	6.0
40-44	1.9	29.3	3.8	34.8	5.6	5.6
45-49	1.9	25.7	3.0	30.3	6.4	7.4
50-54	1.2	22.2	3.2	29.5	7.0	8.3
55-59	0.7	21.7	3.4	32.5	6.1	6.5
60-64	1.3	24.8	1.6	27.5	3.9	4.9
65+	2.0	29.5	2.8	30.8	11.5	13.1
Ընդամենը	1.6	27.5	3.7	35.0	100	100

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2008 և 2011թթ.

- (զ) Բազմանդամ և երեխաներ ունեցող տնային տնտեսությունների շրջանում աղքատ լինելու հավանականությունն ավելի մեծ է: Աղքատության

հարաբերական ռիսկն աճում է տնային տնտեսության չափին զուգահեռ (Աղյուսակ 3.10): Բազմանդամ ընտանիքներում կախվածության գործակիցը հանդիսանում է աղքատությունը բացատրող կարևորագույն գործոն: Բազմանդամ տնային տնտեսություններն ունեն ավելի շատ երեխաներ, ուստի և փոքր տնային տնտեսությունների համեմատ՝ եկամուտ ստացողների ավելի ցածր մասնաբաժին, որն էլ հանգեցնում է նրանց սպառման ցածր մակարդակի:

Աղյուսակ 3.10. Հայաստան. Աղքատության մակարդակն ըստ տնային տնտեսության չափի, 2008 և 2011թթ.-ին

(տոկոսներով)

Տնային տնտեսության չափը	2008թ.		2011թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատ բնակչության մեջ	%-ն ընդհանուր բնակչության մեջ
Տնային տնտեսության անդամների թվաքանակը						
1	0.9	17.2	1.2	10.7	1.1	3.6
2	0.8	19.0	1.0	17.0	5.1	10.6
3	1.0	18.8	1.0	21.2	8.2	13.5
4	0.9	23.6	2.1	31.6	19.2	21.2
5	1.9	30.3	3.8	39.4	24.7	21.9
6	2.8	34.7	5.9	45.2	21.2	16.4
7 և ավելի	2.4	38.2	9.2	55.8	20.5	12.8
Ընդամենը	1.6	27.6	3.7	35.0	100	100

Աղբյուրը. *SSYUՀ 2008 և 2011թթ.*

(դ) Հայաստանում երեխայի առկայությունն ավելացնում է աղքատության մակարդակը (Աղյուսակ 3.11): Երեք և ավելի (0-5 տարեկան) երեխաներ ունեցող տնային տնտեսություններն ունեն աղքատության մոտ կրկնակի ավելի բարձր ռիսկ՝ (78%) հանրապետական միջին մակարդակի համեմատ (35.0%), ինչպես նաև ավելի բարձր ռիսկ այն տնային տնտեսությունների համեմատ, որտեղ առկա են թվով ավելի քիչ երեխաներ, օրինակ՝ 1 երեխա ունեցող տնային տնտեսությունների համեմատ՝ 1.8 անգամ, իսկ երկու երեխայի դեպքում՝ 1.6 անգամ: Այնուամենայնիվ, այդ արդյունքները պետք է դիտարկվեն որոշակի զգուշությամբ, քանզի դրանք հիմնականում բխում են համարժեքության սանդղակի և մասշտաբից տնտեսման ենթադրություններից (Լանժոու և Ռավալիոնի, 1995թ.):

Աղյուսակ 3.11. Հայաստան. Աղքատության մակարդակն ըստ առկա երեխաների (մինչև 6 տարեկան) և տարեցների (60-ից բարձր տարիք) թվաքանակի, 2008 և 2011թթ.-ին

(տոկոսներով)

Առկա երեխաների և տարեցների թվաքանակը	2008թ.		2011թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Տոկոսն աղքատ բնակչության մեջ	Տոկոսն ընդհանուր բնակչության մեջ
Երեխաների թվաքանակը						
0 երեխա	1.5	25.4	3.0	29.7	57.8	68.0
1 երեխա	1.9	31.3	5.9	43.7	26.4	21.1

Առկա երեխաների և տարեցների թվաքանակը	2008թ.		2011թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Տոկոսն աղքատ բնակչության մեջ	Տոկոսն ընդհանուր բնակչության մեջ
2 երեխա	1.6	34.4	3.8	48.6	13.9	10.0
3 երեխա և ավելի	5.3	34.8	6.5	77.7	1.9	0.9
Տարեցների թվաքանակը						
0 տարեց	1.3	24.7	3.7	33.7	51.0	52.8
1 տարեց	1.6	30.0	3.6	35.6	30.9	30.4
2 տարեց և ավելի	3.0	33.9	3.9	37.7	18.1	16.8
Ընդամենը	1.6	27.6	3.7	35.0	100.0	100.0

Աղբյուրը. *SSYUZ 2008 և 2011թթ.*

(ե) Մեծահասակների (60-ից բարձր տարիք) առկայությունն ավելացնում է աղքատության մակարդակը: Այն տնային տնտեսությունը, որը բաղկացած է երկու չափահաս անդամից և երկու մինչև 6 տարեկան երեխայից աղքատության ռիսկն ավելի բարձր է, քան հանրապետական միջինը (45.5% և 35.0%, համապատասխանաբար): Այդ ընտանիքին մեկ մեծահասակ անդամ ներառելու դեպքում աղքատության ռիսկն ավելանում է 26%- ով կամ 12.0%- ային կետով (Աղյուսակ 3.12): Միայն տարեցներից բաղկացած տնային տնտեսության աղքատության մակարդակը բավական ցածր է (1.9 անգամ միջին հանրապետական մակարդակից):

Աղյուսակ 3.12. Հայաստան. Աղքատության ցուցանիշներն ըստ տնային տնտեսության կազմի (ըստ բնակչության), 2008 և 2011թթ.-ին

(տոկոսներով)

Տնային տնտեսության կազմը*	2008թ.		2011թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատ բնակչության մեջ	%-ն ընդհանուր բնակչության մեջ
1 չափահաս՝ առանց երեխա	1.5	18.7	0.1	17.8	1.3	2.5
1 չափահաս՝ երեխաներով	3.8	21.0	3.8	26.0	0.4	0.5
2 չափահաս, առանց երեխա	0.9	20.5	1.2	20.5	6.4	10.9
2 չափահաս, 2 երեխա	-	25.4	2.7	45.5	1.5	1.2
2 չափահաս, 2 երեխա, 1 տարեց	-	37.8	6.1	57.5	1.1	0.6
2 չափահաս, 2 երեխա, 2 տարեց	0.4	47.2	4.9	39.0	0.7	0.6
Տարեց մարդ, առանց երեխա, առանց չափահասի	1.1	23.4	1.3	18.8	3.1	5.8
3 չափահաս	1.6	25.9	2.8	35.0	23.6	23.6
4 չափահաս	1.0	28.3	5.9	42.2	22.7	18.8
Այլ	2.4	31.9	4.5	38.9	39.2	35.5
Ընդամենը	1.6	27.6	3.7	35.0	100	100

* չափահաս՝ 18 և բարձր տարիքի, երեխա՝ մինչև 6 տարեկան, տարեց՝ 60 տարեկանից ավելին:

Աղբյուրը: *SSYUZ 2008 և 2011թթ.*

(զ) Կնոջ և տղամարդու գլխավորությամբ տնային տնտեսությունների աղքատության մակարդակը չի տարբերվում (34.3%՝ 35.2%-ի դիմաց 2011թ.-ին): 2011թ.-ին կնոջ

գլխավորությամբ տնային տնտեսությունները կազմել են և աղքատների և ամբողջ բնակչության 24%-ը: Միջին հանրապետական մակարդակի համեմատ՝ մինչև 6 տարեկան երեխա ունեցող կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններն աղքատ լինելու ավելի մեծ (34.6%-ով) ռիսկ ունեն (Աղյուսակ 3.13):

Աղյուսակ 3.13. Հայաստան. Աղքատության ցուցանիշներն ըստ տնային տնտեսության գլխավորի սեռի, ըստ առկա բնակչության, 2008 և 2011թթ.-ին


(տոկոսներով)

Գլխավորի սեռը	2008թ.		2011թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատ բնակչու - թյան մեջ	%-ն ընդհա - նուր բնակչու - թյան մեջ
Տղամարդ՝ գլխավոր	1.5	26.6	3.6	35.2	76.1	75.7
Կին՝ գլխավոր, այդ թվում՝	2.0	30.4	4.2	34.3	23.9	24.3
Կին գլխավոր՝ առանց երեխա(մինչև 6 տարեկան)	1.6	30.4	3.4	30.2	66.7	75.7
Կին գլխավոր՝ երեխաներով(մինչև 6 տարեկան)	3.0	30.9	6.8	47.1	33.3	24.3
Ընդամենը	1.6	27.6	3.7	35.0	100	100

Աղբյուրը: *SSYUL 2008 և 2011թթ.*

Գծապատկեր 3.7. Հայաստան. Աղքատության ցուցանիշներն ըստ տնային տնտեսության գլխավորի սեռի, ըստ մշտական բնակչության, 2008 և 2011թթ.-ին

(տոկոսներով)



Աղբյուրը: *SSYUL 2008 և 2011թթ.*

(ե) Լավ կրթություն ունեցող անձանց համար աղքատ լինելու հավանականությունն ավելի փոքր է (Աղյուսակ 3.14): Բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում աղքատության մակարդակն ամենացածրն է՝ այն մոտ 14 տոկոսային կետով ցածր է 16-ից բարձր տարիքի բնակչության միջին հանրապետական աղքատության մակարդակից, և 23-27 տոկոսային կետով ցածր, քան տարրական և ցածր, ինչպես նաև թերի միջնակարգ կրթություն ունեցողների աղքատության մակարդակը: 2008թ.-ի համեմատ՝ ծայրահեղ աղքատությունն աճել է կրթության բոլոր մակարդակներում:

Միջնակարգ ընդհանուր կրթությամբ անձինք աղքատ բնակչության շրջանում կազմում են ամենամեծ խումբը (48 %): 16-ից բարձր տարիքի բնակչության կազմում, այս խումբը դժվարությունների է հանդիպում աշխատանք փնտրելիս:

Աղյուսակ 3.14. Հայաստան. Աղքատությունն ըստ կրթության մակարդակի, 2008 և 2011թթ. (16 և բարձր տարիքի բնակչություն)


(տոկոսներով)

Կրթության մակարդակը	2008թ.		2011թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատների մեջ (համեմատվող բնակչություն)	%-ը համեմատվող բնակչության մեջ
Տարրական և ցածր	4.2	36.1	7.3	46.0	4.3	3.1
Թերի միջնակարգ	3.2	40.1	6.3	42.1	12.6	9.9
Միջնակարգ ընդհանուր	1.7	30.2	3.8	38.6	47.7	41.0
Միջնակարգ մասնագիտական	1.0	21.9	3.2	30.8	23.0	24.8
Բարձրագույն	0.4	14.7	1.3	19.4	12.4	21.2
Ընդամենը	1.6	26.6	3.5	33.2	100.0	100.0

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2008 և 2011թթ

Գծապատկեր 3.8 . Հայաստան. Աղքատությունն ըստ կրթության մակարդակի, 2008 և 2011թթ. (16 և բարձր տարիքի բնակչություն)

(տոկոսներով)



Աղբյուրը: ՏՏԿԱՀ 2008 և 2011թթ.

(ը) Աղքատության վրա ազդող կարևորագույն գործոններից է մասնակցությունն աշխատանքի շուկայում: Հատկապես աշխատանքի բացակայության պարագայում է մեծանում աղքատ կամ ծայրահեղ աղքատ լինելու հավանականությունը: Դրա վկայությունն է այն, որ աշխատող անդամ չունեցող տնային տնտեսություններում, աղքատության մակարդակը 2011թ.-ին կազմել է 41%, որը 21%-ով բարձր է եղել միջին հանրապետական մակարդակից (Աղյուսակ 3.15): Նույն ժամանակաշրջանում աշխատող անդամ չունեցող տնային տնտեսություններում ծայրահեղ աղքատության

մակարդակը կազմել է 7.4%՝ միջին հանրապետական մակարդակին գերազանցելով 2.1 անգամ:

Աղյուսակ 3.15. Հայաստան. 15 -75 տարեկան բնակչության աղքատության մակարդակն ըստ տնային տնտեսությունում աշխատող անդամների թվաքանակի, 2008 և 2011թթ.-ին (տոկոսներով)

Տնային տնտեսությունում աշխատող անդամների թվաքանակը	2008թ.		2011թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատների մեջ (համեմատվող բնակչություն)	%-ը համեմատվող բնակչության մեջ
Ոչ ոք չի աշխատում	5.7	46.6	7.4	40.6	15.2	12.6
Աշխատում է մեկ անդամ	2.8	32.5	4.0	34.6	29.9	28.9
Աշխատում են երկու անդամներ	0.7	26.0	2.7	30.4	31.3	34.4
Աշխատում են 3 և ավելի անդամներ	1.1	24.9	2.3	32.8	23.6	24.1
Ընդամենը	1.9	29.5	3.6	33.5	100.0	100.0

Աղբյուրը: *SSYULZ 2008 և 2011թթ.*

2008-2011թթ.-ին աղքատության մակարդակը բարձրացել է ինչպես աշխատաշուկայում մասնակցություն ունեցողների՝ զբաղվածների և գործազուրկների, այնպես էլ ոչ մասնակիցների՝ տնտեսապես ոչ ակտիվ բնակչության, շրջանում (Աղյուսակ 3.16):

Աշխատանքն ապահովում է եկամուտ, հետևաբար և աղքատության ավելի ցածր մակարդակ: Այդ են վկայում հետազոտության արդյունքները, համաձայն որի, աղքատների մեծ մասը չի ունեցել աշխատանք, մինչդեռ ոչ աղքատների զգալի մասը զբաղված է եղել որևէ տեսակի տնտեսական գործունեությամբ: Ուշագրավ է այն, որ 2008-2011թթ.-ին աղքատության մակարդակն ավելացել է աշխատուժի շուկայի մասնակիցների շրջանում ավելի արագ տեմպերով, քան ոչ մասնակիցների շրջանում (31.4%՝ 21.4%- ի համեմատ):

Թեև տնտեսապես ակտիվ բնակչության (աշխատաշուկայի մասնակիցների) կազմում աղքատության ռիսկն առավել բարձր է գործազուրկների շրջանում (44.1%) (Աղյուսակ 3.16), սակայն, ցուցանիշը տարածաշրջանային կտրվածքով դիտարկելիս, ակնհայտ է դառնում, որ 2011թ.-ին այլ քաղաքներում բնակվող գործազուրկների աղքատության մակարդակը 1.3 անգամ ավելի բարձր է եղել երևանաբնակ և նույնքան՝ գյուղաբնակ գործազուրկների համեմատ:

Աղքատության մակարդակն աճել է նաև կենսաթոշակառուների շրջանում: Երևանաբնակ կենսաթոշակառուներն ունեն աղքատության ավելի ցածր ռիսկ, քան գյուղաբնակ և այլ քաղաքներում բնակվող կենսաթոշակառուները: Ծայրահեղ աղքատության ամենաբարձր մակարդակը գրանցվել է այլ քաղաքներում բնակվող կենսաթոշակառուների մոտ:

**Աղյուսակ 3.16. Հայաստան. Աշխատուժի մասնակցությունն ու աղքատությունը,
2008 և 2011թթ. (15 -75 տարիքի բնակչություն)**

(տոկոսներով)

Աշխատուժի մասնակցությունը	2008թ.		2011թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատ ների մեջ (համեմատվող բնակչություն)	%-ն համեմատվող բնակչության մեջ
Ընդամենը բնակչություն						
<i>Մասնակիցներ</i>	1.0	23.9	2.9	31.4	59.8	64.0
Զբաղվածներ	0.8	22.2	2.1	28.5	44.3	52.2
Վարձու աշխատողներ	1.0	20.7	2.4	26.8	23.2	29.0
Ինքնազբաղվածներ	0.6	23.3	1.9	28.7	13.6	15.9
Այլ զբաղվածներ	0.4	27.2	1.2	34.7	7.5	7.3
Գործազուրկներ	2.1	32.6	6.8	44.1	15.5	11.8
<i>Ոչ մասնակիցներ</i>	2.4	30.8	4.8	37.4	40.2	36.0
Կենսաթոշակառուներ	2.8	34.5	4.4	35.3	10.4	9.9
Ուսանողներ	1.5	22.4	3.6	32.5	7.4	7.6
Այլ ոչ մասնակիցներ	2.7	33.1	5.4	40.6	22.4	18.5
ք.Երևան						
<i>Մասնակիցներ</i>	0.6	17.6	2.4	25.5	58.9	60.6
Զբաղվածներ	0.5	15	1.2	19.1	30.9	42.3
Վարձու աշխատողներ	0.6	16	1.2	19.2	28.0	38.1
Ինքնազբաղվածներ	-	7.1	1.1	17.8	2.8	4.1
Այլ զբաղվածներ	-	5.4	-	30.7	0.1	0.1
Գործազուրկներ	1.1	25.7	5.2	40.2	28.0	18.3
<i>Ոչ մասնակիցներ</i>	1.7	22.3	2.3	27.3	41.1	39.4
Կենսաթոշակառուներ	2.8	27.4	3.1	30.1	15.2	13.2
Ուսանողներ	0.7	14.6	1.8	20.5	6.7	8.5
Այլ ոչ մասնակիցներ	1.6	23.2	2.0	28.5	19.2	17.7
Այլ քաղաքներ						
<i>Մասնակիցներ</i>	1.8	31.2	5.4	40.0	52.2	55.8
Զբաղվածներ	1.3	28.1	4.0	36.3	36.6	43.0
Վարձու աշխատողներ	1.3	27.1	4.2	37.4	28.6	32.7
Ինքնազբաղվածներ	1.5	30.5	3.6	33.8	7.3	9.2
Այլ զբաղվածներ	-	38.8	-	26.9	0.7	1.1
Գործազուրկներ	3.6	41.5	10.1	52.4	15.6	12.8
<i>Ոչ մասնակիցներ</i>	3.6	38.6	8.0	46.4	47.8	44.2
Կենսաթոշակառուներ	3.3	40.7	6.6	40.3	11.8	12.5
Ուսանողներ	2.7	30.3	7.5	44.1	7.6	7.4
Այլ ոչ մասնակիցներ	4	40.6	9.0	50.2	28.4	24.3
Գյուղական բնակավայրեր						
<i>Մասնակիցներ</i>	0.8	24.3	1.8	30.5	69.6	74.8

Աշխատուժի մասնակցությունը	2008թ.		2011թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատների մեջ (համեմատվող բնակչություն)	%-ն համեմատվող բնակչության մեջ
Զբաղվածներ	0.8	23.7	1.6	30.0	64.4	70.5
Վարձու աշխատողներ	1.5	20.8	1.8	25.9	12.9	16.3
Ինքնազբաղվածներ	0.5	23.6	1.6	28.9	29.8	33.9
Այլ զբաղվածներ	0.5	27.3	1.3	35.1	21.7	20.3
Գործազուրկներ	1.5	32.2	4.9	39.3	5.2	4.3
<i>Ոչ մասնակիցներ</i>	1.7	32.4	3.4	39.6	30.4	25.2
Կենսաթոշակառուներ	1.8	39	2.8	38.6	4.8	4.1
Ուսանողներ	1.3	24.2	2.1	36.5	7.7	6.9
Այլ ոչ մասնակիցներ	1.9	35.3	4.2	41.4	17.9	14.2
Ընդամենը	1.9	29.5	3.6	33.5	100	100

Աղբյուրը. *SSԿԱՀ 2008 և 2011թթ.*

SSԿԱՀ տվյալները աղքատության և սննդամթերքի սպառման մասին միակ աղբյուրը չեն: 2010թ.-ին ՀՀ ԱՎԾ-ի և առողջապահության նախարարության կողմից իրականացված Հայաստանի Ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտության հիման վրա վերլուծվել է երեխաների սնուցման կարգավիճակը: Ներդիր.3.3-ում ներկայացվում է երեխաների սնուցման կարգավիճակն՝ ըստ սեռի, տարիքի, բնակավայրի:

Ներդիր.3.3

Աղյուսակ . Երեխաների սնուցման կարգավիճակը (ըստ 2010թ.-ի Հայաստանի Ժողովրդագրության և Առողջության Հարցերի Հետազոտության)

Մինչև 5 տարեկան երեխաների տոկոսը, ովքեր համարվում են թերսնված ըստ սնուցման կարգավիճակը որոշող 3 անտրոպոմետրիկ ցուցանիշների՝ հասակն ըստ տարիքի, քաշն ըստ հասակի և քաշն ըստ տարիքի ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2010թ.

Հիմնական բնութագրիչներ	Հասակն ըստ տարիքի ¹			Քաշն ըստ հասակի				Քաշն ըստ տարիքի				Երեխաների թվաքանակ
	Տոկոս սը ցածր -3 SD	Տոկոս սը ցածր -2 SD ²	Մի ցին Z-score -SD	Տոկոս սը ցածր 3 SD	Տոկոս սը ցածր - 2 SD ²	Տոկոս սը ցածր - բարձր +2 SD	Մի ցին Z-score -SD	Տոկոս սը ցածր -3 SD	Տոկոս սը ցածր - 2 SD ²	Տոկոս սը ցածր - բարձր +2 SD	Մի ցին Z-score -SD	
Տարիքն ամիսներով												
<6	5.1	16.1	-0.6	7.2	12.3	8.7	0.2	3.5	13.5	1.1	-0.4	128
6-8	6.2	8.1	-0.5	2.4	3.0	9.3	0.4	5.9	12.3	2.7	-0.1	67
9-11	1.0	3.0	-0.2	0.0	3.6	10.3	0.5	0.0	0.0	1.6	0.2	68
12-17	10.2	18.7	-0.7	0.1	2.0	20.1	0.9	0.9	3.3	5.3	0.3	163
18-23	6.1	15.3	-0.7	0.9	2.2	13.8	0.9	0.0	1.9	1.1	0.3	135
24-35	8.9	21.0	-0.8	0.3	2.5	13.5	0.8	0.9	2.9	4.1	0.1	290
36-47	10.9	25.5	-0.9	1.3	3.4	15.1	0.7	0.8	4.6	2.9	-0.1	247
48-59	8.7	17.4	-0.9	3.5	4.9	22.7	0.7	0.7	3.8	1.9	-0.1	235
Մեռ												
Արական	7.9	20.2	-0.8	2.1	4.7	17.0	0.8	1.4	4.3	3.3	0.1	694
Իգական	8.5	18.3	-0.7	1.5	3.3	13.7	0.6	1.0	5.1	2.4	0.0	639

Հիմնական ուրագրիչներ	Հասակն ըստ տարիքի ¹			Քաշն ըստ հասակի				Քաշն ըստ տարիքի				Երե խա ների թվա քա նակ
	Տոկոս սը -3 SD	Տոկոս սը -2 SD ²	Մի ջին Z-score -SD	Տոկոս սը 3 SD	Տոկոս սը 2 SD ²	Տոկոս սը բարձր +2 SD	Մի ջին Z-score -SD	Տոկոս սը -3 SD	Տոկոս սը -2 SD ²	Տոկոս սը բարձր +2 SD	Մի ջին Z-score -SD	
Բնակավայր												
Քաղաքային	6.9	17.3	-0.7	1.6	3.2	15.0	0.7	0.8	2.8	2.3	0.1	777
Գյուղական	10.0	22.0	-0.8	2.2	5.1	16.0	0.6	1.8	7.4	3.6	-0.0	556
Մարզ												
Երևան	4.7	11.3	-0.6	1.2	2.5	11.4	0.6	0.8	2.1	1.7	0.1	423
Արագածոտն	8.8	32.3	-1.1	3.8	6.0	8.9	0.6	2.5	6.2	0.3	-0.2	56
Արարատ	16.2	29.2	-0.5	5.4	11.8	16.8	0.0	3.2	16.8	1.3	-0.3	86
Արմավիր	8.3	21.5	-0.8	1.6	4.1	9.9	0.5	0.4	8.3	0.5	-0.2	121
Գեղարքունիք	15.8	25.3	-1.1	5.1	7.4	23.1	0.8	4.6	7.0	1.4	-0.1	104
Լոռի	11.6	23.4	-0.5	2.6	2.6	35.3	1.3	1.3	5.3	15.9	0.5	90
Կոտայք	3.6	17.3	-0.6	0.0	1.4	10.7	0.7	0.0	1.7	2.3	0.2	146
Շիրակ	10.2	21.4	-1.0	1.7	6.6	17.5	0.8	0.4	2.6	1.4	-0.0	153
Սյունիք	15.8	36.5	-1.5	0.0	2.3	22.2	0.8	1.1	5.6	0.0	-0.3	49
Վայոց ձոր	4.9	16.0	-0.8	0.0	1.8	18.4	0.9	0.0	3.0	6.2	0.2	39
Տավուշ	4.5	16.1	-0.6	1.0	1.0	14.7	0.8	1.8	4.6	7.8	0.2	67
Ընդամենը	8.2	19.3	-0.7	1.8	4.0	15.3	0.7	1.2	4.7	2.9	0.0	1,333

Նշում. Աղյուսակը հիմնված է այն երեխաների թվաքանակի վրա, ովքեր հարցազրույցին նախորդող գիշերը եղել են SS-ում: Յուրաքանչյուր գործակից արտահայտված է համաձայն ԱՀԿ-ի 2006թ-ի երեխայի զարգացման ստանդարտների (WHO/ԱՀԿ): Ներկայացված տվյալները համադրելի չեն նախորդ հետազոտությունների արդյունքների հետ, որոնք հաշվարկված էին ըստ 1977 NCHS/CDC/WHO ստանդարտների: Աղյուսակը ներկայացված է այն երեխաների տվյալների վրա, որոնց համար հավաքագրվել է հավաստի ծննդյան տարեթվի (ամիս և տարի) և հասակի ու քաշի ճիշտ չափումներ: Աստղանիշով արտահայտված ցուցանիշները հիմնված են 25-ից քիչ դեպքերի վրա և համախմբվել են:

¹ Մինչև 2 տարեկան և 85ամ-ից պակաս երեխաների դեպքում հասակը չափվել է պառկած դիրքում, մյուս բոլոր երեխաների հասակը չափվել է կանգնած:

² Ներառում է երեխաներին, ովքեր -3 ստանդարտ շեղում (SD) ցածր են ԱՀԿ-ի 2006թ-ի երեխայի զարգացման ստանդարտներից (WHO/ԱՀԿ):

3.5. Սպառման դետերմինանտները

Այս մասում դիտարկվում են այն գործոնները, որոնք սերտորեն կապված են աղքատության և կենսամակարդակի հետ, ավելի քան հաստատված պատճառահետևանքային կապերով: Այդ գործոնների բացահայտումը կարևոր քայլ է աղքատության հաղթահարմանն ու տնային տնտեսություններին աղքատ լինելու հավանականությունից ետ պահելուն ուղղված տնտեսական և սոցիալական քաղաքականության մշակման գործում: Ուսումնասիրված գործոններն են. (1) տնային տնտեսության բնութագրիչները, ներառյալ տարիքային կազմը, չափը, միգրացիայում գտնվող անդամի առկայությունը, տնային տնտեսության անդամների զբաղվածության կարգավիճակը և տնային տնտեսության բնակության վայրը, ինչպես նաև (2) տնային տնտեսության գլխավորի բնութագրիչները, ինչպիսիք են՝ տարիքը, սեռը, կրթությունը, զբաղվածությունը և հաշմանդամությունը: Այս գործոններն օգտագործվել են որպես բացատրող (անկախ) փոփոխականներ պարզ ռեգրեսիոն մոդելում, որտեղ մեկ չափահաս անձին համարժեք բնական լոգարիթմական սպառումը դիտարկվել է որպես կախյալ փոփոխական:

Մեկ չափահաս անձի հաշվով սպառումը զգալիորեն կախված է հետևյալ գործոններից.

Տնային տնտեսության ժողովրդագրական նկարագիրը

- *տնային տնտեսության չափը* բացասական ազդեցություն ունի տնային տնտեսության սպառման վրա, այսպիսով, և՛ 2008թ.-ին, և՛ 2011թ.-ին բազմանդամ տնային տնտեսություններն ունեն ավելի ցածր սպառում՝ ունենալով այլ հավասար բնութագրիչներ:
- *տնային տնտեսության գլխավորի սեռը.* դիտարկվող տարիներին կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների կենսամակարդակն՝ այլ հավասար բնութագրիչներ ունենալու պայմաններում, ավելի ցածր է, քան տղամարդու կողմից գլխավորվող տնային տնտեսություններում:
- *տարիքային կազմը.* 0-5 տարեկան երեխաների տեսակարար կշիռը բացասական ներգործություն ունի սպառման ցուցանիշի վրա, և՛ 2008թ.-ին, և՛ 2011թ.-ին: Որքան բարձր է այդ տարիքի երեխաների մասնաբաժինը տնային տնտեսությունում, այնքան ցածր է տնային տնտեսության սպառումը, բազային կատեգորիայի համեմատ (46-ից 60 տարեկանների մասնաբաժնի համեմատ)՝ պահպանելով տնային տնտեսության չափն անփոփոխ: Իսկ տարեցների տեսակարար կշիռը սպառման վրա ազդեցություն չունի 2008, 2010 և 2011թթ.-ին, սակայն 2009թ.-ին այն բավական բարձր էր:

Կրթություն

- Սպառման ցուցանիշը բարձր է այն տնային տնտեսություններում, որոնց գլխավորն ունի բարձրագույն կրթություն: Բարձրագույն կրթությամբ գլխավոր ունեցող տնային տնտեսությունների սպառման մակարդակը 2011թ.-ին 24%-ով ավելի է այն տնային տնտեսությունների սպառման մակարդակից, որոնց գլխավորում են տարրական կամ թերի միջնակարգ կրթություն ունեցողները (համեմատվող կատեգորիա):

Միգրացիա

- 2011թ.-ին հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում՝ երկրից դուրս միգրացիայում գտնվող և միգրացիայում եղած և վերադարձած անդամներ ունեցող տնային տնտեսությունները գրանցել են ավելի բարձր (համապատասխան 23 և 18%-ով) սպառման ցուցանիշ, քան այն տնային տնտեսությունները, որոնցում միգրանտներ չեն եղել:

Մասնակցությունը աշխատանքի շուկայում

- 2011թ.-ին տնային տնտեսության անդամների աշխատանքի շուկայում կարգավիճակը կարևոր ազդեցություն ունի տնային տնտեսության սպառման վրա: Տնային տնտեսություններում որքան բարձր է գործազուրկների համամասնությունն, այնքան ցածր է սպառման ցուցանիշը՝ վարձու աշխատողների համամասնության համեմատ: Այդ գործոններն էապես ազդում են, և ազդեցությունը բարձր կարևորություն ունի սպառման բաշխվածության վրա:

Տնային տնտեսության բնակության վայրը

- Բնակության վայրը կարևոր դեր ունի Հայաստանում տնային տնտեսության կենսամակարդակը բացատրելիս: Բնակության վայրի հիմնական ազդեցությունը սպառման ցուցանիշի վրա ստացվում է, երբ մոդելում ընդգրկված տնային տնտեսության այլ բնութագրիչների վրա դրվում է ծրագրային հսկողություն: 2011թ.-ին ք.Երևանի համեմատ ՀՀ բոլոր մարզերում բնակվող տնային տնտեսությունների բարեկեցությունը նվազել է:

3.6 Սպառումը, եկամուտը և դրանց բաշխվածության անհավասարությունը

Անհավասարությունը գնահատվում է ողջ բնակչության համար: Դիտարկվող ժամանակահատվածում (2008-2011թթ.) ըստ սպառման և ամբողջական եկամուտների ցուցանիշների անհավասարությունն աճել է: Ջինիի գործակցի միջոցով գնահատված անհավասարության ցուցանիշները վկայում են, որ Հայաստանում բնակչության բնեռացումն ըստ եկամուտների ցուցանիշի ավելի խորն է՝ սպառման ցուցանիշի համեմատ:

2011թ.-ին սպառման անհավասարությունը, որը չափվում է Ջինիի գործակցով, ավելացել է՝ կազմելով 0.267՝ 2008թ.-ի 0.242-ի համեմատ: Ըստ ամբողջական եկամուտների անհավասարությունն ավելացել է՝ կազմելով 2011թ.-ին 0.371՝ 2008թ.-ի 0.339-ի համեմատ:

Աղյուսակ 3.17. Հայաստան. Սպառման և եկամուտների անհավասարությունը, 2008- 2011թթ.-ին

	Սպառում			Եկամուտ		
	2008	2010	2011	2008	2010	2011
Վարիացիայի գործակից	0.592	0.775	0.762	0.847	2.410	1.115
Ջինիի գործակից	0.242	0.265	0.267	0.339	0.362	0.371
Թեյլի միջին լոգարիթմական շեղում E(0)	0.096	0.119	0.120	0.201	0.227	0.247
Թեյլի էնտրոպիա E(1)	0.110	0.152	0.151	0.215	0.308	0.280

Աղբյուրը. *SS4UL 2008, 2010, 2011թթ.*

Անհավասարության գնահատման այլ եղանակները՝ Թեյլի էնտրոպիայի համաթիվը և Թեյլի միջին լոգարիթմական շեղումը, արձանագրել են, որ Հայաստանում բնակչության բնեռացումն ըստ եկամուտների ցուցանիշի և ըստ սպառման ցուցանիշի ավելացել է:

3.7. Աղքատության գնահատումն այլընտրանքային մեթոդներով

Աղքատության մակարդակի վերաբերյալ առավել լայն պատկերացում կազմելու համար, ինչպես նաև միջազգային համադրումների նպատակով, ՀՀ ԱՎԾ-ն աղքատության մակարդակը գնահատում է նաև այլընտրանքային մեթոդների կիրառմամբ: Նման մոտեցումներից է նաև աղքատության մակարդակի գնահատումն ըստ մեկ շնչի հաշվով օրական սպառողական ծախսերի նվազագույն արժեքի նորմայի.

Պայմանական սպառողական ծախսերի մեթոդ

Այդ մեթոդի կիրառման դեպքում աղքատության գծից ցած հայտնված բնակչության տեսակարար կշիռը հաշվարկվում է երեք տարբերակով՝

- առաջին դեպքում, երբ աղքատության գծի արժեքն օրական մեկ շնչի հաշվով ընդունվում է 1.25 ԱՄՆ դոլարի չափով
- երկրորդում՝ 2.50 ԱՄՆ դոլարի չափով
- երրորդում՝ 5.00 ԱՄՆ դոլարի չափով

Հաշվի է առնվում ԱՄՆ դոլարի գնողունակության համարժեքությունը (պարիտետը), որը հաշվարկվել է Համաշխարհային բանկի կողմից (ՀԲ մեթոդաբանությամբ): Համաձայն ՀԲ-ի գնահատման՝ 2005թ.-ի համար 1 ԱՄՆ դոլարի գնողունակությունը հավասար էր 196.19 դրամի: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է մեկ շնչի հաշվով աղքատության մակարդակի փոփոխությունն ըստ այս մոտեցման:

Աղյուսակ 3.18 Հայաստան. Աղքատության մակարդակն ըստ ԱՄՆ դոլարի գնողունակության համարժեքության աստիճանի, 2008-2011թթ.

(տոկոսներով)

Աղքատության գիծն օրական մեկ շնչի հաշվով	Ըստ 2005թ.-ի ԱՄՆ դոլարի գնողունակության համարժեքության 1 ԱՄՆ դոլարը = 196.19 դրամի			
	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
1.25 ԱՄՆ դոլար	0.2	0.2	0.5	0.3
2.50 ԱՄՆ դոլար	12.1	17.4	19.7	17.5
5.00 ԱՄՆ դոլար	67.2	71.2	76.6	73.0

Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ 2008- 2011թ.

Նշում. Մպատումը գնահատվել է ըստ մեկ շնչի հաշվով:

Աղյուսակը ցույց է տալիս աղքատության մակարդակի աճը, հաշվարկված միջազգային աղքատության գծերն օգտագործելով, այն է՝ ԱՄՆ դոլարի գնողունակության համարժեքություն օրական մեկ շնչի հաշվով 1.25 ԱՄՆ դոլար, 2.50 ԱՄՆ դոլար և 5.00 ԱՄՆ դոլար: 2011թ.-ին, եթե օգտագործվել է աղքատության գիծն օրական մեկ շնչի հաշվով 1.25 ԱՄՆ դոլար, ապա աղքատ են եղել միայն 10 հազար մարդ, համաձայն երկրորդ տարբերակի՝ 519 հազ.մարդ և համաձայն երրորդ տարբերակի՝ 2165 հազ. մարդ: Այս ցուցանիշներով, 2011թ.-ին 2008թ.-ի համեմատ աղքատության մակարդակը, հաշվարկված 1.25 ԱՄՆ դոլարի համարժեքով, ավելացել է 0.1 տոկոսային կետով, 2.50 ԱՄՆ դոլարի դեպքում՝ աճել է 5.4 տոկոսային կետով և 5.00 ԱՄՆ դոլարի դեպքում՝ 5.8 տոկոսային կետով:

Բացի վերոնշյալ աղքատության գնահատման այլընտրանքային մեթոդի գոյություն ունեն նաև այլ այլընտրանքային մեթոդներ: Նրանցից են՝

- 1.մեկ շնչի հաշվով օրական սպառված էներգիա (ոչ դրամական ցուցանիշ);
- 2.աննդի վրա ծախսերի մասնաբաժինը (տես գլուխ 7);
- 3.անտրոպոմետրիկ ցուցանիշներ (տես գլուխ 3, ներդիր 3.3);
4. աղքատության սուբյեկտիվ ցուցանիշներ (տես գլուխ 12):

Ներդիր 3.4-ում ներկայացված են հաշվարկներ՝ աղքատության մակարդակի և աղքատ (առկա) բնակչության թվաքանակի վերաբերյալ:

Ներդիր 3.4

SSԿԱՀ բնակչության հաշվարկների համահարթեցումը Հայաստանի բնակչության պաշտոնական տվյալների հետ

2008 թ.-ից նորացված մեթոդաբանությամբ (մշակվել է իրականացվել է ՀՄԿ և ՀՄՀ-Հայաստանի խորհրդատուներ Ֆրեդերիկ Շուրենի, Ալի Մուստաֆի և ՀՀ ԱՎԾ համապատասխան աշխատակիցների կողմից) հնարավորություն է ստեղծվել SSԿԱՀ և պաշտոնական վիճակագրության (ընթացիկ հաշվառման) գնահատականներով ստացված ՀՀ բնակչության թվաքանակների տարեկան ցուցանիշները՝ 2008-2011թթ.-ի համար համահարթեցնել (<<ռեյթինգ>> մեթոդաբանությամբ):

Համահարթեցման նպատակը: Հետազոտության և պաշտոնական գնահատականներով ստացված բնակչության սեռատարիքային խմբերի ցուցանիշների համահարթեցումը նպաստում է հետազոտության շեղումների և անհամապատասխանությունների նվազեցմանը՝ այդպիսով հնարավոր դարձնելով SSԿԱՀ հաշվարկներում միջինացված սխալի զգալի նվազեցմանը: Ընդ որում, եթե այն կիրառվում է մի քանի տարիների ընթացքում, ապա հնարավոր է դառնում բնակչության թվաքանակի ցուցանիշների դինամիկ շարքի բարելավումը, հատկապես ՀՀ 2011թ. մարդահամարի տվյալների հետ համադրելու դեպքում:

Համահարթեցման պատճառները: Հայաստանում բնակչության ընթացիկ հաշվարկներն իրականացվում են մշտական (դե յուրե) բնակչության տվյալների հիման վրա, իսկ հետազոտությունների արդյունքներով ստացվում են տվյալներ և առկա (դե ֆակտո) և մշտական (դե յուրե) բնակչության վերաբերյալ: Որպեսզի հնարավոր լինի ճշգրտել բնակչության դե ֆակտո/դե յուրե ցուցանիշների տարբերությունները, անհրաժեշտ է ունենալ վիճակագրական այլընտրանք, որն էլ այս դեպքում հանդիսանում է այն հանգամանքը, որ SSԿԱՀ-ի միջոցով տեղեկություններ են հավաքագրվում և դե ֆակտո, և դե յուրե բնակչության վերաբերյալ:

Քննարկվող մեթոդաբանությունը կիրառելու համար անհրաժեշտ է, որ SSԿԱՀ-ի ընտրանքն ավելի մեծ լինի, որն էլ հնարավոր է դարձել միայն վերջերս, հատկապես, երբ կրկնապատկվեց մարզերի ընտրանքը (Երևանից դուրս):

Օգտագործված մոտեցումը. Փորձական այս աշխատանքում ներառվել են SSԿԱՀ-ի հինգ տարիների տվյալները (2004-2008թթ.): SSԿԱՀ յուրաքանչյուր տարվա համար հետազոտության կշիռները համապատասխանեցվել են այնպես, որ դրանց գումարը հավասար լինի նախորդ տարվա վերջի և ընթացիկ տարվա բնակչության անկախ գնահատականների տարեկան միջինին: Այնուհետև օգտագործվել է համահարթեցման հարաբերակցության գնահատման /Raking Ratio Estimation/ մեթոդը, որտեղ սահմանային ընդհանուր հաշվարկներն ըստ տարիքի /որպես օրինակ/ համապատասխանեցվել են տվյալ հարաբերակցությանը, իսկ հետազոտության կշիռները, համապատասխանաբար, փոփոխվել են:

Արդյունքներ. Ստորև բերված երեք աղյուսակներում ներկայացվում են համահարթեցման մեթոդի արդյունքներն ըստ դե յուրե, դե ֆակտո բնակչության և աղքատության հաշվարկների 2008-2011 թթ.-ի համար:

Աղյուսակ 1. Մշտական (դե յուրե) բնակչության թվաքանակի հաշվարկները համահարթեցումից առաջ և հետո

(մարդ)

Տարի	Բնակչության թվաքանակի գնահատականները		
	Ընթացիկ հաշվառմամբ	SSԿԱՀ հիմքով համահարթեցումից առաջ	SSԿԱՀ հիմքով համահարթեցումից հետո
2008թ.	3,234,031	3,308,268	3,234,031
2009թ.	3,243,729	3,277,666	3,243,729
2010թ.	3,256,066	3,318,058	3,256,066
2011թ.	3,274,285	3,162,084	3,274,285

Համահարթեցման արդյունքում SSԿԱՀ դե յուրե հաշվարկները համապատասխանեցվում են ընթացիկ հաշվառման տվյալներին :

Աղյուսակ 2. Առկա (դե ֆակտո) բնակչության թվաքանակի հաշվարկները համահարթեցումից առաջ և հետո (մարդ)

Տարի	Բնակչության թվաքանակի գնահատականները	
	SSԿԱՀ հիմքով համահարթեցումից առաջ	SSԿԱՀ հիմքով համահարթեցումից հետո
2008թ.	3,067,742	2,996,225
2009թ.	3,070,286	3,035,166
2010թ.	3,099,327	3,031,306
2011թ.	2,965,467	2,927,585

Աղյուսակ 3. Աղքատության մակարդակի և աղքատ (առկա) բնակչության թվաքանակի հաշվարկները համահարթեցումից առաջ և հետո

Տարի	Աղքատության մակարդակը, %	Աղքատ բնակչության թվաքանակը համահարթեցումից առաջ, մարդ	Աղքատության համահարթեցված մակարդակը, %-ով	Աղքատ բնակչության թվաքանակը համահարթեցումից հետո, մարդ
2008թ.	27.8	854,223	27.2	815,272
2009թ.	34.1	1,046,736	33.6	1,019,464
2010թ.	35.8	1,109,228	34.9	1,058,309
2011թ.	35.0	1,036,500	34.9	1,021,472

Քարտեզ 1. Հայաստան. Աղքատության մակարդակն ըստ մարզերի և ք.Երևանի, 2011թ.



Աղբյուրը. *SSYUZ 2011թ.*

Գլուխ 4. Աղքատությունը գյուղական վայրերում

2011թ.-ին, համաձայն ստացված գնահատականների, աղքատության մակարդակը գյուղական բնակավայրերում ավելի բարձր է միջին հանրապետականից: Դիտարկվող ժամանակաշրջանում գյուղական բնակչությունը ներքին ռեսուրսների հաշվին ավելի հաջող է հաղթահարել իր պարենային խնդիրները, քան քաղաքային բնակչությունը: 2011թ.-ին հող կամ անասուն ունեցող գյուղաբնակ տնային տնտեսությունների 70%-ը ցույց է տվել գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտ:

2011թ.-ին գյուղաբնակ տնային տնտեսությունների 90.7%-ը զբաղվել է բուսաբուծությամբ, 63.0%-ը՝ անասնապահությամբ: 2011թ. գյուղաբնակ տնային տնտեսությունների 61.2%-ը զբաղվել է միաժամանակ, թե՛ բուսաբուծությամբ, թե՛ անասնապահությամբ:

4.1 Աղքատության մակարդակի միտումները գյուղական վայրերում

Գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամն իր բացասական ազդեցությունն է ունեցել նաև գյուղական բնակչության կենսամակարդակի վրա: Արդյունքում, 2011թ.-ին 2008 թ.-ի համեմատ աղքատության մակարդակը գյուղական բնակավայրերում աճել է 7.0 %-ային կետով: Ավելի մեծ աճ է գրանցվել քաղաքային բնակավայրերում (7.6 տոկոսային կետով): 2011թ.-ին ընդհանուր աղքատության մակարդակի տարբերությունը քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև փոքր է՝ գյուղական բնակավայրերում՝ 34.5% և քաղաքային բնակավայրերում՝ 35.2% (Աղյուսակ 4.1, Գծապատկեր 4.1):

Աղյուսակ 4.1. Հայաստան. Աղքատության մակարդակի միտումները գյուղական և քաղաքային բնակավայրերում, 2008 և 2011թթ.

(տոկոսներով)


Բնակավայրեր	2008թ.		2011թ.		2011թ. / 2008թ. փոփոխությունը %-ային կետով	
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ
Գյուղական բնակավայրեր	1.2	27.5	2.2	34.5	1.0	7.0
Քաղաքային բնակավայրեր	1.9	27.6	4.6	35.2	2.7	7.6
Ընդամենը	1.6	27.6	3.7	35.0	2.1	7.4

Աղբյուրը. *SSYULZ 2008 և 2011թթ.*

2011թ.-ին ծայրահեղ աղքատ է գյուղական բնակչության 2.2%-ը, ինչը Հայաստանում գրանցված ծայրահեղ աղքատության ամենացածր մակարդակն է: Չնայած, որ ընդհանուր աղքատության մակարդակի տարբերությունը քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև փոքր է, քաղաքային բնակավայրերում ծայրահեղ աղքատության մակարդակը զգալի բարձր

է: Միննույն ժամանակ, 2011թ.-ին 2008թ.-ի համեմատ քաղաքային բնակչության ծայրահեղ աղքատության մակարդակն ավելացել է 2.7%-ային կետով, իսկ գյուղական բնակչությանը՝ 1.0 %-ային կետով:

Գծապատկեր 4.1. Հայաստան. Աղքատության մակարդակն ըստ բնակավայրերի, 2008 և 2011թթ.-ին



Աղբյուրը: *SSՀԱՀ 2008 և 2011թթ.*

4.2. Գյուղաբնակ տնային տնտեսությունների եկամուտներն ու սպառումը 2008-2011թթ.-ին

2008-2011թթ.-ի ընթացքում գյուղական բնակավայրերում բնակչության միջին ամբողջական եկամուտներն իրական արտահայտությամբ աճել են 6.8 %-ով (Աղյուսակ 4.2): Աճը հիմնականում պայմանավորված է գյուղմթերքի և անասունի վաճառքից ստացված եկամուտների աճով:

Միջին հաշվով, 2011թ.-ին գյուղատնտեսական գործունեությունն (գյուղմթերքի, անասունի վաճառք և սեփական տնտեսությունից սննդամթերքի սպառում) ապահովել է գյուղաբնակ տնային տնտեսությունների ամբողջական եկամտի (մեկ շնչի հաշվով) միայն 32.4%-ը՝ 2008թ.-ին արձանագրված 38.8%, 2009թ.-ի՝ 35.6%-ի և 2010թ.-ի 29.4%-ի համեմատ (Գլուխ 7, Աղյուսակ 7.2): Միննույն ժամանակ նվազել է վարձու աշխատանքից ստացված եկամտի տեսակարար կշիռը՝ 2008թ.-ի 29.6%-ից կազմելով 2011թ.-ին՝ 27.0%: Ինքնազբաղվածությունից ստացված եկամտի տեսակարար կշիռը 2008-2011թթ.-ին չի փոփոխվել (3.9-4.1%):

Պետական տրանսֆերտների՝ կենսաթոշակների ու սոցիալական աջակցության մասնաբաժինն ընդհանուր եկամուտների կազմում ավելացել է 2011թ.-ին կազմելով 19.3%, 2008թ.-ի 17.3%-ի դիմաց: Գյուղաբնակ տնային տնտեսությունների ամբողջական եկամուտների կազմում ավելացել է Հայաստանից դուրս ապրող բարեկամներից ստացված տրանսֆերտների, որպես եկամտի աղբյուրի, կարևորությունը՝ 2008թ.-ի 6.6%-ի դիմաց,

2011թ.-ին կազմելով՝ 10.6 %: Ընդամենը 0.2 տոկոսային կետով նվազել է Հայաստանում ապրող բարեկամներից ստացված տրանսֆերտների տեսակարար կշիռը՝ (0.7%՝ 2008թ. և 0.5%՝ 2011թ.) (տես՝ Գլուխ 7, Աղյուսակ 7.2):

Աղյուսակ 4.2-ը ներկայացնում է գյուղաբնակ բնակչության ամսական եկամուտները և սպառման ցուցանիշների փոփոխությունները 2008-2011թթ.՝ հաշվարկված մեկ չափահասին համարժեք սպառման ցուցանիշի կիրառմամբ: Իրական եկամուտն ավելացել է սպառման բոլոր քվինտիլներում, բացի 5-րդ քվինտիլից: Իրական սպառումը նվազել է սպառման բոլոր քվինտիլներում: Ընդհանուր առմամբ, գյուղական բնակչության սպառման միջին մակարդակը 2008թ.-ի համեմատ 2011թ.-ին նվազել է 11%-ով, այն դեպքում, երբ եկամտի միջին մակարդակն աճել է 7.9%-ով :

Աղյուսակ 4.2. Հայաստան. Գյուղական բնակչության եկամուտներն ու սպառումը 2008 և 2011թթ.-ին ըստ քվինտիլային խմբերի*, մեկ չափահասին համարժեք, ամսական, 2008թ. միջին տարեկան գներով

(դրամներով)

	Քվինտիլներ					
	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	Միջինը
Սպառումը մեկ չափահաս անձին համարժեք						
2008թ.	23335	30780	38164	46672	69418	41691
2011թ.	21504	28538	34125	41489	59852	37102
Եկամուտը մեկ չափահաս անձին համարժեք						
2008թ.	30663	36036	41639	45090	60239	42745
2011թ.	39957	39201	43187	48607	59567	46105
2008 և 2011 թթ. տարբերությունը (տոկոսներով)						
Սպառում	-7.8	-7.3	-10.6	-11.1	-13.8	-11.0
Եկամուտ	30.3	8.8	3.7	7.8	-1.1	7.9


Աղբյուր.՝SSYUZ 2008 , 2011թթ.

**) սպառման ազդեցատի քվինտիլային խմբերի բաշխումը կատարվել է գյուղաբնակների ներքո:*

Ինչպես նշվեց, եկամուտների աճ գրանցվել է սպառման բոլոր քվինտիլներում, բացի ամենահարուստ՝ հինգերորդ քվինտիլի: Առաջին և երկրորդ քվինտիլների տնային տնտեսությունների մոտ գրանցվել է եկամուտների ամենամեծ աճը (30.3% և 8.8%), երրորդ և չորրորդ քվինտիլներում գրանցվել է եկամուտների բարձրացում (3.7% և 7.8%), իսկ հինգերորդ քվինտիլում գրանցվել է եկամուտների փոքր նվազում(-1.1%): Առաջինից չորրորդ քվինտիլների տնային տնտեսությունների եկամուտների աճը և 5-րդ քվինտիլում եկամուտների նվազումը բերել են նրան, որ 2008-2011թթ.-ին գյուղական բնակչության միջին եկամուտներն աճել են 7.9%-ով:

Իրական սպառումը նվազել է սպառման բոլոր քվինտիլներում, իսկ նվազման ամենաբարձր տեմպը գրանցվել է հինգերորդ քվինտիլում (11.1%):

Գծապատկեր 4.2. Հայաստան. Գյուղաբնակ տնային տնտեսությունների սպառման և եկամուտների տարբերությունը, 2008 և 2011 թթ. (տոկոսներով)



Աղբյուրը.ՏՏԿԱՀ 2008 և 2011թթ.

4.3. Ովքեր էին աղքատ գյուղական վայրերում 2011թ.-ին

Ներկայացված տվյալների համաձայն, ինչպես ֆիզիկական, այնպես էլ ֆինանսական ենթակառուցվածքների թերզարգացվածությունը (ճանապարհներ, ոռոգման համակարգ, գյուղմթերքի մշակման, մթերման, պահպանման հնարավորություններ, ֆինանսավորման հնարավորություններ և այլն) հանդիսանում է Հայաստանում գյուղական վայրերի զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոններից մեկը: Հետևաբար, աղքատության մակարդակը բարձր է այն տնային տնտեսություններում, որոնք հողագուրկ են կամ ունեն շատ փոքր հողակտոր, հողի ոռոգման սահմանափակ հնարավորություն, չունեն կամ ունեն շատ քիչ գյուղտեխնիկա կամ արտադրական հնարավորություններ, ունեն սահմանափակ ֆինանսական աղբյուրներ:

Աշխարհագրական դիրքը. Ինչպես և նախորդ տարիներին, գյուղական բնակչությունն ավելի աղքատ է այն մարզերում, որտեղ գյուղատնտեսության համար պայմաններն առավել անբարենպաստ են: Օրինակ՝ աղքատության մակարդակն ավելի բարձր է ծովի մակարդակից 1300-1700 մ բարձրության վրա գտնվող բնակավայրերում (Աղյուսակ 4.3):

Աղյուսակ 4.3. Հայաստան. Գյուղական բնակչության աղքատության մակարդակն ըստ բնակավայրի աշխարհագրական դիրքի, 2008 և 2011թթ.

(տոկոսներով)

	Ընդամենը		այդ թվում՝ ծովի մակերևույթից բարձր					
			մինչև 1300 մ		1300-1700 մ		1700 մ և բարձր	
	2008	2011	2008	2011	2008	2011	2008	2011
Ոչ աղքատ	72.5	71.3	77.5	71.9	71.8	69.1	67.3	72.1
Աղքատ (առանց ծայրահեղ աղքատների)	26.3	27.1	21.9	26.9	26.4	28.8	31.2	26.1
Ծայրահեղ աղքատ	1.2	1.6	0.6	1.2	1.8	2.1	1.5	1.8

Աղբյուրը. *SSYUZ 2008 և 2011թթ.*

Հողի առկայությունը. Հողի սեփականությունը մեծ դեր է խաղում գյուղական վայրերում աղքատության մակարդակի կրճատման գործում: Հողակտոր չունեցող տնային տնտեսությունների շրջանում աղքատության մակարդակն ավելի բարձր է՝ 40.3%, քան բոլոր գյուղական վայրերի տնային տնտեսությունների աղքատության միջին մակարդակը, որը կազմում է՝ 27.1% և 1 հա-ից ավել հողակտոր ունեցողներինը՝ 27.0% (Աղյուսակ 4.4):

Աղյուսակ 4.4. Հայաստան. Տնային տնտեսությունների աղքատության մակարդակը գյուղական վայրերում ըստ հողակտորի առկայության և չափերի, 2008 և 2011թթ

(տոկոսներով)

Հողակտորի չափը (հեկտար)	2008թ.		2011թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատների մեջ	% գյուղաբնակ տնային տնտեսությունների մեջ
0 հա	0.5	21.4	2.0	40.3	4.9	3.3
Մինչև 0.2 հա	1.1	24.3	0.7	28.8	19.6	19.0
0.2 – 0.5 հա	0.9	20.9	1.9	29.8	14.8	13.4
0.5 – 1 հա	1.7	20.5	1.8	22.3	19.1	22.8
Ավելի քան 1 հա	0.5	28.2	1.8	27.0	41.6	41.5
Գյուղական վայրեր, ընդամենը ըստ տնային տնտեսությունների	1.4	24.4	1.6	27.1	100	100

Աղբյուրը. *SSYUZ 2008թ. և 2011թ.*

2011թ.-ին գյուղաբնակ տնային տնտեսությունների շրջանում հողակտորի առկայությունը և օգտագործումն ունեն հետևյալ պատկերը՝ տնային տնտեսությունների 90.6%-ը ունեցած հողն օգտագործում է լրիվ կամ մասամբ, իսկ 6.0%-ը՝ ունեցած հողը չի օգտագործում, մնացած տնային տնտեսությունները հող չունեն:

Հողի որակը. Տնային տնտեսությունների հետազոտությամբ բավարար տեղեկատվություն չի ստացվում հողի որակի մասին, ուստի որպես հողի որակի ցուցանիշ դիտարկվում է հողը ջրելու հնարավորությունը, քանի որ այն պայմանավորում է ստացվող բերքի ու բերքատվության մակարդակը: Հողը ջրելու եղանակներից մեկը ոռոգումն է: Ըստ

հետազոտության տվյալների հող մշակող տնային տնտեսությունների 61.7%-ի մշակվող հողը ոռոգվել է: Միննույն ժամանակ, ոռոգված հողատարածքների մասնաբաժինը կազմել է ընդամենը 25.5% :

Աղյուսակ 4.5. Հայաստան. Տնային տնտեսությունների կողմից մշակվող հողատարածքների բաշխումն ըստ ջրման եղանակի, 2011թ.

(տոկոսներով)

Մշակվող հողատարածքների տեսակարար կշիռը, որոնք ունեն	Ընդամենը մշակվող հողատարածքներ	այդ թվում՝	
		տնամերձ	ոչ տնամերձ
Ոռոգման ջուր (ջրատար/ջրանցք)	25.4	58.4	20.4
Խմելու ջուր կամ խորքային հոր	1.5	10.7	0.1
Միայն բնական աղբյուրներ (գետեր և այլն)	0.8	4.4	0.2
Միաժամանակ ոռոգում և խմելու ջուր կամ խորքային հոր	0.0	0.1	0.0
Միաժամանակ ոռոգում և բնական աղբյուրներ (գետեր և այլն)	0.1	0.0	0.1
Ջրման եղանակների այլ զուգորդություններ	0.0	0.0	0.0
Հավաքած անձրևաջուր, ձնհալից ջուր	1.4	3.0	1.2
Միայն անձրևաջուր	70.8	23.4	78.0
Ընդամենը հողատարածք	100	100	100

Աղբյուրը. *SS4UՀ 2011թ*

Գյուղաբնակ տնային տնտեսությունների կողմից մշակելի հողատարածքների ոռոգվող մասնաբաժինը ներկայացվում է ստորև՝ 75-100%-ով ոռոգվել է հողատարածքների միայն 45%-ը, իսկ հողատարածքների մոտ երկու հինգերորդ մասը՝ 40%-ը, ոռոգվել է մինչև 25%:

Աղյուսակ 4.6. Հայաստան. Հող մշակող բնակչության ոռոգվող հողատարածքների բաշխումն ըստ ոռոգված տարածքների մասնաբաժնի և տնային տնտեսությունների աղքատության մակարդակի, 2011թ.


(տոկոսներով)

Ոռոգվող հողատարածքների մասնաբաժինը	Ոչ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Ընդամենը
Մինչև 25%	41.2	37.1	44.9	40.2
25-50%	9.2	10.6	-	9.4
50-75%	5.3	6.2	-	5.5
75%-100%	44.3	46.1	55.1	44.9
Ընդամենը	100	100	100	100

Աղբյուրը. *SS4UՀ 2011թ.*

Գծապատկեր 4.3. Հայաստան. Հող մշակող բնակչության ոռոգվող հողատարածքների բաշխումն ըստ ոռոգված տարածքների մասնաբաժնի և տնային տնտեսությունների աղքատության մակարդակի, 2011թ.-ին

(տոկոսներով)



Աղբյուրը. SSԿԱՀ 2011թ.

75%-100% ոռոգվել է Արարատյան դաշտավայրի (Արարատի և Արմավիրի մարզեր) բերրի հողերի առավել մեծ համամասնությունը (Աղյուսակ 4.7): Հողերի ամենափոքր համամասնությունը ոռոգվել է ՀՀ Լոռու և Գեղարքունիքի մարզերում:

Աղյուսակ 4.7. Հայաստան. Հող մշակող բնակչության ոռոգվող հողատարածքների բաշխումն ըստ ոռոգված տարածքների մասնաբաժնի և մարզերի, 2011թ.

(տոկոսներով)

	Մինչև 25%	25-50%	50-75%	75%-100%	Ընդամենը
Արագածոտն	31.2	5.5	11.3	52.0	100
Արարատ	7.6	5.5	6.8	80.1	100
Արմավիր	10.6	6.3	4.9	78.2	100
Գեղարքունիք	92.0	4.0	-	4.0	100
Լոռի	52.0	35.0	11.7	1.3	100
Կոտայք	46.4	18.4	6.6	28.6	100
Շիրակ	68.9	6.2	3.1	21.8	100
Սյունիք	80.8	9.3	0.9	9.0	100
Վայոց Ձոր	40.3	21.1	8.0	30.6	100
Տավուշ	42.7	32.1	11.6	13.6	100
Ընդամենը	40.2	9.4	5.5	44.9	100

Աղբյուրը. SSԿԱՀ 2011թ.

Ըստ 2011թ.-ի հետազոտության տվյալների, գյուղաբնակ տնային տնտեսություններից նրանք, ովքեր օգտագործվող հողատարածքը ոռոգել են ամբողջությամբ կամ մասամբ (այլ ձևերի հետ միաժամանակ)՝ 58%-ը՝ ջրօգտագործողների ընկերության անդամ են: Չանդամագրված տնային տնտեսությունների 40%-ը պատասխանել է, որ իրենց գյուղում նման ընկերություն չկա, 58%-ը՝ չի ցանկացել անդամակցել ջրօգտագործողների ընկերությանը, իսկ մնացածը նշել են այլ պատճառներ:

Ըստ հետազոտության տվյալների, տնային տնտեսությունների 65%-ը ստացել է ոռոգման ջուր բավարար քանակությամբ և ժամանակին (նախորդ տարվա համեմատ այս

ցուցանիշները լավացել են՝ 2010թ.-ին 53%), 21%-ը՝ բավարար քանակությամբ, բայց ոչ ժամանակին, 3%-ը՝ ժամանակին, բայց ոչ բավարար քանակությամբ, իսկ տնային տնտեսությունների 11%-ը ստացել է ռոռզման ջուր ոչ բավարար քանակությամբ և ոչ էլ ժամանակին:

Ռոռզման ջրի մատակարարման ընդհատումների պատճառներից, որպես ամենակարևորներ, նշվել են՝ ջրատարների տեխնիկական անբավարար վիճակը (պատասխանողների 32%-ը), տեղական ցանցի խնդիրները (26%-ը), վճարումներ չկատարելը (12%-ը) և պոմպերի հետ կապված վթարները (11%-ը):

Օգտագործած ռոռզման ջրի դիմաց վճարել է լրիվ կամ մասամբ տնային տնտեսությունների 90%-ը (նախորդ տարվա 91%-ի դիմաց), իսկ տնային տնտեսությունների 10%-ը չի վճարել, որից գումար չունենալու պատճառով՝ 53%-ը, ռոռզման ջրի անհրաժեշտ քանակություն չստանալու պատճառով՝ 8%-ը և ռոռզման ջրի ոչ ժամանակին մատակարարելու պատճառով՝ 8%-ը և այլն:

Հետազոտության ընթացքում տնային տնտեսությունները հարցվել են ռոռզման համակարգերի աշխատանքների վերաբերյալ նաև նախորդ երկու տարիների գյուղատնտեսական սեզոններում (2010թ.-ին 2009թ.-ի համեմատ): Համաձայն հարցվողների 30%-ի, 2010թ.-ի գյուղատնտեսական սեզոնում 2009թ.-ի համեմատ, ռոռզման համակարգի աշխատանքը փոխվել է, ընդ որում, ճնշող մեծամասնությունը (99%-ը) գտնում է, որ այն էապես կամ որոշ չափով բարելավվել է:

2010թ.-ին 2009թ.-ի համեմատ հարցվողների 8%-ը գտնում է, որ փոխվել են հողատարածքի չափերը, ընդ որում, այդպիսի պատասխան տվողների 50%-ը համարում է, որ դրանք էապես կամ որոշ չափով ընդլայնվել են, իսկ նույնքանն էլ համարում է՝ որ կրճատվել են:

Գյուղատնտեսական տեխնիկայի մատչելիությունը .

Գյուղաբնակ տնային տնտեսությունների կողմից տնօրինվող և օգտագործվող գյուղտեխնիկայի մեծ մասը բավական հին է՝ ավելի քան 10 տարվա վաղեմության (Աղյուսակ 4.8): Իսկ գյուղատնտեսական տեխնիկայի մատչելիությունը շատ ցածր է գյուղական բնակավայրերում: Այսպես, միայն 2.2 տոկոս տնային տնտեսությունների ցույց են տվել, որ ունեն տրակտոր կամ մինի տրակտոր, 1.8 տոկոսը՝ բեռնատար ավտոմեքենա, 1.4 տոկոսն՝ տրակտորային կցասայլակ , մնացած գյուղտեխնիկայի մատչելիությունը տատանվում է 0.1-0.7 տոկոս միջակայքում:

Աղյուսակ 4.8. Հայաստան. Գյուղտեխնիկայի առկայությունը հող ունեցող կամ անասնապահությունով զբաղվող տնային տնտեսություններում ըստ օգտագործման տևողության, 2011թ.

(տոկոսներով)

	Ընդամենը	Մինչև երկու տարի	3-5 տարի	6-10 տարի	Ավելի քան 10 տարի
Տրակտոր, մինի տրակտոր	100	0.2	6.2	36.7	56.9
Բեռնատար ավտոմեքենա	100	9.7	7.2	18.5	64.6

	Ընդամենը	Մինչև երկու տարի	3-5 տարի	6-10 տարի	Ավելի քան 10 տարի
Հացահատիկային կոմբայն	100	-	-	32.2	67.8
Տրակտորային կցասայլակ	100	0.2	7.9	41.3	50.6
Տրակտորային խոտհնձիչ	100	13.0	15.4	30.2	41.4
Կերահավաք կոմբայն	100	-	-	-	100
Հատիկագտիչ	100	-	46.3	0.0	53.7
Տրակտորային շարքացան	100	1.0	20.3	5.2	73.5
Տրակտորային գութան	100	0.7	11.0	29.9	58.4
Կուլտիվատոր	100	0.7	25.2	52.4	21.7
Ընդամենը	100	3.6	9.4	30.9	56.1

Աղբյուրը. *SSԿԱՀ 2011թ.*

Բնական է, որ ոչ աղքատ տնային տնտեսություններն առավել մեծ հնարավորություններ ունեն ձեռք բերելու կամ վարձակալելու գյուղատնտեսական տեխնիկա, քան աղքատ տնային տնտեսությունները: 2011թ.-ի հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում գյուղտեխնիկա ունեցող տնային տնտեսություններից միայն ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններն են, որ ձեռք չեն բերել ոչ մի գյուղտեխնիկա: Գյուղտեխնիկա ունեցող տնային տնտեսությունների 72%-ը կազմել են ոչ աղքատները, իսկ 28%-ը՝ աղքատները:

Գյուղտեխնիկայի առկայությունն ըստ աղքատության մակարդակի տարբերվում է: Այսպես, ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունները չեն տնօրինել և չեն օգտագործել Աղյուսակ 4.9-ում ներկայացված գյուղատնտեսական տեխնիկայի տեսակներից ոչ մեկը: Ընդհանուր առմամբ, միայն ոչ աղքատ տնային տնտեսություններն են հնարավորություն ունեցել օգտագործելու գյուղտեխնիկայի բոլոր տեսակները:

Աղյուսակ 4.9. Հայաստան. Հող ունեցող կամ անասնապահությունով զբաղվող տնային տնտեսություններում գյուղտեխնիկայի առկայությունն ըստ աղքատության մակարդակի, 2011թ.

(տոկոսներով)

	Ընդամենը	Ոչ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ
Տրակտոր, մինի տրակտոր	100	67.1	32.9	-
Բեռնատար ավտոմեքենա	100	78.6	21.4	-
Հացահատիկային կոմբայն	100	78.5	21.5	-
Տրակտորային կցասայլակ	100	74.5	25.5	-
Տրակտորային խոտհնձիչ	100	77.8	22.2	-
Կերահավաք կոմբայն	100	100	-	-
Հատիկագտիչ	100	100	-	-
Տրակտորային շարքացան	100	52.1	47.9	-
Տրակտորային գութան	100	65.9	34.1	-
Կուլտիվատոր	100	57.5	42.5	-
Ընդամենը	100	72.1	27.9	-

Աղբյուրը. *SSԿԱՀ 2011թ.*

Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու համար վարկ կամ պարտք վերցնելու հնարավորությունը. 2011թ.-ին գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու համար վարկ կամ պարտք վերցրել է հետազոտված տնային տնտեսությունների 14.3%-ը՝ այդ թվում գյուղական բնակավայրերից՝ 17.3% և 1.2%-ը՝ քաղաքային բնակավայրերից: Նշված համախմբի տնային տնտեսությունների 95.5%-ը վարկ է վերցրել բանկից (ներառյալ ՀՀ կառավարության և միջազգային կազմակերպությունների ծրագրերով նախատեսված միջոցների հաշվին ստացված վարկերը), իսկ 4.5%-ը՝ պարտք է վերցրել ընկերներից, ծնողներից, բարեկամներից կամ այլ աղբյուրներից: Ավելի մանրամասն, տվյալներն՝ ըստ աղքատության մակարդակի, բերված են Աղյուսակ 4.10-ում:

Բանկից օգտվելու հնարավորությունը կտրուկ տարբերվում է ըստ աղքատության մակարդակի: Այսպես, բանկից վարկ վերցնողների 97.1%-ը կազմում են ոչ աղքատ տնային տնտեսությունները, իսկ ծայրահեղ աղքատները՝ ընդամենը 2.9%:

Աղյուսակ 4.10. Հայաստան. Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու համար վարկ կամ պարտք վերցրած գյուղաբնակ տնային տնտեսություններն՝ ըստ աղքատության մակարդակի, 2008 և 2011թթ.

(տոկոսներով)

	Ոչ աղքատ		Աղքատ		Ծայրահեղ աղքատ	
	2008թ.	2011թ.	2008թ.	2011թ.	2008թ.	2011թ.
Վերցրել են վարկ կամ պարտք ընդամենը, այդ թվում՝	13.3	14.5	7.6	14.6	1.5	4.2
▪ Բանկից (ներառյալ կառավարության և միջազգային կազմակերպությունների ծրագրերով նախատեսված միջոցների հաշվին ստացված վարկերը)	79.6	97.1	86.5	93.0	65.9	2.9
▪ Ծնողներից	0.0	-	-	-	-	93.8
▪ Ընկերներից և բարեկամներից	19.6	1.5	12.2	6.1	-	3.3
▪ Այլ աղբյուրներից	0.8	1.4	1.3	0.9	34.1	-

Աղբյուրը. *SSYUՀ 2008 և 2011թթ.*

Միջին հաշվով գյուղատնտեսության եկամտաբեր չլինելը, ինչպես նաև, հողի ռոտզման հնարավորության և ֆինանսական միջոցների բացակայությունը, հանդիսանում են 2011թ.-ին հողը չմշակելու հիմնական պատճառները, համապատասխանաբար կազմելով՝ 23.8%, 15.8% և 22.0%, տրված պատասխանների շարքում: Հողը չմշակելու հաջորդ հիմնական պատճառներից են՝ հողի վատ որակը և հեռու լինելը, համապատասխանաբար՝ 11.2% և 9.2%: Հողը չմշակելու պատճառներն՝ ըստ քվինտիլային խմբերի բերված են Աղյուսակ 4.11-ում:

Աղյուսակ 4.11. Հայաստան. Հող ունեցող բնակչության հողի չմշակման պատճառներն ըստ քվինտիլային խմբերի, 2011թ.

(տոկոսներով)

Հողը չմշակելու պատճառները	Սպառման ագրեգատի քվինտիլային խմբեր*					
	Առաջին	Երկրորդ	Երրորդ	Չորրորդ	Հինգերորդ	Ընդամենը
Շատ հեռու է	4.1	12.8	10.3	8.7	9.5	9.2
Հողը վատորակ է	10.0	12.3	12.0	10.6	11.1	11.2
Հողը չի ոռոգվում	19.3	14.5	13.3	14.6	17.4	15.8
Մշակելը ձեռնտու չէ	21.1	23.0	23.0	26.2	24.1	23.8
Մշակելու համար փող չկա	33.0	25.3	23.4	20.7	15.9	22.0
Հիվանդ է, ծեր է	8.9	10.0	13.4	14.1	14.5	12.9
Այլ	3.6	2.1	4.6	5.1	7.5	5.1
Ընդամենը	100	100	100	100	100	100

Աղբյուրը. *SSYԱՀ 2011թ.*

**) սպառման ագրեգատի քվինտիլային խմբերի բաշխումը կատարվել է գյուղաբնակների ներքո:*

Վերջին գյուղատնտեսական սեզոնի ընթացքում ավելի հաճախ հանդիպած հիմնական դժվարություններն են՝ ըստ առաջնահերթության սկզբունքի՝ մեծածախ շուկաների բացակայությունը (տնային տնտեսությունների պատասխանների 12.6%-ը), աշխատուժի պակասը (պատասխանների 12.6%-ը), գյուղտեխնիկայի ձեռք բերումը (տնային տնտեսությունների պատասխանների 11.6%-ը), մթերքի իրացումը՝ 7%-ը, ոռոգման վարձի վճարը՝ 7%-ը և միջնորդի հետ գործ ունենալը՝ 4%:

4.4. Գյուղական ճանապարհների վիճակը և երթևեկության միջոցներից օգտվելը

Գյուղական բնակավայրերում ենթակառուցվածքների ազդեցությունը հիմնականում կանխատեսելի է: Գյուղերում բնակվող այն տնային տնտեսությունները, որոնք տեղակայված են կոշտ ծածկույթով ճանապարհների և շուկաների մոտակայքում՝ առավել ունևոր են:

2011թ.-ի ՏՏԿԱՀ-ի տվյալներով գյուղաբնակ տնային տնտեսությունների 28.1%-ն ունի որևէ տրանսպորտային միջոց՝ մարդատար, բեռնատար մեքենա կամ այլ ավտոտրանսպորտային միջոց: Այդ տնային տնտեսությունները, հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում, վառելիքի վրա ծախսել են միջինը 116 հազար դրամ, մեքենայի պահպանման համար, այդ թվում՝ պահեստամասեր և աշխատանքի դիմաց վճարումներ՝ 102 հազար դրամ, իսկ ավտոբուսի, երթուղային տաքսու և տաքսու վրա արված ծախսերը կազմել են 40 հազար դրամ:

2011թ.-ի ՏՏԿԱՀ-ի տվյալները ցույց են տալիս, թե սովորաբար ամսվա ընթացքում քանի օր են գյուղաբնակ տնային տնտեսությունները ծախսում ներքոհիշյալ փոխադրումների վրա՝ պարարտանյութ, սերմեր գնելու համար՝ 2.2 օր, գյուղմթերք վաճառելու համար՝ 5.7 օր, համայնքից դուրս աշխատելու համար՝ 18.2 օր, այլ նպատակների համար՝ 4.3 օր: Աղյուսակ 4.12-ում բերված է ճանապարհների և երթևեկության միջոցների որակի գնահատման ցուցանիշները գյուղաբնակ տնային տնտեսությունների կողմից:

Աղյուսակ 4.12. Հայաստան. Ճանապարհների և երթևեկության միջոցների որակի գնահատումը գյուղաբնակ տնային տնտեսությունների կողմից, 2011թ.

(տոկոսներով)

	Ընդամենը	Վատ	Միջին	Լավ	Գերազանց
Ներհամայնքային ճանապարհներ	100	66.7	28.0	5.3	-
Մարզկենտրոնի, քաղաքների, շուկաների հետ կապող ճանապարհներ	100	14.2	58.9	26.0	0.9
Ավտոբուսներ, միկրոավտոբուսներ, երթևեկության այլ միջոցներ	100	13.8	58.5	26.5	1.2

Աղբյուրը. *SSԿԱՀ 2011թ.*

Ինչպես ցույց են տալիս *SSԿԱՀ*-ի տվյալները, գյուղաբնակ տնային տնտեսությունների 67 %-ը ներհամայնքային ճանապարհների վիճակը գնահատել է վատ (նախորդ տարվա մակարդակը՝ 69%) (*Աղյուսակ 4.12*):

Մարզկենտրոնի, քաղաքների, շուկաների հետ կապող ճանապարհների վիճակը գնահատվել է վատ՝ 14 % գյուղաբնակ տնային տնտեսությունների կողմից, և նվազել է նախորդ տարվա մակարդակից (16 %):

Երթևեկության միջոցների (ավտոբուսներ, միկրոավտոբուսներ, երթևեկության այլ միջոցներ) որակը գնահատվել է վատ՝ 14% գյուղաբնակ տնային տնտեսությունների կողմից, ինչը 7 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա համեմատ:

Գյուղաբնակ տնային տնտեսությունների համար սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների մատչելիությունը բերվում է ստորև ներկայացված աղյուսակում:

Աղյուսակ 4.13. Հայաստան. Հեռավորությունը մինչև մոտակա ծառայություն տրամադրող հաստատություններ, գյուղաբնակ տնային տնտեսությունների համար, 2011թ.

(տոկոսներով)

Ծառայություններ տրամադրող հաստատություններ	Մինչև 1 կմ	1-3կմ	4-5կմ	6-10կմ	10 կմ և ավել
Բուժկետ	73.8	23.4	0.9	0.7	1.2
Հիվանդանոց	3.4	2.4	10.8	31.7	44.7
Դեղատուն	28.8	18.4	5.4	17.4	30.0
Գյուղապետարան	76.7	22.6	0.2	0.4	0.1
Նախադպրոցական հաստատություն	46.3	22.9	4.5	10.3	16.0
Միջնակարգ դպրոց	73.3	23.8	0.6	1.4	0.9
Տարրական/հիմնական դպրոց	-	-	-	-	-
Գյուղարտադրանքի վաճառքի շուկա	0.8	4.3	11.4	27.2	56.3
Բանկ/ֆինանսական ծառայություն	0.5	7.0	12.3	31.8	48.4

Աղբյուրը. *SSԿԱՀ 2011թ.*

Գյուղաբնակ տնային տնտեսությունները բուժկետ հասնելու համար ծախսում են միջինում 11 րոպե, հիվանդանոց՝ 18 րոպե, դեղատուն՝ 17 րոպե, գյուղապետարան՝ 11 րոպե, մանկապարտեզ՝ 15 րոպե, միջնակարգ դպրոց՝ 12 րոպե, գյուղարտադրանքի վաճառքի շուկա՝ 27 րոպե և բանկ/ֆինանսական ծառայություն՝ 22 րոպե :

Գյուղաբնակ տնային տնտեսությունների համար միջին հեռավորությունը մինչև մոտակա բուժկետ կազմել է 1.0 կմ, հիվանդանոց՝ 12.0 կմ, դեղատուն՝ 8.1 կմ, գյուղապետարան՝ 0.7 կմ, մանկապարտեզ՝ 4.9 կմ, միջնակարգ դպրոց՝ 0.9 կմ, գյուղարտադրանքի վաճառքի շուկա՝ 17.3 կմ և բանկ/ֆինանսական ծառայություն՝ 12.9 կմ :

Գյուղաբնակ տնային տնտեսությունների մեծ մասը ծառայություններ տրամադրող որոշ հաստատություններ (այն է՝ բուժկետ, գյուղապետարան, միջնակարգ դպրոց, նախադպրոցական հաստատություն) հասնելու համար չի օգտագործում ոչ մեքենա, ոչ էլ ավտոբուս/միկրոավտոբուս: Իսկ հիվանդանոց, բանկ, գյուղարտադրանքի վաճառքի շուկա և դեղատուն հասնելու համար գյուղաբնակ տնային տնտեսությունների մեծ մասը օգտվում է մեքենայից կամ ավտոբուսից: Ավելի մանրամասն տվյալները բերված են Աղյուսակ 4.14-ում:

Աղյուսակ 4.14. Հայաստան. Գյուղական բնակավայրերում ծառայություններ տրամադրող հաստատություններ հասնելու համար օգտագործվող երթևեկության միջոցներ, 2011թ.

(տոկոսներով)

Ծառայություններ տրամադրող հաստատություններ	Մեքենա	Ավտոբուս/ միկրոավտոբուս	Այլ (ոտքով, տաքսի, սայլ, հեծանիվ, մոտոցիկլ, ձի, ավանակ)
Բուժկետ	4.4	2.9	92.7
Հիվանդանոց	57.7	12.7	29.6
Դեղատուն	19.4	34.8	45.8
Գյուղապետարան	2.5	1.3	96.2
Նախադպրոցական հաստատություն	8.6	28.1	63.3
Միջնակարգ դպրոց	2.9	3.8	93.3
Գյուղարտադրանքի վաճառքի շուկա	33.6	64.0	2.4
Բանկ/ֆինանսական ծառայություն	29.6	66.4	4.0

Աղբյուրը. *SS4UՀ 2011թ.*

Գլուխ 5. Մանկական աղքատությունը

5.1 Մանկական աղքատությունը

Մույն գլխում գնահատվում է մանկական աղքատությունն ըստ սպառման ագրեգատի, նյութական և կացարանային չքավորությունը, ինչպես նաև սոցիալական ապահովության նպաստների դերն աղքատությունը մեղմելու գործում: Առաջին անգամ գնահատվում են երեխաների կարիքները:

Մինչև 18 տարեկան երեխաների 4.7%-ն ապրում է ծայրահեղ աղքատության, իսկ 41.9%-ն՝ աղքատության մեջ: Ծայրահեղ աղքատ և աղքատ է հանրապետության բնակչության համապատասխանաբար՝ 3.7 և 35.0%-ը (Աղյուսակ 5.1): Այսպիսով, երեխաներն ավելի խոցելի են ընդհանուր աղքատության ռիսկի նկատմամբ, քան բնակչությունն ամբողջությամբ վերցված:

2011թ.-ի տվյալները ցույց են տալիս մանկական աղքատության տարբերություններն ըստ սեռի՝ աղքատ է աղջիկների 42.9 և տղաների՝ 41.1%-ը (բոլոր երեխաների 41.9%-ը): Մանկական աղքատությունը տարբերվում է նաև ըստ տարածաշրջանների այսպես, քաղաքային բնակավայրերում բնակվող երեխաների ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 6.1%՝ գյուղական բնակավայրերում բնակվող երեխաների 2.4%-ի համեմատ, իսկ ընդհանուր աղքատության մակարդակը համապատասխանաբար՝ 41.6% և 42.5%-ի համեմատ:

Աղյուսակ 5.1. Հայաստան. Մանկական աղքատության մակարդակը, 2011թ.-ին

(տոկոսներով)

	0-18 տարեկան երեխաները	այդ թվում		Ամբողջ բնակչությունը (համեմատության համար)
		աղջիկներ	տղաներ	
Ծայրահեղ աղքատություն	4.7	4.7	4.7	3.7
Աղքատություն	41.9	42.9	41.1	35.0

Աղբյուրը. *SS4U2 2011*

Մանկական աղքատության ցուցանիշների միտումները 2008-2011թթ.-ին բերված են Աղյուսակ 5.2, որտեղից երևում է, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցության հետևանքով մանկական աղքատության մակարդակը բարձրանում էր 2009-2011թթ.-ին:

**Աղյուսակ 5.2. Հայաստան. Մանկական աղքատության ցուցանիշների դինամիկան
2008-2011թթ.-ին***

(տոկոսներով)

	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ոչ աղքատ
2008թ.	1.6	29.8	70.2
2009թ.	3.8	35.7	64.3
2010թ.	3.7	41.4	58.6
2011թ.	4.7	41.9	58.1

Աղբյուրը. *SSՀԱՀ 2008-2011թթ.*

**Համադրելիության բերելու նկատառումով ցուցանիշները վերահաշվարկվել են ըստ 2009թ.-ին կիրառված մեթոդաբանության:*

Աղքատության միջին ցուցանիշների հետևում թաքնված է էական կախվածությունը տնային տնտեսության տարբեր բնութագրիչներից: Մանկական աղքատության ցուցանիշներն էապես տատանվում են՝ կախված տնային տնտեսությունում երեխաների թվաքանակից, կրտսեր երեխայի տարիքային խմբից, հաշմանդամ երեխաների առկայությունից, ինչպես նաև տնային տնտեսության գլխավորի բնութագրիչներից, այդ թվում՝ սեռից, կրթական մակարդակից և զբաղվածության կարգավիճակից: Զգալի տատանումներ են առաջացնում նաև տնային տնտեսության աշխատող անդամների մասնաբաժինը և բնակության վայրը:

Բազմանդամ ընտանիքների երեխաների աղքատ լինելու հավանականությունն ավելի բարձր է: Երկու կամ ավելի քույր/եղբայր ունեցող երեխաներն առավել խոցելի են, թե ծայրահեղ, թե ընդհանուր աղքատության նկատմամբ: Մինչև 18 տարեկան երեք կամ ավելի երեխա ունեցող ընտանիքներում աղքատ է երեխաների 56.8%-ը (բոլոր երեխաների մեջ՝ 41,9%-ի համեմատ), իսկ մեծ ընտանիքներում ծայրահեղ աղքատ է երեխաների 8.8%-ը (ընդհանուրի մեջ 4,7 %-ի համեմատ) (Աղյուսակ 5.3):

Տարիքով ավելի փոքր երեխաների աղքատ լինելու հավանականությունն ավելի բարձր է: Աղքատության ռիսկն ավելի մեծ է այն ընտանիքների երեխաների շրջանում, որոնցում կրտսեր երեխան հինգ տարեկան է կամ ավելի փոքր: Նշված ընտանիքներում աղքատ է երեխաների 46.9 %-ը, մինչդեռ այն ընտանիքներում, որոնցում կրտսեր երեխան 15-18 տարեկան է, աղքատ է երեխաների 35.8 %-ը: Նմանօրինակ միտում նկատվել է նաև ծայրահեղ աղքատության գծի համեմատ կատարված վերլուծություններում:

Մեկ կամ ավելի հաշմանդամ երեխա ունեցող տնային տնտեսություններում աղքատության ռիսկն ավելի բարձր է: Չնայած որ երեխաների ընդամենը 1,2 տոկոսն է հաշմանդամ կամ բնակվում այլ հաշմանդամ երեխաների հետ միասին, նրանց 64.8%-ն է աղքատ, իսկ 8.4%-ը՝ ծայրահեղ աղքատ: Այդպիսի երեխաները աղքատ երեխաների թվում կազմում են 1.9% , ընդ որում՝ աղքատության գծից նրանց միջին շեղումը կազմել է 14%:

Կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններում երեխաների աղքատ լինելու հավանականությունը զգալիորեն բարձր է: Երեխաների ընդհանուր թվաքանակի մեկ քառորդն (24.1%) ապրում է կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններում, որոնց 44.3%-ն աղքատ է, իսկ 5,9%-ը՝ ծայրահեղ աղքատ, իսկ տղամարդու գլխավորությամբ

տնային տնտեսություններում ապրող երեխաների շրջանում այն կազմում է համապատասխանաբար՝ 42.1 և 4.7%:

Մանկական աղքատության վրա ազդող կարևոր գործոններից է նաև տնային տնտեսության գլխավորի ամուսնական կարգավիճակը: Ամուրի (չամուսնացած), այրի կամ ամուսնալուծված գլխավորով տնային տնտեսություններում ապրող երեխաների աղքատ լինելու հավանականությունն ավելի բարձր է (46,0%), քան ամուսնացած կամ համատեղ բնակվողներինը (41.2%): Բացի այդ, ծայրահեղ աղքատության գծից ներքև նրանց հայտնվելու հավանականությունը 10%-ով մեծ է:

Աղքատության ռիսկը նվազում է, երբ երեխան ապրում է այնպիսի տնային տնտեսությունում, որտեղ գլխավորի կրթական մակարդակն ավելի բարձր է: Աղքատ լինելու հավանականությունն էապես ավելի բարձր է այն երեխաների շրջանում, որոնք ապրում են այնպիսի տնային տնտեսություններում, որոնց գլխավորը կրթություն չունի կամ ունի տարրական կրթություն (58.1%), ունի ոչ լրիվ միջնակարգ կրթություն (48.8%) , միջնակարգ կրթություն (48.2%), միջնակարգ մասնագիտական կամ թերի բարձրագույն կրթություն (40.4%), համեմատ այն երեխաների, որոնք բնակվում են այնպիսի տնային տնտեսություններում, որտեղ գլխավորը բարձրագույն կրթություն ունի (22.9%): Ծայրահեղ աղքատության ռիսկն ամենաբարձրն է այն երեխաների շրջանում, որոնք բնակվում են ոչ տարրական և ցածր կրթություն ունեցողի գլխավորությամբ տնային տնտեսություններում: Այնուհանդերձ, երեխաների թվաքանակի 43.4%-ն ապրում է այնպիսի տնային տնտեսություններում, որտեղ գլխավորն ունի միջնակարգ կրթություն:

Տնային տնտեսության գլխավորի զբաղվածության կարգավիճակը նույնպես մանկական աղքատությունը կանխորոշող կարևոր գործոն է: Թե աղքատության, թե ծայրահեղ աղքատության ռիսկն ամենացածրն է այն տնային տնտեսություններում բնակվող երեխաների մոտ, որոնց գլխավորը վերջին յոթ օրվա ընթացքում կատարել է շահութաբեր որևէ աշխատանք: Այսպես, այն տնային տնտեսությունների երեխաների շրջանում, որոնց գլխավորն աշխատում է, աղքատությունը կազմում է 36.7%՝ չաշխատողների 48.2%-ի համեմատ: Հարկ է նշել, որ բոլոր երեխաների 45.9%-ն է ապրում չաշխատող գլխավորով տնային տնտեսություններում:

Տնային տնտեսության չափահաս անդամներից աշխատանք ունեցողների թվաքանակը նույնպես ազդում է մանկական աղքատության մակարդակի վրա: Աղքատության ռիսկն ամենաբարձրն է այն երեխաների շրջանում, որոնց տնային տնտեսություններում 19-60 տարեկան չափահաս անդամներից ոչ մեկը չի աշխատում: Ծայրահեղ աղքատության ռիսկն ամենացածրն է (0,8%) այն տնային տնտեսությունների երեխաների շրջանում, որոնց անդամներից աշխատանք ունեն ոչ միայն աշխատանքային տարիքի չափահաս անդամները, այլև աշխատանքային տարիքից ցածր և բարձր տարիքի անդամները: Պետք է նշել, որ երեխաների թվաքանակի համարյա կեսը (49.7%) ապրում է այնպիսի տնային տնտեսություններում, ուր աշխատում են 19-60 տարեկան ոչ բոլոր չափահաս անդամները:

Աղյուսակ 5.3. Հայաստան. Աղքատության մակարդակը, խորությունը և կառուցվածքն ըստ տնային տնտեսության տեսակի, 2011թ.-ին

(տոկոսներով)

	Երեխաների ծայրահեղ աղքատության մակարդակը	Երեխաների աղքատության մակարդակը	Աղքատության խորությունը	%-ն աղքատ բնակչության մեջ	Երեխաների ընդհանուր թվաքանակի կառուցվածքը
Մինչև 18 տարեկան երեխաների թվաքանակը					
Մեկ	3.0	32.8	7	18.8	24.0
Երկու	3.6	39.2	9	48.2	51.6
Երեք կամ ավելի	8.8	56.8	14	33.0	24.4
Սեռը					
Աղջիկ	4.7	42.9	10	46.6	47.7
Տղա	4.7	41.1	10	53.4	52.3
Կրտսեր երեխայի տարիքը					
0-5	4.7	46.9	11	49.6	44.3
6-14	5.1	38.5	9	42.2	46.1
15-18	3.1	35.8	8	8.2	9.6
Չափահասների թվաքանակը (19 – 60 տարեկան)					
Զրո/մեկ	3.7	35.5	8	8.9	10.5
Երկու	3.1	37.7	8	43.2	48.2
Երեք	4.2	42.3	10	20.5	20.3
Չորս կամ ավելի	9.5	54.5	13	27.4	21.0
Տնային տնտեսության թռչակի անցած անդամների թվաքանակը					
Զրո	4.6	40.9	10	65.7	67.4
Մեկ	5.1	43.8	10	24.2	23.1
Երկու կամ ավելի	4.7	44.8	10	10.1	9.5
Հաշմանդամ չափահասների թվաքանակը 16.9					
Զրո	4.5	40.3	9	79.9	83.1
Մեկ կամ ավելի	5.6	50.0	11	20.1	16.9
Հաշմանդամ երեխաների թվաքանակը					
Զրո	4.7	41.7	10	98.1	98.8
Մեկ կամ ավելի	8.4	64.8	14	1.9	1.2
Տնային տնտեսության գլխավորի սեռը (ըստ առկա բնակչության)					
Արական	4.7	42.1	10	74.9	75.9
Իգական	5.9	44.3	11	25.1	24.1
Տնային տնտեսության գլխավորի ամուսնական կարգավիճակը					
Ամուսնացած / համատեղ բնակվող	4.9	41.2	10	69.2	71.5
Ամուսնացած չի եղել /այրի/ ամուսնալուծված	5.4	46.0	11	30.8	28.5
Տնային տնտեսության գլխավորի կրթության մակարդակը					
Տարրական և ցածր	6.6	58.1	16	7.9	5.8
Թերի միջնակարգ	5.3	48.8	12	12.1	10.5
Միջնակարգ ընդհանուր	6.3	48.2	12	49.0	43.4
Միջնակարգ մասնագիտական	4.2	40.4	9	21.5	22.7
Բարձրագույն	2.2	22.9	4	9.5	17.6
Տնային տնտեսության գլխավորի զբաղվածության կարգավիճակը					
Չի աշխատել հետագո	7.3	48.2	12	52.7	45.9

	Երեխաների ծայրահեղ աղքատության մակարդակը	Երեխաների աղքատության մակարդակը	Աղքատության խորությունը	%-ն աղքատ բնակչության մեջ	Երեխաների ընդհանուր թվաքանակի կառուցվածքը
տությանը նախորդող 7 օրերի ընթացքում					
Աշխատել է հետազոտությանը նախորդող 7 օրերի ընթացքում	2.5	36.7	8	47.3	54.1
Տնային տնտեսության չափահասների (19-60 տարեկան) զբաղվածության կարգավիճակը					
Որևէ չափահաս չի աշխատում	10.2	57.9	15	16.2	11.7
Ոչ բոլոր չափահասներն են աշխատում	6.0	45.5	11	53.7	49.7
Բոլոր չափահասներն աշխատում են	1.7	30.7	6	22.3	30.4
Աշխատում են ոչ միայն չափահասները	0.8	39.8	8	7.8	8.2
Ընդամենը	4.7	41.9	10.0	100	100

Աղբյուրը. *SSԿԱՀ, 2011թ.*

Մանկական աղքատության մակարդակն էապես տարբերվում է ըստ մարզերի: Աղյուսակ 5.4-ում ներկայացված են մանկական աղքատության ցուցանիշներն ըստ ք.Երևանի և 10 մարզերի: Մարզերի միջև տարբերությունները զգալի են թե ծայրահեղ, թե ընդհանուր աղքատության առումով: Ծայրահեղ մանկական աղքատությունը տատանվում է ամենացածր՝ 1.5%-ից (Արագածոտնի մարզ) մինչև ամենաբարձր՝ 8% (Շիրակի և Կոտայքի մարզեր): Սյունիքի մարզում հետազոտության ընտրանքային համակցության մեջ ընդգրկված տնային տնտեսությունների կազմում ծայրահեղ աղքատ երեխաներ չեն արձանագրվել: Նմանատիպ միտում է նկատվում աղքատության ընդհանուր մակարդակի առումով: Արագածոտնում աղքատության մակարդակը միջինից ամենացածրն է՝ 18.0%, իսկ ամենաբարձրը Շիրակի մարզում 56.0%:

Աղյուսակ 5.4. Հայաստան. Աղքատության մակարդակը, պակասությունը և կառուցվածքն ըստ մարզերի, 2011թ.

(տոկոսներով)

	Երեխաների ծայրահեղ աղքատության մակարդակը	Երեխաների աղքատության մակարդակը (ընդհանուր)	Աղքատության խորությունը	%-ն աղքատ բնակչության մեջ	Երեխաների ընդհանուր թվաքանակի կառուցվածքը
Երևան	3.8	33.1	7	24.4	30.8
Արագածոտն	1.5	18.0	3	1.5	3.5
Արարատ	3.8	49.2	10	10.0	8.5
Արմավիր	5.6	47.0	12	10.1	9.0
Գեղարքունիք	1.8	43.5	8	6.1	5.9
Լոռի	6.8	52.1	13	12.4	10.0
Կոտայք	8.1	51.3	16	14.3	11.7
Շիրակ	8.2	56.0	13	13.0	9.8
Սյունիք	-	31.7	6	3.1	4.1
Վայոց Ձոր	2.4	33.6	5	1.5	1.9

Տավուշ	2.0	31.5	6	3.6	4.8
Ընդամենը	4.7	41.9	10	100	100

Աղբյուրը. *SSԿԱՀ, 2011թ.*

5.2. Նյութական գրկանքներ (չքավորություն)

Ի լրումն ըստ սպառման աղքատության վերլուծության, սույն բաժնում դիտարկված են Հայաստանում երեխաների նյութական չքավորության խնդիրները: Նյութական չքավորությունը չափվում է տնային տնտեսությունում երկարաժամկետ օգտագործման ապրանքների բացակայությամբ: Վերլուծության մեջ ներառվել են երկարաժամկետ օգտագործման ինը հետևյալ ապրանքները՝ սառնարան, լվացքի մեքենա, բջջային հեռախոս, փոշեկուլ, տեսախցիկ, լուսանկարչական ապարատ, աուդիո համակարգ, ավտոմեքենա և համակարգիչ: Այս ապրանքներն են ընտրվել, քանի որ 2009-2011թթ.-ին տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության մասնակից տնային տնտեսությունների առնվազն 10%-ը դրանցից ունեցել է: Բայց և այնպես, պարզ չէ, թե արդյոք տնային տնտեսություններն այդ ապրանքները չունեն ֆինանսական խնդիրների, թե համապատասխան ցանկություն չունենալու պատճառով:

Աղքատ երեխաների շրջանում երեխաների ընդհանուր թվաքանակի համեմատ զգալիորեն ավելի բարձր է երկարաժամկետ օգտագործման վերոհիշյալ ապրանքներից մեկը կամ մյուսը չունեցող տնային տնտեսություններում ապրելու հավանականությունը: Ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններում ապրող երեխաների շրջանում, թվարկված ապրանքներից որևէ մեկը չունենալու հավանականությունն ամենաբարձրն է: Այսպես օրինակ, եթե երեխաների ընդհանուր թվաքանակի 4.9%-ն է ապրում սառնարան չունեցող տնային տնտեսություններում, ապա աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների համապատասխանաբար 7.6 և 19.2%-ն է ապրում այս ապրանքը չունեցող տնային տնտեսություններում: Կամ, երեխաների ընդհանուր թվաքանակի 73.4%-ն է ապրում ավտոմեքենա չունեցող տնային տնտեսություններում, մինչդեռ նույն ցուցանիշն աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների շրջանում կազմում է համապատասխանաբար՝ 85.3 և 90.8%:

Աղյուսակ 5.5. Երկարաժամկետ օգտագործման ապրանքների բացակայությունը, 2011թ.

(տոկոսներով)

	Բոլոր երեխաները	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
Սառնարան	4.9	7.6	19.2
Լվացքի մեքենա	9.2	15.6	34.0
Բջջային հեռախոս	1.7	3.4	11.7
Փոշեկուլ	33.1	43.8	68.1
Տեսամագնիտոֆոն	46.2	55.8	76.1
Լուսանկարչական ապարատ	60.9	73.1	88.1
Աուդիո համակարգ	58.8	66.3	78.2
Ավտոմեքենա	73.4	85.3	94.1
Համակարգիչ	67.5	82.3	90.8

Աղբյուրը. *SSԿԱՀ, 2011թ.*

Աղքատ և ոչ աղքատ երեխաների միջև չքավորության մակարդակի տարբերություններն էական են: Երեխաների ընդհանուր թվաքանակի 3,7%-ն է ապրում նշված երկարաժամկետ օգտագործման ապրանքներից ոչ մի բացակա ապրանք չունեցող տնային տնտեսություններում, այն դեպքում, երբ աղքատ երեխաների տնային տնտեսությունների համար այդ ցուցանիշը կազմել է 0,7%, իսկ այդպիսի ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններ արձանագրված չեն (Աղյուսակ 5.6): Ծայրահեղ աղքատ երեխաների շրջանում թվարկված բոլոր ինը ապրանքները չունենալու հավանականությունն ավելի բարձր է (2,5%), քան աղքատ երեխաների շրջանում (0,4%): Քանի որ, ծայրահեղ (պարենային) աղքատության ցուցանիշը ներառում է երեխաների ընդհանուր թվաքանակի միայն 4,7%-ը և կարող է ծայրահեղ աղքատության բավականաչափ հուսալի ցուցիչ չլինել, իսկ որպեսզի չքավորության ցուցանիշը համադրելի լինի մանկական՝ ըստ սպառման աղքատության հաշվարկված 41,9%-ի ցուցանիշին, աղքատության գիծ է համարվում թվարկված ապրանքներից առնվազն հինգի բացակայությունը: Այսպիսով ստացվում է, որ նյութական չքավորության մեջ է երեխաների ընդհանուր թվաքանակի 32.2%-ը¹: Աղքատության ցուցիչները կիրառելու դեպքում ստացվում է, որ աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների թվում նյութական չքավորությունն ավելի բարձր է և կազմում է համապատասխանաբար՝ 48.8 և 74.8%:

Աղյուսակ 5.6. Երկարաժամկետ օգտագործման ինը ապրանքներից քանիսը չունի տնային տնտեսությունը, 2011թ.

(տոկոսներով)

	Բոլոր երեխաները	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
0 (բոլոր 9 առկա)	3.7	0.7	-
1	10.7	4.8	0.4
2	17.2	12.0	3.3
3	18.5	16.2	9.8
4	17.7	17.5	11.7
5	16.1	21.0	16.4
6	10.1	17.0	27.1
7	4.6	8.2	20.3
8	1.2	2.2	8.5
9	0.2	0.4	2.5

Աղբյուրը. *SSՀԱՀ, 2011թ.*

Այս մեթոդաբանության ակնհայտ խնդիրն այն է, որ պարզ հաշվարկի ինդեքսի մեջ ներառված ապրանքները կարող են հավասարապես կարևոր չլինել տնային տնտեսության բարօրության տեսակետից, մինչդեռ 2011թ.-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունը որևէ տեղեկություն չի տալիս երկարաժամկետ օգտագործման այդ ապրանքների ցանկալիության կամ կարևորության մասին: Ավելին, տեղեկություններ չեն ստացվել այն մասին, թե արդյոք տվյալ ապրանքը չունենալու

¹ Եթե գիծ համարվի ապրանքներից առնվազն չորսի բացակայությունը, ապա նյութական չքավորությունը զգալիորեն ավելի բարձր կլինի՝ 50 %:

պատճառը տնային տնտեսության համար դրա անմատչելիությունն է, թե համապատասխան ցանկության բացակայությունը: Այս բացն առնվազն մասամբ շտկվում է կշռված չքավորության ինդեքսի կիրառությամբ, որով ենթադրվում է, որ տնային տնտեսությունները համեմատաբար ավելի չքավոր են, եթե նրանք չունեն այլ տնային տնտեսությունների մեծ մասի ունեցած ապրանքը: Օրինակ, սառնարան չունենալու կշիռն ավելի մեծ է, քան համակարգիչ չունենալունը, քանի որ սառնարան ունեցող տնային տնտեսությունների քանակը գերազանցում է համակարգիչ ունեցողներին: Յուրաքանչյուր ապրանքի բացակայության դիմաց տրվող 1 միավորը բազմապատկվում է կշռման ընտրանքի մեջ մտնող և համապատասխան ապրանքն ունեցող տնային տնտեսություններում ապրող երեխաների համամասնությամբ: Ապա, յուրաքանչյուր տնային տնտեսության բոլոր ապրանքների դիմաց ստացած միավորները գումարվում են և բաժանվում ապրանքների ընդհանուր թվի, այսինքն՝ ինի վրա: Ստացվող միավորը բազմապատկվում է 100-ով՝ ստանալու շարունակվող փոփոխական, որի արժեքը տատանվում է 0-ից (բոլոր ապրանքներն առկա են) մինչև 100 (բացակայում են բոլոր այն ապրանքները, որոնք մյուս բոլոր տնային տնտեսություններն ունեն): Ստացվող ինդեքսը դժբախտաբար չի ներառում այն տնային տնտեսությունների որոշ արժեքները, որոնց վերաբերյալ երկարաժամկետ օգտագործման ինը ապրանքներից որևէ մեկի մասին տեղեկություններ չկան:

Կշռված չքավորության միավորը միջին հաշվով ավելի բարձր է աղքատ երեխաների շրջանում: Երեխաների ընդհանուր թվաքանակի միջին միավորը 10.8 է, մինչդեռ աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների միջին միավորը կազմում է, համապատասխանաբար՝ 13.7 և 20.4 (Աղյուսակ 5.7): Դա վկայում է այն մասին, որ աղքատ երեխաներն ապրում են այնպիսի տնային տնտեսություններում, որոնցում բացակայում են այլ տնային տնտեսություններում որպես կանոն հանդիպող ապրանքները:

Աղյուսակ 5.7. Տարածվածությամբ կշռված չքավորության միջին միավորը և չքավորության մակարդակը, 2011թ.

(տոկոսներով)

	Բոլոր երեխաները	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
Միջին	10.8	13.7	20.4
Ստանդարտ շեղում	7.7	8.5	10

Աղբյուրը. *SSYUՀ, 2011*

5.3. Կացարանային չքավորությունը

Բնակարանային հիմնախնդիրները կարող են բացասաբար ազդել երեխաների առողջության, անվտանգության, կրթության և սոցիալական զարգացման վրա: 2011թ.-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունը ներառում է որոշ հարցեր բնակարանային պայմանների մասին, ներառյալ կոմունալ ծառայությունների

և օգտագործվող սենյակների քանակի, ինչպես նաև հարցեր բնակարանային հիմնախնդիրների և կացարանային հարմարությունների որակի վերաբերյալ հարցվողների կարծիքի մասին:

Աղքատ երեխաները հաճախ բնակվում են կարևոր կացարանային հարմարություններից զուրկ տներում: Աղքատ տնային տնտեսությունների երեխաները ավելի հաճախ բնակվում են կարևոր հարմարություններից զուրկ՝ խոհանոց, սառը և տաք հոսող ջուր, կենտրոնացված գազամատակարարում, հեռախոս, խողովակային ջրահեռացմամբ զուգարան, լոգարան կամ ցնցուղ չունեցող կացարաններում¹ (Աղյուսակ 5.8): Ծայրահեղ աղքատ երեխաներն ավելի հաճախ, քան աղքատ երեխաները, զրկված են այնպիսի կացարանային հարմարություններից, ինչպիսիք են տաք հոսող ջուրը, կենտրոնացված գազամատակարարումը և ստացիոնար հեռախոսը: Մյուս կողմից ծայրահեղ աղքատ երեխաները բոլոր երեխաների համեմատ ավելի հաճախ են զրկված Աղյուսակ 5.8-ում թվարկված բոլոր հարմարություններից, բացի կենտրոնացված ջրամատակարարումից և խողովակային ջրահեռացմամբ զուգարանից:

Աղյուսակ 5.8. Կացարանային հարմարությունները բացակայում են կամ չեն գործում, 2011թ.

(տոկոսներով)

Բնակարանում չկա	Բոլոր երեխաները	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
Կենտրոնացված ջրամատակարարում	4.7	5.6	1.7
Հոսող տաք ջուր	45.9	58.0	75.4
Միացում կենտրոնացված կոյուղու համակարգին	32.6	34.6	16.6
Կենտրոնացված գազամատակարարում	19.5	22.6	22.7
Լոգարան կամ ցնցուղ	21.9	29.9	35.1
Խոհանոց	4.7	6.8	3.2
Հեռախոս ստացիոնար	30.2	36.1	45.7

Աղբյուրը. *SSYUՀ, 2011թ.*:

Աղքատ երեխաների շրջանում, երեխաների ընդհանուր թվաքանակի համեմատ, ավելի բարձր է կացարանային մեծաթիվ հարմարություններ չունենալու հավանականությունը: Երեխաների ընդհանուր թվաքանակի ավելի քան մեկ երրորդը (38%) ապրում է թվարկված բոլոր հարմարություններն ունեցող տներում, մինչդեռ աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների շրջանում այդ ցուցանիշը կազմում է համապատասխանաբար՝ 28 և 18 % (Աղյուսակ 5.9): Ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններում ապրող երեխաների շրջանում ամենաբարձրն է կացարանային յոթ հարմարություններից երկուսի բացակայությունը (տեսակարար կշիռը՝ 25,5%), միաժամանակ ամենացածրն է կացարանային հարմարություններից հինգի՝ չունենալը (6.9%): Որպեսզի կացարանային չքավորության ցուցանիշը համադրելի լինի մանկական՝ ըստ սպառման աղքատության 2011 թվականի ընդհանուր ցուցանիշին (41,9%), կացարանային չքավորության գիծ է համարվում կացարանային երկու կամ ավելի

¹ Կենցաղային հարմարությունը բացակայում է կամ չի գործում:

հարմարություններ չունենալը: Այս սահմանման արդյունքում ստացվում է, որ երեխաների ընդհանուր թվաքանակի 43%-ը զրկված է կացարանային նվազագույն քանակի հարմարություններից: Աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների շրջանում ցուցանիշն էապես ավելի բարձր է, համապատասխանաբար՝ 52 և 60% :

Աղյուսակ 5.9. Կացարանային հարմարություններից քանիսն են բացակայում կամ չեն գործում, 2011թ.

(տոկոսներով)

	Բոլոր երեխաները	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
0	38.1	28.0	17.5
1	19.1	20.5	22.3
2	14.1	15.6	25.5
3	12.5	15.6	19.0
4	8.6	10.0	8.8
5	5.2	6.9	6.9
6	2.0	2.9	0.0
7	0.4	0.5	-

Աղբյուրը. *SSYUZ, 2011թ.*

Աղքատ երեխաների բնակարանային ավելի վատ պայմաններում ապրելու հավանականությունը նույնպես ավելի բարձր է: Աղքատության մեջ (ըստ սպառման) հայտնված տնային տնտեսությունների երեխաների բնակարանի հետ կապված խնդիրներ ունեցող կացարաններում բնակվելու հավանականությունն, ընդհանուր առմամբ, ավելի բարձր է, քան երեխաների ընդհանուր թվաքանակում (Աղյուսակ 5.10): Օրինակ, քանդված փեղկեր և դռներ ունեցող տնային տնտեսություններում է բնակվում աղքատ երեխաների 33 և ծայրահեղ աղքատ երեխաների 50 տոկոսը՝ երեխաների ընդհանուր թվաքանակի շրջանում արձանագրված 25 տոկոսի համեմատ: Բնակարանի հետ կապված որոշ խնդիրներ, ինչպիսիք են, օրինակ՝ աղբահեռացման խնդիրները, բոլոր տնային տնտեսություններում ունեն գրեթե նույնպիսի տարածվածություն: Անբավարար ջեռուցման խնդիր ունեցող տնային տնտեսություններում է բնակվում աղքատ երեխաների 55 և ծայրահեղ աղքատ երեխաների 66%-ը՝ երեխաների ընդհանուր թվաքանակի շրջանում արձանագրված 45%-ի համեմատ:

Աղյուսակ 5.10. Հայաստան. Բնակարանի հետ կապված խնդիրները, 2011թ.

(տոկոսներով)

Բնակարանը չունի	Բոլոր երեխաները	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
1. Մակերեսի սակավություն	36.2	41.3	57.8
2. Աղմուկ հարևաններից և շրջապատից	4.8	4.8	3.8
3. Վատ լուսավորվածություն	13.7	16.4	22.9
4. Ջեռուցման պակաս	44.7	54.5	65.8
5. Խոնավություն	35.6	39.7	40.6
6. Կաթող տանիք	20.5	26.0	28.7
7. Քանդված պատեր և հատակ	27.2	34.3	45.4

Բնակարանը չունի	Բոլոր երեխաները	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
8. Քանդված փեղկեր և դռներ	25.2	33.3	49.8
9. Երթևեկության խցանում	1.9	1.7	0.2
10. Արդյունաբերական արտանետում	3.1	3.2	2.5
11. Վերելակը հաճախակի չի գործում	19.4	21.6	42.5
12. Ջրամատակարարումը վատ է	25.4	30.3	22.5
13. Աղբահավաքումը վատ է	20.2	20.3	13.2
14. Բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման տարածքների և բակի սպասարկումը վատ է	22.1	25.7	24.5
15. Այլ	5.0	4.9	5.4

Աղբյուրը. *SSՀԱՀ. 2011թ.*

Բացի այդ, երեխաների ընդհանուր թվաքանակի համեմատ աղքատ երեխաները բնակարանի հետ կապված ավելի մեծ թվով խնդիրներ ունեն: Ծայրահեղ աղքատ երեխաների 15 տոկոսն է ապրում բնակարանային վերոհիշյալ 15 խնդիրներից որևէ մեկը չունեցող տնային տնտեսություններում՝ երեխաների ընդհանուր թվաքանակի 17 և աղքատ երեխաների 13 % ցուցանիշների համեմատ (Աղյուսակ 5.11):

Աղքատ և ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների երեխաների շրջանում ավելի ցածր է բնակարանի մեկ, երկու կամ երեք խնդիր ունեցող տնային տնտեսությունում բնակվելու, և ավելի բարձր՝ բնակարանի չորս կամ ավելի խնդիր ունեցող տնային տնտեսությունում բնակվելու հավանականությունը: Այնուհանդերձ, գրեթե որևէ երեխա չի բնակվում 10-15 խնդիր ունեցող բնակարանում: 9 կամ ավելի խնդիր ունեցող բնակարաններում բնակվում է երեխաների 0,9-1,2%-ը: Որպեսզի կացարանային չքավորության ցուցանիշը համադրելի լինի մանկական՝ ըստ սպառման աղքատության 2011թ.-ի ընդհանուր ցուցանիշին (41.9%), կացարանային չքավորության գիծ է համարվում բնակարանի հետ կապված երեք կամ ավելի խնդիրներ ունենալը (46%): Այս սահմանման արդյունքում ստացվում է, որ աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների, համապատասխանաբար՝ 54 և 65%-ն ունի կացարանային չքավորության խնդիր: «Կացարանային չքավորության» սահմանումը, արձանագրված խնդիրների թվով պայմանավորելու դեպքում ստացվող ցուցանիշն, ավելի մոտ է՝ ըստ սպառման աղքատության ցուցանիշին, քան բացակայող կացարանային հարմարությունների քանակի վրա հիմնված սահմանմամբ ստացվող ցուցանիշը:

Աղյուսակ 5.11. Հայաստան. Բնակարանի հետ կապված խնդիրների քանակը, 2011թ.

(տոկոսներով)

Բնակարանը չունի	Բոլոր երեխաները	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
0	17.3	12.6	14.8
1	19.3	17.2	10.4
2	17.0	15.9	10.2
3	13.8	13.6	8.1

Բնակարանը չունի	Բոլոր երեխաները	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
4	11.1	12.4	14.8
5	7.5	9.1	13.1
6	5.5	6.9	13.1
7	5.0	6.5	8.1
8	2.6	4.6	6.2
9	0.8	1.2	1.2
10	0.0	-	-
11	0.1	0.0	-

Աղբյուրը. *SSԿԱՀ. 2011թ.*

Աղքատ երեխաները բնակվում են ավելի վատ համարվող բնակարանային պայմաններում: Երեխաների ընդհանուր թվաքանակի 25%-ն է բնակվում բնակարանային պայմանները վատ կամ շատ վատ համարող տնային տնտեսություններում, աղքատ երեխաների շրջանում այն կազմում է 31%, իսկ ծայրահեղ աղքատ երեխաների շրջանում՝ 43%: Միննույն ժամանակ, երեխաների ընդհանուր թվաքանակի 64%-ը բնակվում է բնակարանային պայմանները «բավարար» համարող տնային տնտեսություններում, մինչդեռ աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների շրջանում այն կազմում է, համապատասխանաբար՝ 63 և 55%: Ի հակադրություն լավ կամ շատ լավ համարվող բնակարանային պայմաններ ունեցող տնային տնտեսություններում բնակվելու հավանականությանը, աղքատ երեխաների մոտ այն կրկնակի, իսկ ծայրահեղ աղքատ երեխաների մոտ 5 անգամ ցածր է:

Աղյուսակ 5.12. Հայաստան. Բնակարանային պայմանները՝ հարցվողի սուբյեկտիվ գնահատմամբ, 2011թ.

(տոկոսներով)

	Բոլոր երեխաները	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
Լավ կամ շատ լավ	11.7	5.3	2.2
Բավարար	63.6	63.3	54.8
Վատ կամ շատ վատ	24.7	31.4	43.0

Աղբյուրը. *SSԿԱՀ. 2011թ.*

Աղքատ երեխաների՝ գերբնակեցված կացարաններում բնակվելու հավանականությունն ավելի մեծ է: Հիմնական բնակարանում մեկ շնչին բաժին ընկնող սենյակների (բացառությամբ խոհանոցների, լոգարանների և գուգարանների) միջին քանակը երեխաների ընդհանուր թվաքանակում ավելի բարձր է (0,61), քան աղքատ (0,55) կամ ծայրահեղ աղքատ (0,44) երեխաների շրջանում: Եթե մեկ շնչի հաշվով շեմը համարվի 0,43 կամ պակաս սենյակը, ապա երեխաների ընդհանուր թվաքանակի գերբնակեցման ցուցանիշը կազմում է 27%, աղքատ երեխաների շրջանում՝ 35%, իսկ ծայրահեղ աղքատ երեխաներինը՝ 56% (Աղյուսակ 5.13):

Աղյուսակ 5.13. Հայաստան. Մեկ շնչի հաշվով սենյակների միջին քանակը և գերբնակեցման աստիճանը, 2011թ.

	Բոլոր երեխաները	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
Մեկ շնչի հաշվով սենյակների միջին քանակը, (SD)	0.61 (0.25)	0.55 (0.22)	0.44(0.19)
Գերբնակեցման աստիճանը. (տոկոսներով)	26.5	34.5	55.9

Աղբյուրը. *SSYUZ. 2011թ.*

Գերբնակեցված կացարաններում է բնակվում ոչ աղքատ երեխաների 21%-ը: Ամենաբարձր (56%) ցուցանիշն արձանագրվել է այն տնային տնտեսությունների երեխաների շրջանում, որոնք ցածր են ծայրահեղ աղքատության գծից (Աղյուսակ 5.14):

Աղյուսակ 5.14. Հայաստան. Գերբնակեցումն՝ ըստ աղքատության կարգավիճակի, 2011թ.

(տոկոսներով)

	Ոչ աղքատ երեխաներ	Աղքատ (առանց ծայրահեղ աղքատ երեխաների)	Ծայրահեղ աղքատ երեխաներ
Ոչ գերբնակեցված	79.4	68.2	44.1
Գերբնակեցված	20.6	31.8	55.9

Աղբյուրը. *SSYUZ 2011թ.*

Գերբնակեցման կարգավիճակի և աղքատության կարգավիճակի միջև փոխկապակցվածությունը վիճակագրական նշանակություն ունի. $p < 0.001$

5.4. Երեխաների կարիքները

Ի լրումն ըստ սպառման աղքատության և ըստ նյութական չքավորության վերլուծության, սույն բաժնում դիտարկված են Հայաստանում երեխաների կարիքները:

Երեխաների կարիքների դիտարկումը մանկական աղքատության չափման մի այլ եղանակ է: Այն դիտարկում է աղքատությունը սոցիալական և մշակութային տեսանկյունից, որը կարող է ավելի ազդել երեխաների զարգացման վրա, քան նյութական և կացարանային զրկանքները:

2011թ. SSYUZ հարցաթերթում ավելացվել է բաժին “Երեխաների կարիքները” և հարցերը տրվել են 6-17 տարեկան երեխաներին: Վերլուծության մեջ ներառվել են 13 կարիք, որոնց ցանկը բերված է Աղյուսակներ 5.15 և 5.16-ում:

Երեխաների որոշ կարիքները ըստ գլխավորի կրթական մակարդակի շատ են տարբերվում, իսկ որոշ կարիքներ՝ համարյա չեն տարբերվում: Օրինակ, տնային տնտեսություններում

գլխավորի տարրական և ցածր կրթական մակարդակի դեպքում երեխաների 31% չունեն գրքեր, որոնք կարող էին ընթերցել ազատ ժամանակ, ինչը 2.4 անգամ բարձր է քան բարձրագույն կրթական մակարդակով գլխավորի երեխաների շրջանում՝ միայն 13%: Բարձր է նաև տարբերությունը երեխաների տարբեր զբաղմունքների համար նախատեսված կոշիկների բացակայության մեջ, որը, համապատասխանաբար, կազմել է 41 և 18 % (2.3 անգամ ցածր): Եթե տ/տ գլխավորի կրթական մակարդակը տարրական և ցածր է, ապա այդպիսի տ/տ-ի երեխաների 60% ”գրպանի փող” չի ստացել, այն դեպքում երբ բարձրագույն կրթական մակարդակով գլխավորի 37% երեխաները՝ չեն ստացել (1.6 անգամ ցածր): Եթե տ/տ գլխավորի կրթական մակարդակը տարրական և ցածր է, ապա այդ տ/տ երեխաների մոտ կեսը՝ 52%, չունի առարկաներ ժամանցի համար, օրինակ հեծանիվ, խաղ և այլն, այն դեպքում երբ բարձրագույն կրթությունով գլխավորի երեխաներից միայն 31% չունենին նշվածը (1.7 անգամ ցածր):

Երեխաների որոշ կարիքները ըստ գլխավորի կրթական մակարդակի համարյա չեն տարբերվում: Օրինակ, դպրոցի համար անհրաժեշտ գրենական պիտույքներով ապահովված են երեխաների 96-99%:

Աղյուսակ 5.15. Հայաստան. Տնային տնտեսություններում առկա 6-17 տարեկան երեխաների անբավարարված կարիքները ըստ գլխավորի կրթական մակարդակի, 2011թ.

(տոկոսներով)

Երեխաների կարիքները	Բոլոր երեխաները	Գլխավորի կրթական մակարդակը			
		Տարրական և ցածր	Թերի միջնակարգ	Միջնակարգ ընդհանուր և մասնագիտական	Բարձրագույն
1.Երեխային չեն տալիս ամենօրյա ծախսերի ”գրպանի փող”	47	60	56	47	37
2.Երեխան ստուգման նպատակով պարբերաբար /առնվազն տարին մեկ անգամ/ չի այցելում ատամնաբույժի	67	80	71	68	52
3.Երեխան չունի ուսման եւ տնային հանձնարարությունները կատարելու համար առանձին հարմար տեղ	39	42	44	42	28
4. Տնից դուրս չկա որեւէ ապահով տեղ, որտեղ երեխան կարող է խաղալ	35	21	35	35	38
5.Երեխան չունի առարկաներ ժամանցի համար, օրինակ հեծանիվ, խաղ և այլն	46	52	54	47	31
6.Երեխան չունի առարկաներ սիրած զբաղմունքի (հոբբիի) համար	72	83	77	73	62
7.Երեխան չի այցելում սպորտային ակումբ կամ նմանատիպ խմբակ առնվազն ամիսը մեկ անգամ	75	74	79	76	67
8.Երեխան չունի գրքեր, որոնք կարող է ընթերցել ազատ ժամանակ	24	31	37	23	13

Երեխաների կարիքները	Բոլոր երեխաները	Գլխավորի կրթական մակարդակը			
		Տարրական և ցածր	Թերի միջնակարգ	Միջնակարգ ընդհանուր և մասնագիտական	Բարձրագույն
9. Երեխայի համար չի գնվում որևէ մանկական լրագիր, ամսագիր կամ նմանատիպ այլ պարբերական	67	76	75	66	56
10. Երեխան ամենամյա առնվազն մեկ շաբաթ տեւողությամբ արձակուրդ չի անցկացնում տնից հեռու	61	56	67	64	53
11. Երեխան ամիսը առնվազն երկու անգամ չի հրավիրվում ընկերների կողմից կամ չի հրավիրում ընկերներին ժամանցի	51	46	58	52	45
12. Երեխան չունի դպրոցի համար անհրաժեշտ գրենական պիտույքներ	2	3	4	3	1
13. Երեխան չունի տարբեր զբաղմունքների համար նախատեսված կոշիկներ	32	41	39	35	18

Աղբյուրը. *SS4UZ. 2011թ.*

Երեխաների կարիքներն ըստ աղքատության մակարդակի և ըստ առանձին սոցիալական խմբերի (այն է՝ հաշմանդամություն, միայնակ մայրերի երեխաներ, երեք և ավելի երեխաներով տ/տ-ը) տարբերվում են:

Ինչպես երևում է Աղյուսակ 5.16 երեխաների ընդհանուր թվից առավել շատ բացասական պատասխաններ են տրվել սպորտային ակումբ կամ նմանատիպ խմբակ առնվազն ամիսը մեկ անգամ այցելելու համար (75%): Աղքատ և ծայրահեղ աղքատ, ինչպես նաև երեք և ավելի երեխաներով տ/տ-ում այդ ցուցանիշը ավելի բարձր է (79-89%):

Չբավարարված կարիքներից երկրորդ տեղում երեխայի սիրած զբաղմունքի (հոբբիի) համար առարկաներ չունենալն է՝ 72%: Աղքատ և ծայրահեղ աղքատ, ինչպես նաև երեք և ավելի երեխաներով տ/տ-ում այդ ցուցանիշը ավելի բարձր է (82-95%): Երրորդ տեղում (67%) գտնվում է երեխայի ստուգման նպատակով պարբերաբար ատամնաբույժի չայցելելը: Աղքատ և ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններում ապրող երեխաների շրջանում, այն ավելի բարձր է և կազմել է համապատասխան 76% և 96%:

Նույն 67% ցուցանիշը արձանագրվեց երեխայի համար որևէ մանկական լրագիր, ամսագիր կամ նմանատիպ այլ պարբերական չգնելը: Երեխաների ընդհանուր թվաքանակի համեմատ աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների շրջանում ավելի բարձր է նշված կարիքի անբավարարվածությունը, որը կազմել է համապատասխանաբար 87% և 85% :

Երեխաների որոշ կարիքներն ըստ աղքատության մակարդակի և ըստ առանձին սոցիալական խմբերի համարյա չեն տարբերվում: Այսպես, դպրոցի համար անհրաժեշտ գրենական պիտույքներով ապահոված են երեխաների 96-98%:

Աղյուսակ 5.16. Հայաստան. Տնային տնտեսություններում առկա 6-17 տարեկան երեխաների անբավարարված կարիքներն ըստ աղքատության մակարդակի և սոցիալական խմբերի, 2011թ.

(տոկոսներով)

Երեխաների կարիքները	Բոլոր երեխաները	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Հաշմանդամ երեխաներ	Միայնակ երեխաներ	Երեք և ավելի երեխաներով տ/տ-ն
1. Երեխային չեն տալիս ամենօրյա ծախսերի ”գրպանի փող”	47	59	41	66	45	53
2. Երեխան ստուգման նպատակով պարբերաբար /առնվազն տարին մեկ անգամ/ չի այցելում ատամնաբույժի	67	76	96	62	72	77
3. Երեխան չունի ուսման եւ տնային հանձնարարությունները կատարելու համար առանձին հարմար տեղ	39	58	88	46	39	55
4. Տնից դուրս չկա որեւէ ապահով տեղ, որտեղ երեխան կարող է խաղալ	35	36	44	42	36	37
5. Երեխան չունի առարկաներ ժամանցի համար, օրինակ հեծանիվ, խաղ և այլն	46	60	72	62	50	53
6. Երեխան չունի առարկաներ սիրած զբաղմունքի (հոբբիի) համար	72	88	95	75	74	82
7. Երեխան չի այցելում սպորտային ակումբ կամ նմանատիպ խմբակ առնվազն ամիսը մեկ անգամ	75	80	89	77	74	79
8. Երեխան չունի գրքեր, որոնք կարող է ընթերցել ազատ ժամանակ	24	28	32	44	26	27
9. Երեխայի համար չի գնվում որեւէ մանկական լրագիր, ամսագիր կամ նմանատիպ այլ	67	77	87	85	67	74

Երեխաների կարիքները	Բոլոր երեխաները	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Հաշմանդամ երեխաներ	Միայնակ մայրերի երեխաներ	Երեք և ավելի երեխաներով տ/տ-ն
պարբերական						
10. Երեխան ամենամյա առնվազն մեկ շաբաթ տեսողությամբ արձակուրդ չի անցկացնում տնից հեռու	61	73	89	64	64	66
11. Երեխան ամիսը առնվազն երկու անգամ չի հրավիրվում ընկերների կողմից կամ չի հրավիրում ընկերներին ժամանցի	51	59	50	64	50	58
12. Երեխան չունի դպրոցի համար անհրաժեշտ գրենական պիտույքներ	2	4	2	3	2	2
13. Երեխան չունի տարբեր զբաղմունքների համար նախատեսված կոշիկներ	32	49	70	46	32	43

Աղբյուրը. *SS4U.2. 2011թ.*

5.5. Սոցիալական ապահովության նպաստների դերն աղքատությունը մեղմելու գործում

Տարիքային կենսաթոշակներ

Տարիքային կենսաթոշակներն ազդում են մանկական աղքատության միջին մակարդակի վրա: Երեխաների ընդհանուր թվաքանակի 48%-ն ապրում է այնպիսի տնային տնտեսություններում, որոնց առնվազն մեկ անդամը, հարցմամբ ձեռք բերված տեղեկությունների համաձայն, ստանում է ծերության կենսաթոշակ: Աղյուսակ 5.17-ում ներկայացված է կենսաթոշակների ազդեցությունը մանկական՝ ըստ սպառման աղքատության միջին մակարդակի վրա: Եթե կենսաթոշակները հանվեն տնային տնտեսության ընդհանուր ամսական ծախսերից և ստացված գումարը համարժեքացվի, ապա մանկական ծայրահեղ աղքատության մակարդակը 5%-ից կհասնի 17-ի, իսկ մանկական աղքատության ընդհանուր մակարդակը 42%-ից 53-ի: Փաստորեն, կենսաթոշակային եկամուտը մեծ ազդեցություն ունի սպառման համեմատաբար ցածր մակարդակ ունեցող տնային տնտեսությունների վրա: Սպառման մեջ կենսաթոշակային եկամուտը հաշվի չառնելու դեպքում ծայրահեղ աղքատության միջին մակարդակը համարյա քառապատկվում

է: Ենթադրվում է, որ կենսաթոշակային ողջ եկամուտն ուղղվում է տնային տնտեսության սպառմանը:

Աղյուսակ 5.17. Հայաստան. Մանկական աղքատության մակարդակը տարիքային կենսաթոշակի եկամտի հաշվարկով և առանց դրա, 2011թ.

(տոկոսներով)

Գիծ	Մանկական աղքատության մակարդակ	
	Կենսաթոշակով	Առանց կենսաթոշակի
Ծայրահեղ աղքատության գիծ	4.7	17.0
Աղքատության ընդհանուր գիծ	41.9	52.7

Աղբյուրը. *SSYUZ, 2011թ.*

Տարիքային կենսաթոշակը կարող է ազդել երեխայի աղքատ լինելու կամ չլինելու հանգամանքի վրա (միայն այն տնային տնտեսություններում, որոնցում ապրում է տարիքային կենսաթոշակ ստացող անդամ): Աղյուսակ 5.18-ում ներկայացված է, թե տարիքային կենսաթոշակն ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ աղքատ (և ծերության կենսաթոշակ ստացող անդամ ունեցող) տնային տնտեսությունների վրա: Երբ այդ տնային տնտեսությունների սպառումից հանվեն կենսաթոշակները, ապա ծայրահեղ աղքատության գծի համեմատ աղքատ չհամարվող երեխաների 27%-ը կդառնա աղքատ: Միննույն ժամանակ, աղքատության ընդհանուր գծի համեմատ աղքատ չհամարվող երեխաների 38%-ը կհամարվի աղքատ, եթե կենսաթոշակային եկամուտը հանվի տնային տնտեսության սպառումից:

Աղյուսակ 5.18. Հայաստան. Մանկական աղքատության մակարդակը տարիքային կենսաթոշակի եկամտով և առանց դրա (այն տնային տնտեսություններում, որոնցում ապրում է տարիքային կենսաթոշակ ստացող անդամ), 2011թ.

(տոկոսներով)

	Հաղթահարել է ծայրահեղ աղքատության գիծը (կենսաթոշակով)	Հաղթահարել է ընդհանուր աղքատության գիծը (կենսաթոշակով)
Ծայրահեղ աղքատության գծից ներքև է (առանց կենսաթոշակի)	27.2	
Աղքատության ընդհանուր գծից ներքև է (առանց կենսաթոշակի)		38.3

Աղբյուրը. *SSYUZ, 2011թ.*

Ընտանեկան նպաստները

Ընտանեկան նպաստի տեսքով ստացվող եկամուտն ազդում է մանկական աղքատության միջին մակարդակի վրա: Երեխաների ընդհանուր թվաքանակի 18 տոկոսն ապրում է այնպիսի տնային տնտեսություններում, որոնք ստանում են ընտանեկան նպաստ: Աղյուսակ 5.19-ում ներկայացված է, թե ինչպես է ընտանեկան նպաստի տեսքով ստացվող

եկամուտն ավելի շատ ազդում մանկական ծայրահեղ աղքատության միջին մակարդակի, քան՝ մանկական աղքատության ընդհանուր մակարդակի վրա: Տնային տնտեսության ընդհանուր ծախսերից ընտանեկան նպաստները հանելու դեպքում մանկական ծայրահեղ աղքատության մակարդակը մոտավորապես եռապատկվում է՝ 5%-ից հասնելով 10-ի, իսկ մանկական աղքատության ընդհանուր մակարդակն աճում է 5%-ային կետով՝ 42-ից հասնելով 47 %-ի: Դա վկայում է այն մասին, որ ընտանեկան նպաստի տեսքով ստացվող եկամուտը շատ կարևոր է սպառման շատ ցածր (պարենային աղքատության գծից ցածր) մակարդակ ունեցող տնային տնտեսությունների համար:

Աղյուսակ 5.19. Հայաստան. Մանկական աղքատության մակարդակն ընտանեկան նպաստի տեսքով ստացվող եկամտով և առանց դրա, 2011թ.

(տոկոսներով)

Գիծ	Մանկական աղքատության մակարդակ	
	Ընտանեկան նպաստով	Առանց ընտանեկան նպաստի
Ծայրահեղ աղքատության գիծ	4.7	10.3
Աղքատության ընդհանուր գիծ	41.9	46.6

Աղբյուրը. *SSYUZ. 2011թ.*

Ընտանեկան նպաստի տեսքով ստացվող եկամուտը կարող է ազդել նաև երեխայի աղքատ լինելու կամ չլինելու վրա (միայն ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսություններում): Աղյուսակ 5.20-ում ներկայացված է, թե ընտանեկան նպաստ ստացող և աղքատ չհամարվող տնային տնտեսություններում ինչպիսին կլինեք աղքատության մակարդակը, եթե նրանք չստանային ընտանեկան նպաստ: Ընտանեկան նպաստի տեսքով ստացվող եկամուտը նրանց սպառումից հանելու դեպքում, ծայրահեղ աղքատության գծի համեմատ աղքատ չհամարվող երեխաների 32%-ը կհամարվի աղքատ: Միևնույն ժամանակ, աղքատության ընդհանուր գծի համեմատ, աղքատ չհամարվող երեխաների 44%-ը կհամարվի աղքատ, եթե ընտանեկան նպաստի տեսքով ստացվող եկամուտը հանվի նրանց տնային տնտեսության սպառումից:

Աղյուսակ 5.20. Հայաստան. Մանկական աղքատության ցուցանիշներն ընտանեկան նպաստի տեսքով ստացվող եկամտով և առանց դրա (ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսություններում), 2011թ.

(տոկոսներով)

	Հաղթահարել է ծայրահեղ աղքատության գիծը (ընտանեկան նպաստով)	Հաղթահարել է ընդհանուր աղքատության գիծը (ընտանեկան նպաստով)
Ծայրահեղ աղքատության գծից ներքև է (առանց ընտանեկան նպաստի)	32.7	
Աղքատության ընդհանուր գծից ներքև է (առանց ընտանեկան նպաստի)		43.9

Աղբյուրը. *SSYUZ. 2011թ.*

Երեխայի նպաստները

Երեխայի նպաստների տեսքով ստացվող եկամուտը որևէ ազդեցություն չունի մանկական աղքատության միջին ցուցանիշի վրա: Հետազոտության տվյալների համաձայն երեխաների ընդհանուր թվաքանակի միայն 1.6%-ն է ապրում երեխայի նպաստ ստացող տնային տնտեսություններում: Աղյուսակ 5.21-ում ներկայացված է, թե մանկական աղքատության միջին ցուցանիշի վրա ինչպես է ազդում երեխայի նպաստը: Մանկական ծայրահեղ աղքատության մակարդակը համարյա չի փոխվում, իսկ աղքատության մակարդակն՝ շատ քիչ է փոխվում (1.8 տոկոսային կետով) :

Աղյուսակ 5.21. Հայաստան. Մանկական աղքատության մակարդակը, երեխայի նպաստի տեսքով ստացվող եկամտով և առանց դրա, 2011թ.

(տոկոսներով)

Գիծ	Մանկական աղքատության մակարդակ	
	Երեխայի նպաստով	Առանց երեխայի նպաստի
Ծայրահեղ աղքատության գիծ	4.7	4.8
Աղքատության ընդհանուր գիծ	41.9	43.7

Աղբյուրը. *SSՀԱՀ. 2011թ.*

Երեխայի նպաստի տեսքով ստացվող եկամուտը գրեթե որևէ ազդեցություն չունի երեխայի աղքատ լինելու կամ չլինելու հանգամանքի վրա (միայն երեխայի նպաստ ստացող տնային տնտեսություններում): Աղյուսակ 5.22-ում ներկայացված է, թե երեխայի նպաստ ստացող և աղքատ չհամարվող տնային տնտեսություններում ինչպիսին կլինեք աղքատության մակարդակը, եթե նրանք չստանային երեխայի նպաստը: Երեխայի նպաստի տեսքով ստացվող եկամուտը նրանց սպառումից հանելու դեպքում ծայրահեղ աղքատ չհամարվող երեխաների 4%-ը ծայրահեղ աղքատ կհամարվի: Մինևույն ժամանակ, ոչ աղքատ համարվող երեխաների մոտ 9%-ն աղքատ կհամարվի, եթե երեխայի նպաստի տեսքով ստացվող եկամուտը նվազեցվի նրանց տնային տնտեսության սպառումից: Հաշվի առնելով երեխայի նպաստ ստացող ընտանիքների սակավաթվությունը, զարմանալի չէ, որ երեխայի նպաստի տեսքով ստացվող եկամուտը չի ազդում մանկական աղքատության միջին մակարդակի վրա:

Աղյուսակ 5.22. Հայաստան. Աղքատության ցուցանիշները, երեխայի նպաստի տեսքով ստացվող եկամտով և առանց դրա

(երեխայի նպաստ ստացող տնային տնտեսություններում), 2011թ.

(տոկոսներով)

	Հաղթահարել է ծայրահեղ աղքատության գիծը (երեխայի նպաստով)	Հաղթահարել է ընդհանուր աղքատության գիծը (երեխայի նպաստով)
Աղքատության ծայրահեղ գծից ներքև է (առանց երեխայի նպաստի)	4.2	
Աղքատության ընդհանուր գծից ներքև է (առանց երեխայի նպաստի)		9.3

Աղբյուրը. *SSՀԱՀ. 2011թ.*

Գլուխ 6. Աշխատանքի շուկա¹

6.1. Աշխատանքի շուկայի զարգացումները

6.1.1. Համառոտ մեթոդաբանություն

Սույն բաժնում ներկայացվել են Հայաստանի 2010-2011թթ. աշխատաշուկայի զարգացումները՝ հիմնված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տվյալների վրա: Աշխատուժի մասնակցությունը բնութագրող ցուցանիշները հիմնված են տնային տնտեսությունների (SS) **15-75 տարեկան** (հետազոտվող ֆոկուս-խումբ) անդամների պատասխանների վրա: Դիտարկվող ժամանակաշրջանը եղել է հարցմանը նախորդող վերջին մեկ շաբաթը: Յուրաքանչյուր հարցվող ըստ տնտեսական ակտիվության կարգավիճակի դասակարգվել է միմյանց բացառող հետևյալ երեք խմբերի՝ **զբաղված, գործազուրկ, տնտեսապես ոչ ակտիվ**:

Հետազոտության հիմքում դրված հասկացությունները, ցուցանիշների համախումբը և հաշվարկման մեթոդաբանությունը հիմնականում համապատասխանում են ԱՄԿ և (կամ)² Եվրոստատի կողմից առաջարկվող սահմանումներին և դրույթներին՝ հնարավորինս հաշվի առնելով Հայաստանում դրանց կիրառման առանձնահատկությունները: Այսպես.

Զբաղված համարվել է անձն, ով.

- հետազոտվող շաբաթում ունեցել է վարձու կամ ոչ վարձու աշխատանք, անկախ այն հանգամանքից՝ աշխատանքը եղել է մշտական, ժամանակավոր կամ սեզոնային, միանգամյա կամ պատահական, նույնիսկ, եթե այդ աշխատանքը հետազոտվող շաբաթվա ընթացքում կազմել է ընդամենը մեկ ժամ.

- տարբեր պատճառներով ժամանակավորապես բացակայել է աշխատանքից.

- զբաղված է եղել տնային կամ գյուղացիական տնտեսությունում, իսկ թողարկված արտադրանքը նախատեսված է եղել լրիվ կամ մասնակի իրացման, կամ բացառապես սեփական վերջնական սպառման համար, եթե այդ արտադրանքը նշանակալի մասնաբաժին է կազմել տնային տնտեսության սպառման մեջ:

Ոչ ֆորմալ զբաղվածության վերլուծությունը խարսխված է աշխատատեղերի քանակի (ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ) և ոչ թե զբաղված անձանց թվաքանակի վրա: Հետևաբար, ընդամենը զբաղվածությունն ըստ աշխատանքի բնույթի (ֆորմալ, ոչ ֆորմալ) կունենա ավելի մեծ քանակական արտահայտություն, քան զբաղվածների թվաքանակը:

Ոչ ֆորմալ զբաղվածությունը դիտարկվող ժամանակահատվածում ոչ ֆորմալ աշխատատեղերի հանրագումարն է, անկախ այն հանգամանքից եղել են դրանք ֆորմալ, թե ոչ ֆորմալ հատվածի կազմակերպություններում կամ տնային տնտեսություններում:

¹ Սույն բաժնում ներկայացված տվյալների բաղադրիչների գումարի և արդյունքի միջև առանձին դեպքերում առկա աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ:

² ԱՄԿ-ի և Եվրոստատի կողմից առաջարկվող սահմանումներում առանձին դեպքերում առկա են որոշ տարբերություններ: Մասնավորապես, պարտադիր ժամկետային զինծառայողներն ըստ ԱՄԿ մեթոդաբանության դասվում են զբաղվածների (տե՛ս ILO, ISCO-88), իսկ ըստ Եվրոստատի (տե՛ս European Commission, The European Union labour force survey, Methods and definitions-2001)՝ տնտեսապես ոչ ակտիվ բնակչության խմբին: Տվյալ դեպքում ՀՀ ԱՎԾ-ն հիմք է ընդունել վերջինս, որը կիրառվում է Եվրամիության անդամ երկրներում:

Ոչ ֆորմալ զբաղվածության մեջ ներառվում են. (ա) գործատուի հետ բանավոր համաձայնությամբ վարձու աշխատողները (այդ թվում՝ տնային վճարովի աշխատողները), (բ) չգրանցված կազմակերպությունների սեփականատեր գործատուները եւ ինքնազբաղվածները, (գ) առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամները, (դ) չգրանցված արտադրական կոդպերատիվների անդամները և (ե) բացառապես սեփական վերջնական սպառման համար ապրանքներ արտադրող ինքնազբաղվածները, եթե համարվում են զբաղված: Ոչ ֆորմալ զբաղվածներ են համարվել նաև տնային տնտեսություններում բացառապես սեփական վերջնական սպառման համար ապրանք արտադրող առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամները, եթե իրենց արտադրանքը նշանակալի մասնաբաժին է ունեցել տնային տնտեսության ընդհանուր սպառման մեջ:

Գործազուրկ համարվել է անձն (համաձայն ԱՄԿ ստանդարտ սահմանման), ով հետազոտությանը նախորդող վերջին 4 շաբաթվա ընթացքում (ներառյալ հետազոտվող շաբաթը) **միաժամանակ** բավարարել է հետևյալ երեք պայմաններին.

- չի ունեցել աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք.
- ակտիվորեն փնտրել է աշխատանք՝ օգտագործելով ցանկացած միջոց, այսինքն՝ դիմել է զբաղվածության պետական և (կամ) մասնավոր ծառայություն, աշխատանք է փնտրել ծանոթների, բարեկամների, հայտարարությունների միջոցով կամ ցանկացած այլ եղանակով.
- պատրաստ է եղել անմիջապես (այսինքն՝ առաջիկա երկու շաբաթվա ընթացքում) անցնել աշխատանքի:

Գործազուրկ համարվել է նաև անձն, ով հետազոտությանը նախորդող վերջին չորս շաբաթվա ընթացքում չի ունեցել և չի փնտրել աշխատանք, որովհետև արդեն գտել է և կսկսի աշխատել առաջիկա երկու շաբաթվա ընթացքում:

Տնտեսապես ակտիվ բնակչության մեջ ներառվում են զբաղվածները և գործազուրկները, ովքեր դիտարկվող ժամանակահատվածում աշխատանքի շուկայում ապահովում են աշխատուժի առաջարկը՝ ապրանքների և ծառայությունների արտադրության համար:

Տնտեսապես ոչ ակտիվ համարվել է անձն, ով հետազոտվող ժամանակաշրջանում չի եղել զբաղված կամ գործազուրկ:

Աշխատանքային ռեսուրսները տնտեսապես ակտիվ և ոչ ակտիվ բնակչության հանրագումարն են:

Դիագրամա 6.1. Բնակչության հիմնական խմբերն ըստ հետազոտության արդյունքների, 2011

Առկա բնակչություն, ընդամենը 100%, որից.					
< 15 տարեկան 18%	15-75 տարեկան (աշխատանքային ռեսուրսներ) 77%, որից.				75 > տարեկան 5%
Տնտեսապես ակտիվ բնակչություն 63%, որից.			Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն 37%, որից.		
Զբաղված 82%		Գործազուրկ 18%	սովորող, ուսանող 20%	SS վարող 24%	կենսաթոշակառու 26%
					աշխատանք չունեցող այլ անձինք 29%
<i>ըստ կարգավիճակի.</i>					
վարձու աշխատող 56%					
գործատու, ինքնագբաղված 30%					
առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ, այլ 14%					
<i>ըստ ոլորտների.</i>					
գյուղատնտեսություն 39%					
արդյունաբերություն 11%					
շինարարություն 6%					
ծառայություններ 44%					
<i>ըստ հատվածների.</i>					
պետական 23%					
համայնքային 2%					
մասնավոր 74%					
հասարակական 1%					

Աղբյուրը՝ *SSԿԱՀ 2011թ.*

6.1.2. Ամփոփ ցուցանիշներ

- 2011թ. **աշխատանքային ռեսուրսները կազմել են 2.3 մլն. մարդ** կամ երկրի առկա բնակչության 77%-ը՝ 2010թ. համեմատ նվազելով 1%-ային կետով:
- Աշխատանքային ռեսուրսներից **1.4 մլն. մարդ եղել են տնտեսապես ակտիվ**՝ ձևավորելով երկրի աշխատանքի շուկան, իսկ **0.8 մլն. տնտեսապես ոչ ակտիվ** բնակչությունը աշխատանքի շուկայում որևէ մասնակցություն չի ունեցել:
- 2010թ. համեմատ տնտեսապես ակտիվ բնակչությունից 22.4 հազ. մարդ դուրս է եկել աշխատանքի շուկայից: Նրանց 45%-ը եղել են զբաղված և տարբեր պատճառներով դադարեցրել են աշխատանքային գործունեությունը, իսկ 55%-ը դադարել են ակտիվորեն փնտրել աշխատանք: Սակայն, 2010թ. համեմատ աշխատանքային ռեսուրսների 4%-ով կրճատման պարագայում, արձանագրվել է բնակչության տնտեսական ակտիվության մակարդակի 2%-ային կետի աճ:
- 1.4 մլն. աշխատուժից **1.2 մլն-ը եղել են զբաղված**, որոնց 71%-ն ունեցել են մշտական աշխատանք՝ 10%-ի նվազում արձանագրելով նախորդ տարվա համեմատ:
- **265.7 հազ. մարդ եղել են գործազուրկ**, որոնց 61%-ը տարբեր պատճառներով կորցրել են նախկին աշխատանքը, իսկ 39%-ը երբևէ չեն ունեցել աշխատանք: Երբևէ աշխատանք չունեցողների միջին տարիքը կազմել է 26 տարեկան:
- Զբաղվածների և գործազուրկների սեռային բաշխվածության նույն ցուցանիշն է արձանագրվել. տղամարդիկ փոքր-ինչ գերակշռել են կանանց՝ կազմելով 52%:
- Գյուղատնտեսությունը շարունակում է մնալ զբաղվածություն ապահովող գերակա ոլորտը (39% կամ 457.4 հազ. մարդ), որտեղ աշխատատեղերի 36%-ը եղել են ժամանակավոր:
- Զբաղվածների մոտ **3%-ն ունեցել են երկրորդ աշխատանք**, որոնց 90%-ը՝ գյուղատնտեսության ոլորտում:
- Զբաղվածների կազմում ըստ տարիքի գերակշռել են 45-54 տարեկանները (27%), իսկ գործազուրկների կազմում՝ 20-29 տարեկանները (36%): Զբաղվածների միջին տարիքը կազմել է 43.7 տարեկան, գործազուրկներինը՝ 36.8:
- Զբաղվածների և գործազուրկների գերակշիռ մասի կրթական մակարդակը եղել է միջնակարգ ընդհանուր (զբաղվածներ՝ 41%, գործազուրկներ՝ 38%):
- Երիտասարդները (15-29 տարեկան) կազմել են զբաղվածների 20%-ը և գործազուրկների՝ 42%-ը:
- Աշխատուժի գերակշիռ մասը եղել են երևանաբնակները՝ կազմելով զբաղվածների 28%-ը և գործազուրկների 54%-ը:
- Առկա աշխատատեղերի **50.4%-ը գնահատվել են ոչ ֆորմալ**՝ նախորդ տարվա համեմատ մնալով անփոփոխ: Ոչ ֆորմալ աշխատատեղերի 79%-ը բաժին է ընկել գյուղատնտեսական և 21%-ը՝ ոչ գյուղատնտեսական ոլորտին:
- Ծայրահեղ աղքատ են գնահատվել զբաղվածների 2.1%-ը, գործազուրկների՝ 6.8%-ը: Աղքատ են գնահատվել զբաղվածների 28.5%-ը, գործազուրկների՝ 44.1%-ը (տե՛ս աղյուսակ 3.16):
- Զբաղվածների 36%-ի աշխատաժամանակի միջին շաբաթական տևողությունը գերազանցել է օրենքով սահմանված 40 ժամը: Արդյունքում՝ մեկ զբաղվածի հաշվով **միջին շաբաթական փաստացի ծախսված աշխատաժամանակը կազմել է 35 ժամ**:
- Աշխատանքի շուկան բնութագրվել է երկարատև գործազրկությամբ. գործազուրկների 53%-ի աշխատանք փնտրելու տևողությունը գերազանցել է 1 տարին: Արդյունքում՝ աշխատանք փնտրելու միջին տևողությունը կազմել է 24.4 ամիս:

▪ Թեև 2011թ. միջին ամսական եկամուտը կազմել է 78408 դրամ՝ 2010թ. համեմատ աճելով 8.3%-ով, սակայն 50%-ի եկամուտը կազմել 65.000 դրամից (մեդիան եկամուտ) ցածր: Տղամարդկանց և կանանց միջին ամսական եկամտի հարաբերակցությունը կազմել է 1.6:

Աղյուսակ 6.1. Հայաստան. Աշխատանքի շուկայի հիմնական ցուցանիշները

	Ընդամենը		Տղամարդ		Կին		Քաղաք		Գյուղ	
	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011
Աշխատանքային ռեսուրսներ, 1000 մարդ	2389.7	2286.3	1075.7	1017.0	1314.0	1269.3	1554.5	1498.3	835.1	788.0
Տնտեսապես ակտիվ բնակչություն	1463.3	1440.9	777.2	739.0	686.1	701.8	869.7	864.3	593.7	576.6
Զբաղվածներ	1185.2	1175.1	644.8	610.9	540.4	564.2	627.7	631.8	557.5	543.3
Գործազուրկներ	278.2	265.7	132.5	128.1	145.7	137.7	242.0	232.5	36.2	33.3
Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն	926.3	845.4	298.4	278.0	627.9	567.5	684.9	634.0	241.5	211.4
Տնտեսական ակտիվության մակարդակ ¹ , %	61.2	63.0	72.3	72.7	52.2	55.3	55.9	57.7	71.1	73.2
Զբաղվածության մակարդակ ¹ , %	49.6	51.4	59.9	60.1	41.1	44.4	40.4	42.2	66.8	68.9
Գործազրկության մակարդակ ² , %	19.0	18.4	17.0	17.3	21.2	19.6	27.8	26.9	6.1	5.8

Աղբյուրը՝ *SSCULZ 2010-2011թթ.*

Աղյուսակ 6.2. Հայաստան. Տնտեսական ակտիվությունն ըստ տարիքային խմբերի

	Տնտեսապես ակտիվ բնակչություն, 1000 մարդ		այդ թվում				Տնտեսական ակտիվության մակարդակ, %		Զբաղվածության մակարդակ, %		Գործազրկության մակարդակ, %	
			զբաղված		գործազուրկ							
	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011
Ընդամենը	1463.3	1440.9	1185.2	1175.1	278.2	265.7	61.2	63.0	49.6	51.4	19.0	18.4
15-19	38.3	29.8	21.3	15.7	17.0	14.1	13.7	13.2	7.6	6.9	44.4	47.3
20-24	158.7	156.1	99.2	97.3	59.5	58.8	53.4	57.0	33.4	35.5	37.5	37.7
25-29	168.9	160.4	127.8	122.7	41.1	37.7	66.7	68.3	50.4	52.3	24.3	23.5
30-34	143.1	142.4	117.5	116.5	25.7	25.8	72.9	75.9	59.8	62.1	17.9	18.1
35-39	143.2	140.1	119.5	118.4	23.7	21.7	79.3	80.4	66.2	67.9	16.6	15.5
40-44	142.4	136.8	122.2	118.5	20.2	18.3	82.9	84.3	71.1	73.0	14.2	13.4
45-49	189.3	174.0	160.9	149.9	28.4	24.2	81.1	80.9	68.9	69.6	15.0	13.9
50-54	186.7	186.0	157.6	162.3	29.1	23.6	78.4	77.2	66.2	67.4	15.6	12.7
55-59	132.3	140.4	111.6	117.7	20.6	22.7	73.5	74.7	62.0	62.7	15.6	16.2
60-64	82.9	85.3	74.5	72.1	8.4	13.3	63.0	59.3	56.6	50.1	10.1	15.5
65-69	32.5	38.5	29.0	34.8	3.6	3.7	41.8	45.0	37.2	40.7	11.0	9.6
70-75	45.0	51.0	44.2	49.2	0.8	1.8	30.0	33.2	29.4	32.0	1.8	3.6

Աղբյուրը՝ *SSCULZ 2010-2011թթ.*

¹ Հաշվարկված է աշխատանքային ռեսուրսների (ըստ առկա բնակչության թվաքանակի ցուցանիշի) թվաքանակի նկատմամբ:

² Հաշվարկված է տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի նկատմամբ:

Աղյուսակ 6.3. Հայաստան. Տնտեսական ակտիվությունն ըստ կրթական մակարդակի

	Տնտեսապես ակտիվ բնակչություն, 1000 մարդ		այդ թվում՝				Տնտեսական ակտիվության մակարդակը, %		Զբաղվածության մակարդակը, %		Գործազրկության մակարդակը, %	
			զբաղված		գործազուրկ							
	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011
Ընդամենը	1463.3	1440.9	1185.2	1175.1	278.2	265.7	61.2	63.0	49.6	51.4	19.0	18.4
Բարձրագույն. հետբուհական	334.4	366.5	269.2	294.9	65.2	71.6	75.2	75.3	60.5	60.6	19.5	19.5
Միջին մասնագիտական. թերի բարձրագույն	348.4	347.9	277.6	278.1	70.8	69.9	63.6	65.8	50.7	52.6	20.3	20.1
Նախամասնագիտական (արհեստագործական)	40.2	34.9	32.0	28.7	8.2	6.2	75.9	78.7	60.4	64.7	20.3	17.8
Միջնակարգ ընդհանուր	620.2	579.1	502.5	478.4	117.6	100.7	59.1	60.7	47.9	50.1	19.0	17.4
Հիմնական ընդհանուր	103.5	99.0	87.9	81.9	15.6	17.1	42.0	42.3	35.6	35.0	15.1	17.3
Տարրական, ոչ լրիվ տարրական	16.7	13.4	15.9	13.2	0.8	0.3	34.4	35.0	32.8	34.2	4.5	2.1

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2010-2011 թթ.

Աղյուսակ 6.4. Հայաստան. Տնտեսական ակտիվությունն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի

	Տնտեսապես ակտիվ բնակչություն. 1000 մարդ		այդ թվում՝				Տնտեսական ակտիվության մակարդակը, %		Զբաղվածության մակարդակը, %		Գործազրկության մակարդակը, %	
			զբաղված		գործազուրկ							
	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011
Ընդամենը	1463.3	1440.9	1185.2	1175.1	278.2	265.7	61.2	63.0	49.6	51.4	19.0	18.4
ք. Երևան	485.5	477.2	340.2	333.3	145.3	143.9	58.4	60.0	40.9	41.9	29.9	30.2
Արագածոտն	75.7	65.8	69.6	62.1	6.1	3.7	79.5	81.9	73.1	77.2	8.1	5.7
Արարատ	126.7	131.7	118.3	120.9	8.4	10.7	69.1	69.1	64.6	63.4	6.6	8.1
Արմավիր	129.5	135.0	116.0	127.2	13.5	7.9	64.7	66.9	57.9	63.0	10.4	5.8
Գեղարքունիք	99.9	95.9	91.0	86.8	8.9	9.1	65.1	67.3	59.3	60.9	8.9	9.5
Լոռի	136.4	126.5	109.5	103.2	26.9	23.3	60.4	59.9	48.5	48.8	19.7	18.4
Կոտայք	126.0	133.0	101.8	107.3	24.2	25.7	52.6	58.3	42.5	47.0	19.2	19.3
Շիրակ	109.6	103.3	85.5	83.4	24.1	19.9	49.9	50.9	38.9	41.1	22.0	19.3
Սյունիք	73.0	71.8	64.1	62.0	8.9	9.8	75.1	74.4	66.0	64.2	12.2	13.6
Վայոց ձոր	29.3	30.5	25.3	27.2	4.0	3.2	67.6	73.1	58.4	65.3	13.7	10.6
Տավուշ	71.7	70.1	63.9	61.7	7.8	8.4	72.1	73.5	64.3	64.7	10.9	11.9

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2010-2011 թթ.

Աղյուսակ 6.5. Հայաստան. Զբաղվածներն ըստ տնտեսական գործունեության տեսակների և աշխատանքի բնույթի

1000 մարդ

	Ընդամենը		Մշտական		Ոչ մշտական	
	2010	2011	2010	2011	2010	2011
Ընդամենը	1185.2	1175.1	955.0	837.8	230.2	337.4
Բաժին A - B ¹	457.4	457.4	315.9	293.2	141.5	164.2
Բաժին C - E ²	120.6	128.7	113.4	99.4	7.2	29.2
Բաժին F ³	85.8	67.4	40.4	25.8	45.4	41.6
Բաժին G - H ⁴	128.4	123.9	110.7	86.5	17.7	37.4
Բաժին I ⁵	70.6	65.8	64.4	49.6	6.2	16.2
Բաժին J - K ⁶	43.5	40.7	41.2	31.8	2.2	8.9
Բաժին L - N ⁷	235.0	242.8	232.4	219.0	2.6	23.8
Բաժին O - Q ⁸	43.9	48.5	36.5	32.4	7.4	16.1

Աղբյուրը՝ *SSՀԱՀ 2010-2011թթ.*

Աղյուսակ 6.6. Հայաստան. Զբաղվածներն ըստ գործունեության ոլորտների և զբաղվածության կարգավիճակի

1000 մարդ

	Ընդամենը		Գյուղատնտեսական		Ոչ գյուղատնտեսական	
	2010	2011	2010	2011	2010	2011
Ընդամենը	1185.2	1175.1	457.4	457.4	727.8	717.7
Վարձու աշխատող	673.9	653.0	22.2	14.6	651.7	638.4
Գործատու	6.1	7.5	...	0.5	6.1	7.0
Ինքնազբաղված	325.5	349.8	259.9	280.0	65.7	69.7
Այլ	179.6	164.9	175.3	162.3	4.2	2.5

Աղբյուրը՝ *SSՀԱՀ 2010-2011թթ.*

Աղյուսակ 6.7. Հայաստան. Երկրորդ աշխատանք ունեցողներն ըստ գործունեության ոլորտների և գործունեության բնույթի

1000 մարդ

	Ընդամենը		Մշտական		Ոչ մշտական	
	2010	2011	2010	2011	2010	2011
Ընդամենը	53.2	36.2	30.9	19.9	22.4	16.3
Գյուղատնտեսական	48.3	32.4	27.8	17.3	20.5	15.1
Ոչ գյուղատնտեսական	4.9	3.8	3.1	2.6	1.9	1.2

Աղբյուրը՝ *SSՀԱՀ 2010-2011թթ.*

¹ Գյուղատնտեսական ոլորտ

² Արդյունաբերություն

³ Շինարարություն

⁴ Առևտուր, ավտոմեքենաների նորոգում, հյուրանոցներ և ռեստորաններ

⁵ Տրանսպորտ և կապ

⁶ Ֆինանսական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում

⁷ Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն, սոցիալական անհատական ծառայությունների մատուցում

⁸ Այլ ծառայություններ

Աղյուսակ 6.8. Հայաստան. Ոչ ֆորմալ զբաղվածությունն ըստ գործունեության ոլորտների և զբաղվածության կարգավիճակի
(հիմնական և լրացուցիչ (երկրորդ) գործունեություն)

	Ընդամենը, 1000	այդ թվում		Գյուղատնտեսական	այդ թվում		Ոչ գյուղատնտեսական	այդ թվում	
		վարձու աշխատող	ոչ վարձու աշխատող		վարձու աշխատող	ոչ վարձու աշխատող		վարձու աշխատող	ոչ վարձու աշխատող
2010	623.8	106.2	517.6	494.5	12.7	481.8	129.4	93.5	35.9
2011	610.4	92.4	518.1	482.7	8.0	474.7	127.7	84.3	43.4
11/10. %	2.1	13.0	-0.1	2.4	36.9	1.5	1.3	9.8	-20.8
% համապատասխան խմբի ընդամենը զբաղվածության նկատմամբ									
2010	50.4	15.7	92.3	97.8	56.2	99.7	17.7	14.3	46.3
2011	50.4	14.1	93.3	98.6	53.6	100.0	17.7	13.2	54.0
11/10. %	0.0	10.3	-1.1	-0.8	4.5	-0.3	0.0	8.0	-16.6

Աղբյուրը՝ *SSԳԱՀ 2010-2011թթ.*

Աղյուսակ 6.9. Հայաստան. Զբաղվածներն ըստ փաստացի աշխատած շաբաթական ժամերի և տնտեսական գործունեության տեսակների, 2011թ.

	Ընդամենը 1000 մարդ	ըստ ժամերի								Միջին շաբաթական ժամ
		0՝	1-10	11-20	21-30	31-40	41-50	51-60	61>	
Ընդամենը	1175.1	58.6	79.4	180.5	160.5	281.7	255.6	81.9	77.0	35.3
Բաժին A - B ¹	457.4	39.0	73.3	149.4	117.0	49.3	19.2	6.7	3.5	21.1
Բաժին C - E ²	128.7	2.3	1.2	3.1	3.3	49.8	46.2	12.6	10.1	45.1
Բաժին F ³	67.4	5.2	0.2	2.0	1.8	16.7	23.6	9.6	8.4	44.9
Բաժին G - H ⁴	123.9	2.2	0.4	2.5	6.3	20.3	41.7	23.6	26.9	51.0
Բաժին I ⁵	65.8	0.6	0.1	2.0	1.4	16.6	22.3	7.7	15.2	51.6
Բաժին J - K ⁶	40.7	0.6	0.0	0.8	2.6	13.9	15.0	4.9	3.0	45.4
Բաժին L - N ⁷	242.8	6.9	2.4	16.1	23.4	103.0	76.3	8.4	6.2	39.0
Բաժին O - Q ⁸	48.5	1.8	1.7	4.6	4.7	12.1	11.3	8.3	4.0	41.7

Աղբյուրը՝ *SSԳԱՀ 2011թ.*

* Այստեղ և հետագայում՝ հետազոտվող շաբաթում ժամանակավորապես բացակայողներ:

¹ Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն, ձկնորսություն, ձկնաբուծություն

² Արդյունաբերություն

³ Շինարարություն

⁴ Առևտուր, ավտոմեքենաների նորոգում, հյուրանոցներ և ռեստորաններ

⁵ Տրանսպորտ և կապ

⁶ Ֆինանսական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում

⁷ Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն, սոցիալական անհատական ծառայությունների մատուցում

⁸ Այլ ծառայություններ

Աղյուսակ 6.10. Հայաստան. Զբաղվածներն ըստ փաստացի աշխատած շաբաթական ժամերի և զբաղվածության կարգավիճակի, 2011թ.

	Ընդամենը, 1000 մարդ	ըստ ժամերի								Միջին շաբաթական ժամերը. ժամ
		0	1-10	11-20	21-30	31-40	41- 50	51- 60	61>	
Ընդամենը	1175.1	58.6	79.4	180.5	160.5	281.7	255.6	81.9	77.0	35.3
Վարձու աշխատող	653.0	18.6	4.3	23.2	38.1	223.2	225.6	63.7	56.3	44.1
Գործատու	7.5	0.0	0.1	0.3	0.5	1.2	1.2	1.7	2.6	55.7
Ինքնազբաղված	349.8	39.9	39.8	90.9	83.6	40.7	24.2	14.4	16.3	25.1
Այլ	164.9	0.0	35.2	66.2	38.4	16.6	4.6	2.0	1.8	21.7

Աղբյուրը՝ *SSՀԱՀ 2011թ.*

Աղյուսակ 6.11. Հայաստան. Գործազուրկներն ըստ աշխատանք փնտրելու տևողության, սեռի և բնակավայրի տեսակի, 2011թ.

	Ընդամենը. 1000 մարդ	ամիս				տարի			Աշխատանք փնտրելու միջին տևողությունը. ամիս
		< 1	1 - 3	3 - 6	6 - 12	1 - 2	2 - 4	4 >	
Ընդամենը	265.7	7.6	29.4	43.1	45.6	54.3	37.2	48.6	24.4
Տղամարդ	128.1	4.0	15.3	24.4	23.7	24.5	18.7	17.6	27.2
Կին	137.7	3.6	14.1	18.8	21.9	29.8	18.5	31.0	21.4
Քաղաք	232.5	6.2	25.4	35.8	40.4	45.1	33.5	46.0	25.4
Գյուղ	33.3	1.4	4.0	7.3	5.2	9.2	3.7	2.5	17.1

Աղբյուրը՝ *SSՀԱՀ 2011թ.*

Աղյուսակ 6.12. Հայաստան. Գործազուրկների կազմն ըստ աշխատանք փնտրելու տևողության, 2011թ.

	Ընդամենը. 1000 մարդ	ամիս				տարի			Աշխատանք փնտրելու միջին տևողությունը. ամիս
		< 1	1 - 3	3 - 6	6 - 12	1 - 2	2 - 4	4 >	
Ընդամենը	265.7	7.6	29.4	43.1	45.6	54.3	37.2	48.6	24.4
Սովորող, ուսանող (առկա ուսուցմամբ)	6.7	0.7	2.3	1.2	0.9	1.5	0.1	...	7.2
Տնային տնտեսությունը վարող	33.4	0.5	4.2	4.6	5.1	6.1	3.9	8.9	29.0
Կենսաթոշակառու	10.6	0.0	0.4	0.9	1.5	2.4	1.5	3.9	37.6
Աշխատանք չունեցող այլ անձինք	215.0	6.4	22.5	36.5	38.0	44.3	31.7	35.7	23.6

Աղբյուրը՝ *SSՀԱՀ 2011թ.*

Աղյուսակ 6.13. Հայաստան. Գործազուրկներն ըստ աշխատանք փնտրելու տևողության և աշխատանքային փորձի առկայության, 2011թ.

	Ընդամենը, 1000 մարդ	ամիս				տարի			Աշխատանք փնտրելու միջին տևողությունը, ամիս
		< 1	1 - 3	3 - 6	6 - 12	1 - 2	2 - 4	4 >	
Ընդամենը	265.7	7.6	29.4	43.1	45.6	54.3	37.2	48.6	24.4
Ունեցել են աշխատանքային փորձ	162.9	3.1	17.0	23.7	25.6	31.8	23.4	38.3	27.9
Չեն ունեցել աշխատանքային փորձ	102.8	4.5	12.3	19.4	20.0	22.5	13.8	10.3	18.8

Աղբյուրը՝ *SS4UL 2011թ.*

Աղյուսակ 6.14. Հայաստան. Նախկինում զբաղված գործազուրկներն ըստ աշխատանքը դադարեցնելու պատճառների և կրթական մակարդակի, 2011թ.

	Ընդա- մենը. 1000 մարդ	Բարձրա- գույն. հետբու- հական	Միջին մասնա- գիտական	Նախամաս- նագիտա- կան (արհեստա- գործական)	Միջնա- կարգ ընդհանուր	Հիմնա- կան ընդհա- նուր
Ընդամենը	162.9	42.6	46.6	4.4	57.0	12.3
Աշխատատեղերի. աշխատողն երի թվաքանակի կրճատումը. աշխատավայրի լուծարումը. սնանկացում	88.4	23.7	28.5	2.4	27.4	6.4
Ժամանակավոր գործունեության ավարտ	34.4	5.2	6.1	1.0	17.6	4.6
Կենսաթոշակի անցնել	3.7	1.1	1.0	0.2	1.2	0.2
Հիվանդությունը. հաշմանդամություն	5.5	1.2	2.2	0.3	1.6	0.3
Ընտանեկան հանգամանքներ	10.5	4.0	3.0	0.3	3.2	...
Հարկադիր պարապուրդ գործատուի նախաձեռնությամբ	3.5	1.5	0.9	0.0	1.1	...
Աշխատանքից ազատում՝ սեփական ցանկությամբ	12.4	5.0	3.4	0.1	3.6	0.3
Այլ	4.5	0.9	1.5	0.1	1.3	...

Աղբյուրը՝ *SS4UL 2011թ.*

Աղյուսակ 6.15. Հայաստան. Գործազուրկներն ըստ աշխատանք փնտրելու եղանակների և տարիքային խմբերի, 2011թ.

	Ընդամենը, 1000 դեպք	ըստ տարիքային խմբերի					
		15 - 24	25 - 34	35 - 44	45 - 54	55 - 64	65 >
Ընդամենը¹	430.1	115.4	103.7	66.9	77.3	58.6	8.3
Դիմել են զբաղվածության պետական ծառայությանը	20.3	1.5	2.1	4.1	8.2	4.5	...
Դիմել են աշխատանքի տեղավորման մասնավոր գործակալություններին	16.0	4.1	4.5	2.5	2.6	2.0	0.1
Կանոնավոր հետևել են հայտարարություններին	71.8	21.1	17.8	9.7	12.7	8.8	1.6
Կանոնավոր տեղադրել են հայտարարություններ	13.4	4.0	2.9	2.5	2.0	2.0	...
Աշխատանք են փնտրել ծանոթների, բարեկամների օգնությամբ	213.3	56.9	50.0	32.6	38.8	29.9	5.1
Դիմել են անմիջապես գործատուին	64.9	17.8	17.8	10.7	9.2	8.1	1.3
Աշխատանք են փնտրել համացանցի միջոցով	24.5	7.9	6.8	4.2	2.6	2.8	0.2
Այլ	5.9	2.1	1.8	0.6	1.2	0.5	...

Աղբյուրը՝ *SSՀԱՀ 2011թ.*

Աղյուսակ 6.16. Հայաստան. Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության կազմն ըստ տարիքային խմբերի

	Ընդամենը, 1000 մարդ		Սովորող, ուսանող (առկա ուսուցմամբ)		Տնային տնտեսությունը վարող		Կենսաթոշակառու		Աշխատանք չունեցող այլ անձինք	
	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011
Ընդամենը	926.3	845.4	196.9	171.7	224.0	205.4	226.7	222.6	278.7	245.7
15-19	241.2	196.5	157.3	136.1	6.0	6.4	2.6	1.1	75.3	52.8
20-24	138.3	117.6	36.6	34.1	36.6	28.1	1.8	2.4	63.3	53.0
25-29	84.4	74.3	2.7	0.8	48.9	40.6	2.3	3.2	30.5	29.8
30-34	53.3	45.3	0.4	0.7	28.2	24.5	3.1	3.1	21.6	17.1
35-39	37.3	34.2	17.6	15.7	4.8	2.7	15.0	15.8
40-44	29.4	25.5	16.5	12.6	1.6	2.6	11.3	10.3
45-49	44.1	41.2	21.5	19.8	6.9	5.8	15.6	15.6
50-54	51.5	55.0	22.4	23.4	10.4	10.4	18.7	21.3
55-59	47.7	47.5	17.1	17.2	13.8	14.0	16.8	16.3
60-64	48.8	58.6	7.5	12.0	32.5	36.3	8.7	10.3
65 >	150.3	149.7	1.7	5.1	146.9	141	1.9	3.4

Աղբյուրը՝ *SSՀԱՀ 2010-2011թթ.*


¹ Նույն անձը կարող էր նշել աշխատանք փնտրելու մեկից ավելի եղանակներ:

Աղյուսակ 6.17. Հայաստան. Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության կազմն ըստ կրթական մակարդակի

	Ընդամենը, 1000 մարդ		Մովորող, ուսանող (առկա ուսուցմամբ)		Տնային տնտեսությունը վարող		Կենսաթոշա- կառու		Աշխատանք չունեցող այլ անձինք	
	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011
Ընդամենը	926.3	845.4	196.9	171.7	224.0	205.4	226.7	222.6	278.7	245.7
Բարձրագույն. հետբուհական	110.4	120.1	4.8	5.2	37.6	35.8	31.9	41.3	36.2	37.7
Միջին մասնագիտական. թերի բարձրագույն	199.4	180.9	27.4	26.4	63.7	59.5	49.5	49.3	58.8	45.7
Նախամասնագիտական (արհեստագործական)	12.8	9.4	0.3	0.4	5.1	2.9	2.7	2.7	4.6	3.5
Միջնակարգ նդհանուր	428.8	375.2	78.8	56.5	106.1	99.0	88.4	82.3	155.4	137.4
Հիմնական ընդհանուր	143.2	134.9	73.2	75.1	10.3	7.8	37.8	32.5	21.9	19.5
Տարրական, ոչ լրիվ տարրական	31.8	25.0	12.4	8.0	1.3	0.5	16.4	14.6	1.8	1.9

Աղբյուրը՝ ՏՏԳԱՀ 2010-2011թթ.

Գծապատկեր 6.1. Հայաստան. Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության կազմը



Աղբյուրը՝ ՏՏԳԱՀ 2010-2011թթ.

**Աղյուսակ 6.18. Հայաստան. Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության կազմն ըստ
ՀՀ մարզերի և ք. Երևանի**

	Ընդամենը, 1000 մարդ		Սովորող. ուսանող (առկա ուսուցմամբ)		Տնային տնտեսություն- ներ վարող		Կենսաթոշա- կառու		Աշխատանք չունեցող այլ անձինք	
	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011
Ընդամենը	926.3	845.4	196.9	171.7	224.0	205.4	226.7	222.6	278.7	245.7
ք. Երևան	345.9	317.6	77.2	67.4	97.0	85.2	104.2	104.3	67.5	60.8
Արագածոտն	19.5	14.5	6.1	4.1	2.2	1.6	3.2	2.9	8.0	5.9
Արարատ	57.4	59.0	14.5	13.6	16.0	17.9	9.1	10.8	17.8	16.7
Արմավիր	71.3	66.9	15.8	12.5	19.5	21.8	13.4	12.3	22.7	20.3
Գեղարքունիք	53.5	46.7	9.3	9.3	12.5	7.5	12.6	8.1	19.2	21.8
Լոռի	89.4	84.8	16.5	15.0	11.5	12.0	22.4	21.3	39.1	36.5
Կոտայք	113.3	95.2	19.6	16.8	36.9	30.5	20.2	22.1	36.7	25.8
Շիրակ	110.0	99.5	23.2	18.5	14.5	16.2	24.5	23.0	47.7	41.9
Սյունիք	24.1	24.8	5.6	6.3	6.8	6.4	7.4	9.1	4.4	3.0
Վայոց ձոր	14.1	11.2	3.5	2.5	1.7	1.6	3.6	2.8	5.3	4.3
Տավուշ	27.7	25.3	5.8	5.8	5.5	4.6	6.0	6.0	10.4	8.8

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2010-2011թթ.

6.2. Աշխատանքային եկամուտները (վաստակը)

Աշխատանքային գործունեությունից ստացված դրամական և բնաիրային եկամուտների վերաբերյալ ստորև ներկայացվող տեղեկատվությունը հիմնված է SS 15-75 տարեկան զբաղված անձանց պատասխանների վրա՝ հետազոտվող յուրաքանչյուր ամսվան նախորդող վերջին ամսվա կտրվածքով:

Եկամուտների մեջ ներառվել են ինչպես վարձու աշխատողների աշխատավարձը, այնպես էլ ինքնուրույն տնտեսական գործունեություն իրականացնողների աշխատանքային զուտ եկամուտները (բացառությամբ առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամների): Տվյալների մեջ չեն ներառվել նրանք, ովքեր հետազոտությանը նախորդող վերջին ամսում աշխատանքային եկամուտներ չեն ունեցել և (կամ) հրաժարվել են պատասխանել եկամուտների չափի վերաբերյալ հարցերին:

Աղյուսակ 6.19. Հայաստան. Զբաղվածների միջին ամսական զուտ եկամտի չափն ըստ, տնտեսական գործունեության տեսակների, սեռի, գյուղ/քաղաքի, 2010-2011թթ.

Բաժին	Հիմնական գործունեություն									
	Ընդամենը		Տղամարդ		Կին		Քաղաք		Գյուղ	
	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011
Միջին եկամուտը, դրամ	72425	78408	87569	93936	50752	59061	81852	84337	56542	67362
A - B ¹	42508	56554	57953	71585	25263	41769	31793	33917	44077	59697
C - E ²	85483	89948	94658	98158	57450	67708	87563	91751	76078	80135
F ³	92320	97848	92221	98328	99885	75832	94615	96688	84729	100432
G - H ⁴	86710	86828	102790	97748	62518	67810	86686	87738	86863	80969
I ⁵	89151	106584	91815	118887	77659	84650	91850	108178	74239	80171
J - K ⁶	90638	104451	106582	112387	74173	92773	92080	105187	82077	94809
L - N ⁷	73608	75403	98177	102812	58008	60735	75470	77029	68800	70731
O - Q ⁸	74872	74551	88930	88323	60259	61302	76290	76216	64936	56883

¹ Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն, ձկնորսություն, ձկնաբուծություն

² Արդյունաբերություն

³ Շինարարություն

⁴ Առևտուր, ավտոմեքենաների նորոգում, հյուրանոցներ և ռեստորաններ

⁵ Տրանսպորտ և կապ

⁶ Ֆինանսական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում

⁷ Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն, սոցիալական անհատական ծառայությունների մատուցում

⁸ Այլ ծառայություններ

Բաժին	Երկրորդ գործունեություն									
	Ընդամենը		Տղամարդ		Կին		Քաղաք		Գյուղ	
	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011
Միջին եկամուտը, դրամ	37390	46492	50937	57742	22654	32499	34832	42185	38373	47939
A - B ¹	31941	42975	43366	51714	19320	31448	8475	17720	36675	47649
C - E ²	48292	67267	101577	67267	25525	...	34343	...	137590	67267
F ³	170000	95313	140000	95313	200000	...	170000	100000	...	60000
G - H ⁴	112367	64446	118477	66640	30931	46351	112250	78354	113182	58351
I ⁵	85866	124237	85866	124237	100000	150000	5000	16745
J - K ⁶	42984	121586	20000	141294	51841	31400	51841	121586	20000	...
L - N ⁷	55234	41932	72995	47179	42907	41875	55568	43721	50148	31279
O - Q ⁸	73789	59842	100330	100000	21919	21090	30726	59842	149622	...

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2010-2011թթ.

Աղյուսակ 6.20. Հայաստան. Զբաղվածներն ըստ միջին ամսական զուտ եկամտի չափի և տնտեսական գործունեության տեսակների, 2011թ. (հիմնական գործունեություն)

Բաժին	Ընդամենը	ըստ եկամտի չափի							
		< 30000	30000-60000	60001-100000	100001-140000	140001-180000	180001-250000	250001-300000	300000 >
Ընդամենը, 1000 մարդ	913.6	122.5	325.5	283.2	73.9	59.8	31.3	8.1	9.4
A - B ¹	214.5	97.0	65.7	26.2	10.1	4.5	2.7	2.5	5.9
C - E ²	125.5	4.1	38.0	54.0	10.9	11.4	5.1	1.1	0.9
F ³	61.6	1.0	15.8	25.6	8.5	6.9	3.3	0.0	0.5
G - H ⁴	168.8	5.2	62.6	64.1	11.9	15.6	6.4	2.2	0.7
I ⁵	17.0	0.0	4.8	6.1	2.3	1.8	1.7	0.0	0.2
J - K ⁶	40.1	1.0	10.4	13.0	5.7	6.4	2.5	1.1	0.0
L - N ⁷	238.2	11.0	105.7	78.9	22.3	11.3	7.7	0.8	0.6
O - Q ⁸	47.9	3.2	22.5	15.3	2.0	2.0	1.9	0.4	0.5
		ըստ եկամտի չափի							
Միջին եկամուտը, դրամ	78408	14021	45822	83148	120899	157287	213691	287808	438472
A - B ¹	56554	12274	43849	77903	121667	158443	219760	277089	477037
C - E ²	89948	20019	47736	84190	121433	158026	211240	295360	356556
F ³	97848	16852	50079	87062	122247	155437	209368	300000	379582
G - H ⁴	86828	20394	47971	84592	122353	154454	206688	289058	401342
I ⁵	106584	29000	47949	87074	125626	164906	228681	...	320000
J - K ⁶	104451	17565	44281	88158	120703	157006	217422	296647	...
L - N ⁷	75403	22327	45079	81051	118609	159861	213796	289119	396590
O - Q ⁸	74551	18385	43133	80820	120343	158490	223931	300000	358013

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2011թ.

¹ Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն, ձկնորսություն, ձկնաբուծություն

² Արդյունաբերություն

³ Շինարարություն

⁴ Առևտուր, ավտոմեքենաների նորոգում, հյուրանոցներ և ռեստորաններ

⁵ Տրանսպորտ և կապ

⁶ Ֆինանսական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում

⁷ Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն, սոցիալական անհատական ծառայությունների մատուցում

⁸ Այլ ծառայություններ

Աղյուսակ 6.21. Հայաստան. Զբաղվածներն ըստ միջին ամսական զուտ եկամտի չափի և գրաղվածության կարգավիճակի, 2011թ.
(հիմնական գործունեություն)

	Ընդամենը	ըստ եկամտի չափի							
		< 30000	30000-60000	60001-100000	100001-140000	140001-180000	180001-250000	250001-300000	300000 >
Ընդամենը, 1000 մարդ	913.6	122.5	325.5	283.2	73.9	59.8	31.3	8.1	9.4
Վարձու աշխատող	636.9	22.1	243.5	237.5	59.6	46.2	22.4	3.4	2.1
Գործատու	6.9	0.0	0.1	2.0	0.4	0.7	1.9	0.9	0.9
Ինքնագրաղված	269.8	100.4	81.9	43.6	13.9	13.0	6.9	3.8	6.3
ըստ եկամտի չափի									
Միջին եկամուտը, դրամ	78408	14021	45822	83148	120899	157287	213691	287808	438472
Վարձու աշխատող	82500	21133	46206	83283	120616	157690	213750	293396	369517
Գործատու	197824	...	46801	90538	128329	155677	219616	300000	366430
Ինքնագրաղված	65697	12453	44679	82077	121918	155938	211845	279898	471710

Աղբյուրը՝ *SSYULZ 2011թ.*


Աղյուսակ 6.22. Հայաստան. Զբաղվածներն ըստ միջին ամսական զուտ եկամտի չափի և կրթական մակարդակի, 2011թ.
(հիմնական գործունեություն)

	Ընդամենը	ըստ եկամտի չափի							
		< 30000	30000-60000	60001-100000	100001-140000	140001-180000	180001-250000	250001-300000	300000 >
Ընդամենը, 1000 մարդ	913.6	122.5	325.5	283.2	73.9	59.8	31.3	8.1	9.4
Բարձրագույն. հետբուհական	277.4	10.3	78.5	109.3	30.8	24.9	16.6	3.7	3.2
Միջին մասնագիտական. թերի բարձրագույն	230.7	28.4	96.4	65.0	15.8	15.5	7.0	1.7	0.9
Նախամասնագիտական (արհեստագործական)	22.1	3.2	8.5	6.1	1.9	1.2	0.7	0.1	0.3
Միջնակարգ ընդհանուր	326.7	65.3	117.2	90.6	23.3	16.7	6.8	2.4	4.4
Հիմնական ընդհանուր	49.4	12.6	21.6	11.1	2.0	1.5	0.1	0.1	0.4
Տարրական, ոչ լրիվ տարրական	7.3	2.7	3.2	1.0	0.1	0.0	...	0.0	0.2

	ըստ եկամտի չափի								
Միջին եկամուտը. դրամ	78408	14021	45822	83148	120899	157287	213691	287808	438472
Բարձրագույն. հետբուհական	95794	15485	47455	83081	120479	159068	214085	294204	404170
Միջին մասնագիտա- կան. թերի բարձրագույն	73000	14037	45313	82786	121420	157154	208850	282592	442443
Նախամասնագիտա- կան (արհեստա- գործական)	74799	14707	44799	83888	121808	156098	201744	300000	358706
Միջնակարգ ընդհանուր	71704	14024	45422	83451	121147	154706	219216	281243	461934
Հիմնական ընդհանուր	55802	12633	44895	83252	119530	158836	204700	281941	442763
Տարրական, ոչ լրիվ տարրական	52605	13872	44702	81099	119457	150000	...	300000	570000


Աղբյուրը՝ *SSYUL 2011թ.*

Գծապատկեր 6.2. Հայաստան. Զբաղվածների միջին ամսական զուտ եկամտի չափն ըստ կրթական մակարդակի



Աղբյուրը՝ *SSYUL 2010-2011թթ.*

Գծապատկեր 6.3. Հայաստան. Միջին ամսական եկամուտն ըստ զբաղվածության բնույթի, 2011թ.



Աղբյուրը՝ *SSYUL 2011թ*

Աղյուսակ 6.23. Հայաստան. Զբաղվածների միջին ամսական զուտ եկամուտն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի (հիմնական գործունեություն)

	2010		2011		
	դրամ	ընդամենի նկատմամբ. %	դրամ	ընդամենի նկատմամբ. %	2010թ. նկատմամբ. %
Ընդամենը	72425	100	78408	100	108.3
ք. Երևան	91143	125.8	92817	118.4	86.0
Արագածոտն	61023	84.3	67157	85.7	128.5
Արարատ	74098	102.3	75277	96.0	105.8
Արմավիր	71164	98.3	103765*	132.3	110.2
Գեղարքունիք	51208	70.7	73099	93.2	153.1
Լոռի	48699	67.2	57295	73.1	161.0
Կոտայք	65083	89.9	66439	84.7	120.5
Շիրակ	62085	85.7	61458	78.4	126.3
Սյունիք	78862	108.9	76989	98.2	99.4
Վայոց ձոր	42966	59.3	45856	58.5	182.5
Տավուշ	54601	75.4	57710	73.6	143.6

Աղբյուրը՝ *SSCULZ 2010-2011թթ.*

Աղյուսակ 6.24. Միջին ամսական եկամուտն ըստ սեռի և զբաղվածության բնույթի (հիմնական և լրացուցիչ (երկրորդ) գործունեություն)

Բաժին	2010							Ընդամենը եկամուտ, դրամ	Տղա-մարդ	Կին	Կ/Տ, %
	Ֆորմալ, դրամ			Ոչ ֆորմալ, դրամ							
	ընդամենը	տղա-մարդ	կին	ընդամենը	տղա-մարդ	կին					
Միջին եկամուտ	84920	100710	62508	49393	63688	29143	71301	86525	49709	57.5	
A - B ¹	71063	72254	66058	40304	55552	24028	41461	56515	24672	43.7	
C - E ²	88275	95865	61548	61796	81573	39535	85170	94681	56698	59.9	
F ³	102497	102550	100562	83404	83313	159332	92393	92244	103366	112.1	
G - H ⁴	95387	113729	66142	63988	71772	53586	86892	102961	62479	60.7	
I ⁵	93241	97496	77908	63784	64023	30000	89149	91809	77659	84.6	
J - K ⁶	92628	108595	75847	44114	44106	44119	90236	106180	73897	69.6	
L - N ⁷	73669	98316	57954	57302	66444	52726	73441	97935	57875	59.1	
O - Q ⁸	82967	102822	63592	57367	62325	51348	74862	89067	60011	67.4	

* Արմավիրի մարզում միջին եկամուտն առանց ծայրահեղ մեծ արժեքների (outlier), կազմում է 85046 դրամ:

¹ Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն, ձկնորսություն, ձկնաբուծություն

² Արդյունաբերություն

³ Շինարարություն

⁴ Առևտուր, ավտոմեքենաների նորոգում, հյուրանոցներ և ռեստորաններ

⁵ Տրանսպորտ և կապ

⁶ Ֆինանսական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում

⁷ Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն, սոցիալական անհատական ծառայությունների մատուցում

⁸ Այլ ծառայություններ

Բաժին	2011									
	Տորմալ, դրամ			Ոչ ֆորմալ, դրամ			Ընդամենը եկամուտ, դրամ	Տղա- մարդ	Կին	Կ/Տ, %
	ընդա- մենը	տղա- մարդ	կին	ընդա- մենը	տղա- մարդ	կին				
Միջին եկամուտը. դրամ	86293	103196	66227	62909	76792	44103	77686	93118	58460	62.8
A - B ¹	67657	69241	62520	55138	69883	40778	55511	69854	41084	58.8
C - E ²	93399	101565	71056	66853	74753	46460	89914	98094	67708	69.0
F ³	106494	107364	81286	91351	91681	64649	97846	98325	75832	77.1
G - H ⁴	91302	103023	71777	74811	84247	56046	86755	97607	67789	69.5
I ⁵	107050	118920	85435	33587	...	33587	106652	118920	84650	71.2
J - K ⁶	105418	114488	91770	95342	91774	99991	104660	112871	92438	81.9
L - N ⁷	75362	102781	60754	59610	106253	43231	75230	102803	60587	58.9
O - Q ⁸	78285	92964	62966	65514	77018	56297	74338	88493	60721	68.6

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2010-2011թթ.

